ԴՐՕՇԱԿ

ISSN 2579-2954



Հայ Յեղափոխական Դաշնակցության Պաշտոնաթերթ

(**74**-րդ տարի) **Թիվ-3** (1637) *Մարտ 2020*

Բովանդակություն

Գործ՝ Հակոբ Հակոբյանի

«Դրօշակ» ամսաթերթ
Հայ Յեղափոխական Դաշնակցության
պաշտոնաթերթ
Հիմնադիր՝ «ՀՅԴ պատմութեան թանգարան
հիմնադրամ»
Երևան, Միեր Մկրտչյան փ. 12/1
Հեռ. (+374) 10-52-18-90
Էլ. հասցե՝ droshak@arf.am
Կայք՝ hhtps://www.droshak.am
Գլխավոր խմբագիր՝ Արտաշես Շահբազյան
Խմբագրական խորհուրդ

Շապիկի 4-րդ էջի նկարը Հովհաննես Զարդարյանի

1- Առաջնորդող
Վաչէ Բրուտեան *(էջ 1-2)*
Հայ դատի յանձնախումբերու ուղին

2- Հարցազրույց
Պատասխանում է Դավիթ Իշխանյանը *(էջ 3-5)*
Անհրաժեշտ է ներդաշնակ համագործակցություն

3- Հասարակություն
Արտաշես Շահբազյան *(էջ 6-7)*
Համաճարակվածները

4- Տնտեսական
Սուրեն Պարսյան *(էջ 8-10)*
Տնտեսական հեղափոխության միֆերը և իրականությունը

5- Դաշնակցական բեմ
Յողիկ Աշըգեան *(էջ 11-12)*
Մեր պատմափիլիսոփայութեան հրամայականը՝ ընկերային արդարութիւն եւ գաղափարական զարթօնք

Աւօ Գաթրճեան *(էջ 13-16)*
«Դրօշակ»ը Հայ Յեղափոխական Դաշնակցութեան վավերագիր (մաս 2-րդ)

6- Սոցիալական
Լիլիթ Գալստյան *(էջ 17-19)*
Ազգային պետություն. Կանանց ներգրավվածություն

7- Հայրենի եզերք
Վրեժ Նահատակյան *(էջ 20-22)*
Ջավախքի հիմնահարցերը (մաս 3-րդ)

8- Տարածաշրջանային
Վ. Հ. *(էջ 23-25)*
Վերջին զարգացումները Սիրիայում և Էրդողանի քաղաքական քայլերը

Ջաւէն Լիյլոզեան *(էջ 26-30)*
Եգիպտոս ե՞րբ պիտի ճանչնայ Հայոց ցեղասպանութիւնը

9- Աշխարհաքաղաքական
Սեդօ Պոյաճեան *(էջ 31-33)*
Հայաստանի աշխարհաքաղաքական գործօնը եւ ԱՄՆի վարքագծային զարտուղութիւնը

10- Սփյուռք
Մկրտիչ Մկրտիչեան *(էջ 34-35)*
Հայաստան – ՀՅԴ – Սփիւռք (Ժամանակակից շրջան, մաս 3)

11- Պատմության լուսարձակ
Անի Մելքոնյան *(էջ 36-39)*
Ռուս-թուրքական «Եղբայրության և բարեկամության» պայմանագիրը

12- Դեմքեր և դեպքեր
Ազգային վրեժեի արդարահատույցը (էջ 40)

Հայ դատի յանձնախումբերու ուղին

Վաչէ Բրուտեան

Անցեալ ամիս՝ փետրուարին, Երևանի և Արցախի Ստեփանակերտի մէջ կայացաւ Հայ դատի աշխարհատարած յանձնախումբերու խորհրդաժողովը: Այս խորհրդաժողովը այն միջավայրն է, ուր գնահատականը տրուեցաւ անցնող ժամանակաշրջանին կատարուած աշխատանքներուն, և ՀՅԴ վերջին Ընդհ. ժողովին (կայացած 2019ի յունուարին Ստեփանակերտի մէջ) ճշդած ռազմավարութիւնը աչքի առջև ունենալով, կատարուեցան մարտավարական ճշդումներ, յստակացուց օրակարգեր:

Աչքի առջև ունենալով այն հանգամանքը, որ Հայ դատի յանձնախումբերու աշխարհագրական սփռուածութիւնը տարաբնոյթ է (Մ. Նահանգներ, Գանատա, Աւստրալիա, Եւրոպա, Մ. Արևելք, Ռուսիա և այլն), այս փաստը մեզի կու տայ գործելու մարտավարական ճկունութիւն, իւրաքանչիւր երկրի ընձեռած քաղաքական պայմաններու լոյսին տակ: Այսպէս, թէև օրակարգերը կեանքի կոչելու մարտավարութիւնները կը տարբերին երկրէ երկիր, այդուհանդերձ, նոյն այդ օրակարգերը կը մնան անփոփոխ ու թիրախային:

Այդ օրակարգերուն ընդհանրական առանցքը, բնականաբար, Հայաստանն է ու հայութիւնը, մասնաւորապէս՝ Հայաստանի արտաքին շահերուն զօրակցութիւնը, Արցախի Հանրապետութեան միջազգային-իրաւական ճանաչման գործընթացն առաջ մղելը: Արցախի կապակցութեամբ վերջին տարիներուն ընդգծուած աշխատանք տարուեցաւ յատկապէս Եւրոպայի ու Մ. Նահանգներու մէջ: Եւրոպական զանազան երկիրներու քաղաքական դէմքերու, ընտրուած պաշտօնատարներու, լրագրողներու, ակադեմականներու և մտաւորականներու՝ դէպի Արցախ այցեր կազմակերպուեցան: Մ. Նահանգներու մէջ նահանգային մակարդակի վրայ շարունակուեցաւ Արցախի ճանաչման գործընթացը: Ճիշդ է, նահանգները երկրի արտաքին յարաբերութիւններուն մէջ որոշիչ դեր չունին. այդ բնագաւառը կը պատկանի դաշնակցային գործադիր և օրէնսդիր իշխանութիւններուն, բայց և այնպէս, նահանգային մակարդակի վրայ կատարուող աշխատանքներն ունին իրենց քարոզչական արժէքը՝ հանրային կարծիքը հայանպաստ ուղղութեան վրայ պահելու իմաստով:

Արցախի կապակցութեամբ այս ընդհանուր աշխատանքներն ունին ոչ միայն քարոզչական արժէք, այլև համաշխարհային քաղաքական թատերաբեմին վրայ Արցախի իրաւական ճանաչման անհրաժեշտութիւնը ընդգծող ազդակ են:

Աւելին՝ ատրպէյճանական և թրքական հակահայ քայլերուն և քարոզչութեան հարթութեան վրայ, վերոնշեալները կարևոր նախաձեռնողական քայլեր

են, որոնք թէ՛ կը խափանեն թուրք-ատրպէյճանական հակահայ վարքագիծը և թէ՛ մեր թշնամի ճակատը կը մղեն հակազդողի դիրքերուն՝ հայկական կողմին ապահովելով նախաձեռնութեան վարքագծին բերած առաւելութիւնները:

Խորհրդաժողովը ամրապնդեց մեր քաղաքական աշխատանքներու այս ուղղութիւնը և կատարեց մարտավարական ճշգրտումներ:

Գալով Հայոց ցեղասպանութեան ճանաչման ուղղութեամբ կատարուած աշխատանքներուն՝ ոչ միայն ընդգծուեցաւ կարևորութիւնը Մ. Նահանգներու Գոնկրէսի զոյգ պալատներուն կողմէ ճանաչման բանաձևերուն, այլև պատրաստակամութիւն յայտնուեցաւ այդ ճիգերը փոխադրելու երկրի գործադիր իշխանութեան հարթութեան վրայ:

Բնականաբար, տրամաբանական պիտի ըլլայ ցեղասպանութեան թղթածրարը դիտելու հատուցման հասկացութեան մէջ՝ իբրև վերջնական թիրախ: Ի վերջոյ, ճանաչումին տրամաբանականօրէն կը յաջորդէ հատուցումը, առանց որուն, անիմաստ կը դառնայ ճանաչման ամբողջ ճիգը:

Հոս ևս աշխատանքները կ՚ընդգրկեն ոչ միայն քարոզչական աշխարհը, այլև իրաւական, փաստաթղթային ու քաղաքական բաղադրամասերը, որոնց համադրումը նոր ընթացք ու թափ պիտի հաղորդէ մեր ժողովուրդի իրաւունքներու արդար հատուցման գործին:

Այս ծիրէն ներս կարևոր են Սևրի դաշնագրի և Ուիլսընեան իրաւարար վճիռի 100ամեակներուն առիթով ծրագրուած նախաձեռնութիւնները, որոնց ծիրը կ՚անցնի քարոզչականը՝ ընդգծելով այս զոյգ իրադարձութիւններուն քաղաքական

բովանդակութեան լրջութիւնը մեր հայրենիքին ու ժողովուրդին համար: Իսկ այս աշխատանքին առաւելագոյն արդիւնաւէտութեան համար անհրաժեշտ է պետական-պաշտօնական բաղադրիչը: Այս նպատակին կը ծառայէր Հայ դատի յանձնախումբերու ամենաբարձր մակարդակով պատուիրակութեան և ՀՀ արտաքին գործոց նախարարութեան միջև կայացած հանդիպումը Երևանի մէջ: Կը մնանք յուսալից, որ պաշտօնական Երևանը պիտի վերցնէ պատասխանատուութեան իր բաժինը այս զոյգ նախաձեռնութիւններուն ծիրէն ներս:

Թուրքիոյ հակահայ քաղաքականութիւնը, բնականաբար, մաս կը կազմէր այս խորհրդաժողովի օրակարգին: Փաստ է այսօր, որ Թուրքիա և Ատրպէյճան թէ՛ համադրած են իրենց հակահայ պայքարը և թէ՛ սաստկացուցած են զայն, յատկապէս՝ արևմտեան երկիրներու մէջ, առանց զանց առնելու երրորդ աշխարհը ու այդ ծիրէն ներս՝ նաև արաբական աշխարհը:

Այս իրողութիւնը նոր մարտահրաւէր մըն է Հայ դատի աշխարհատարած յանձնախումբերուն համար, որոնք կը գտնուին մարդկային, յարաբերական ու քարոզչական նոր «ռեսուրսներ» ստեղծելու պարտադրանքին դիմաց՝ յատկապէս աչքի առջև ունենալով այն իրականութիւնը, որ մեր թշնամիներն իրենց տրամադրութեան տակ ունին հսկայական միջոցներ՝ թէ՛ նիւթական և թէ՛ քաղաքական-յարաբերական:

Իսկ մեր ուժի աղբիւրը միշտ հանդիսացած է մեր ժողովուրդը, որուն նեցուկը միշտ ալ վայելած են Հայ դատի յանձնախումբերը: Հետևաբար ժողովրդային կապն ամրապնդելու գաղափարը աւելիով կեանքի, գործի վերածելը կը մնայ մեր յանձնախումբերու բնական օրակարգին մէջ: Բոլոր առիթներով կատարուած հանրային լրատուութիւնները, հարցազրոյցներու և ընկերային ցանցերու ճամբով կատարուող բացատրական աշխատանքները կը միտին ամրապնդելու այս կապը՝ միաժամանակ երիտասարդ, մասնագէտ տարրեր ներգրաւելով մեր ընդհանուր քաղաքական աշխատանքներուն մէջ, յատկապէս՝ Մ. Նահանգներու և Եւրոպայի մէջ:

Խրախուսիչ էր երիտասարդ գործիչներու ներկայութիւնը այս խորհրդաժողովին: Անոնք իրենց հրապարակային ելոյթներուն ընթացքին ցուցաբերեցին դաշնակցական հասուն քաղաքական գործիչէ մը ակնկալուող հիմնական յատկանիշները, յատկապէս՝ պետականամէտ մտածողութեան իմաստով: Այնպէս որ, սերնդափոխութեան ուղղութեամբ տարուող ճիգերը սկսած են լուրջ ու խոստումնալից արդիւնքներ տալ: Յառաջիկայ տարիներուն մենք ականատես պիտի դառնանք այս երևոյթի աւելի ցայտուն դրսևորումներուն և նորանոր դէմքեր պիտի տեսնենք մեր քաղաքական պայքարի խրամատներուն մէջ, քիչ մը՝ ամէն տեղ:

Եւ վերջապէս, Մ. Արևելքի մէջ փոթորկող տագնապները չէին կրնար վրիպիլ Հայ դատի յանձնախումբերու այս խորհրդաժողովէն, մանաւանդ անոր համար, որ անցնող տարիներուն քաղաքական-յարաբերական աշխատանք կատարուած էր առհասարակ լուսարձակներէ հեռու, յատկապէս՝ արևմտեան քաղաքական շրջանակներու հետ: Ստեղծուած քաղաքական իրադրութիւններու անսխատեսելի և շատ զգայուն բնոյթը մեզ կը դնէ նոյն աշխատանքը յամառօրէն շարունակելու պարտադրանքին տակ, որպէսզի կարելի ըլլայ Մ. Արևելքի հայութիւնը կարելի եղածին չափ հեռու պահել կորուստներէ ու ցնցումներէ:

Նոյնքան զգայուն խնդիր է Ջաւախքի մէջ բնակուող հայութեան պարագան, ուր Թիֆլիսի իշխանութիւններուն կողմէ Եւրոխորհուրդի ծիրէն ներս ստանձնած պարտաւորութիւնները յարգել տալու աշխատանքները ևս ունին նուրբ և զգայուն ծալքեր: Հետևաբար քարոզչութիւնը միշտ չէ որ կրնայ օգտակար ըլլալ Ջաւախքի հայութեան իրավիճակի բարելաւումին: Սա չի նշանակեր, որ հոն գոյութիւն ունեցող խնդիրները պէտք չէ բարձրաձայնել: Ընդհակառակը՝ հոն տիրող իրավիճակը անհրաժեշտ է բոլոր փաստարկումներով հրապարակայնացնել՝ իբրև ճնշամիջոց Վրաստանի և Եւրոխորհուրդին միջև ստորագրուած համաձայնագրերը կեանքի կոչելու տրամաբանութեամբ:

Քաղաքական աշխատանքներու այս ընդարձակ դաշտին մէջ գործելու ծանր բեռը ստանձնած են մեր Հայ դատի յանձնախումբերը: Կը կրենք ծանր պատասխանատուութիւն մեր երկրին ու ժողովուրդին նկատմամբ: Գործին ծանրութիւնը մեզ կը մղէ մեր ուժերը լարելու նոր, երիտասարդ մասնագէտներ ներգրաւելու հրամայականին: Ո՛չ մեր յաջողութիւններով գինովնալու, ո՛չ ալ ընկրկումներով ետ քաշուելու տրամադրութիւնը ունինք: Կայ քաղաքական գործ, և կայ կամք: Միացէ՛ք մեր ճիգերուն:

Անհրաժեշտ է ներդաշնակ համագործակցություն

Պատասխանում է Դավիթ Իշխանյանը

«Դրոշակ»-ի հարցազրույցը Արցախի Հանրապետության նախագահի թեկնածու, ՀՅԴ ԿԿ ներկայացուցիչ Դավիթ Իշխանյանի հետ

- Հարգելի՛ ընկ. Դավիթ, ԱՀ համապետական ընտրությունների քարոզարշավը մոտենում է եզրագծին, ընդհանուր առմամբ ինչպե՞ս կգնահատեք այն՝ ինչ մթնոլորտում անցավ, քաղաքական ուժերն ու գործիչները ներկայացրի՞ն իրենց ծրագրերը:

- Այս ընտրություններն առաջին անգամ են ընթանում ԱՀ Սահմանադրությամբ սահմանված ընտրակարգով, և ընտրությունների առաձնահատկությունն այն է, որ խորհրդարանական և նախագահական ընտրությունները տեղի են ունենալու միաժամանակ, ասել է թե՝ նույն օրը: Մենք ժամանակին (2017 թ.) դեմ էինք այդ համակարգի հաստատմանը: Այնուհանդերձ, հաշվի առնելով, որ Սահմանադրությունն ընդունվել է մեր ժողովրդի մեծամասնության կողմից, առաջնորդվում ենք հենց այս Սահմանադրությամբ:

Ինչպես և նախատեսում էինք, այս ընտրությունները պետք է ընթանային բավականին սուր մրցակցային, մթնոլորտում: Բայց անցած մեկ ամսվա քարոզչությունը ցույց տվեց, որ այդ մրցակցությունը ոչ թե հիմնականում գաղափարների, այլ իշխանության ղեկին սեփական տեղն ունենալու ձգտումներով է պայմանավորված:

Ընտրությունների նախապատրաստական փուլում՝ անցած մեկ տարվա ընթացքում, գրանցվեցին նոր կուսակցություններ, մենք ականատես եղանք քաղաքական վերադասավորումների, որոշ կուսակցություններ տրոհվեցին կամ միավորվեցին այլ կուսակցությունների հետ:

Այս ընտրություններում կենտրոնացումն ավելի շատ նախագահական ընտրությունների վրա է, և խորհրդարանական ընտրությունները երկրորդական պլան են մղված: Այնուհանդերձ, անցած մեկ ամսվա քարոզարշավը ցույց տվեց, որ ընտրությունների նախապատրաստական գործընթացը ոչ այնքան քաղաքական և գաղափարական հենքի վրա է կառուցված, որքան սոցիալական հիմնախնդիրների երևան հանման, ժողովրդի մեջ իշխանություններից դժգոհության զգացական խորապատկերի և առաջիկայում իշխանության պատասխանատվությունը ստանձնելու հիմնահարցի:

Քարոզարշավն առաջին երեք շաբաթներին առերևույթ բնականոն ընթացք ուներ, և թե՛ նախագահի, թե՛ պատգամավորների թեկնածուները ներկայացնում էին իրենց պատկերացումները ապագա զարգացումների, ներքին ու արտաքին մարտահրավերների վերաբերյալ: Կորոնավիրուսի տարածման վտանգը, սակայն, Արցախում փոխեց քարոզարշավի բնույթը. այն ավելի շատ

անհատական աշխատանքների, սոցիալական մեդիա հարթակ տեղափոխվեց:

- **Դաշնակցությունն ինչպե՞ս իրականացրեց իր քարոզչությունը: Հետևելով Արցախում Դաշնակցության և մասնավորապես Ձեր իրականացրած աշխատանքին՝ քիչ թե շատ տեղյակ ենք, որ բազմաթիվ հանդիպումներ եք ունեցել: Բնականաբար, այդ հանդիպումներում խոսվել է շատ բաների մասին: Կուզենայինք՝ ներկայացնեիք, թե ինչ հիմնական խնդիրների շուրջ է եղել Դաշնակցության ասելիքը: Այլ խոսքով՝ որո՞նք են Դաշնակցության քարոզչության առանցքային հարցերը:**

- Մենք մեր քարոզարշավը կառուցում ենք այն սկզբունքային կետերի վրա, որոնք նախանշել ենք ծրագրային հիմնադրույթներում: Ներկայացրել ենք 9 սկզբունքային կետեր, որոնց շուրջ կառուցում էինք մեր քարոզարշավը: Դրանք են՝

- Արցախյան հիմնախնդրի կարգավորման գործընթացում Արցախի Հանրապետության տարածքային ամբողջականության պահպանումը և վերականգնումը,

- Արցախի անվտանգության ապահովման և իրավական կարգավիճակի հստակեցման նպատակով Հայաստան-Արցախ ռազմավարական դաշինքի իրավապայմանագրային ամրագրումը,

- սոցիալական արդարության, մարդու իրավունքների պաշտպանության, քաղաքացիների իրավահավասարության և օրենքի գերակայության վրա հիմնված ներազգային համերաշխության ապահովումը,

- կոռուպցիայի և հովանավորչության դեմ անզիջում պայքարի միջոցով քաղաքացիների լիակատար հավասարության ապահովումը,

- պետական համակարգի հավասարակշռման, անմիջական ժողովրդավարության ընդլայնման ու ամրապնդման նպատակով Արցախի Հանրապետության նոր սահմանադրության ընդունումը,

- վերաբնակեցման համակարգված, լայնածավալ և հետևողական իրականացումը,

-երիտասարդ քաղաքացիների ինքնադրսևորման հնարավորությունների լիակատար ապահովումը,

- ազգային հարստության՝ բնական պաշարների խելամիտ և օպտիմալ օգտագործման ապահովումը,

- «Ազգ-բանակ» հայեցակարգի հիման վրա պաշտպանական համակարգի կատարելագործումը

- **Ժողովուրդն ինչպե՞ս է ընդունում Դաշնակցության քարոզարշավի ընթացքում արծարծված խնդիրները: Հիշենք, որ թե՛ Արցախում և թե՛ Հայաստանի Հանրապետությունում, անկախ արդյունքներից, կուսակցության համար միշտ կարևորվել է սեփական գաղափարների ու մոտեցումների մատուցումը ժողովրդին՝ սկսած Արցախի հարցի վերջնական լուծման վերաբերյալ կուսակցության մոտեցումից մինչև սոցիալական հարցերը, Արցախի զարգացման հեռանկարները և այլն: Եվ ունե՞ք որոշակի բավարարություն տեղի ունեցած հանդիպումներից ու կատարված քարոզչությունից:**

- Ժողովուրդն ակնկալում է կոնկրետ ու նպատակային մոտեցումներ, և ներկայացվող գաղափարական, սկզբունքային հարցերն այնքան էլ ընկալելի չեն՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ մեր հասարակությունն այնքան էլ քաղաքականացված չէ: Բայց և այնպես, ժողովրդի մեջ մտահոգություն կա Արցախի հիմնահարցի հանգուցալուծման և մեր արտաքին քաղաքականության վերաբերյալ:

Ժողովուրդը Դաշնակցությունից ակնկալում է ավելի մեծ պատասխանատվություն: Քարոզարշավի ընթացքում մենք ժողովրդին փորձում էինք հորդորել ավելի մեծ վստահություն ցուցաբերել Դաշնակցության նկատմամբ: Այդ առումով մենք ժողովրդին բացատրում ենք մեր հնարավորությունները: Իհարկե, Դաշնակցությունը միշտ էլ հավատարիմ է իր սկզբունքներին և, անկախ ստացած վստահության քվեներից, միշտ ավելին է անում: Սա մեր առաքելությունն է, այն սկզբունքներն ու նպատակները, որոնցով Դաշնակցությունը 130 տարի գործել է:

Այս հանգրվանում շատ կարևոր է ընտրողներին բացատրել տարածաշրջանային և աշխարհաքաղաքական զարգացումները և Դաշնակցության դերակատարությունը Արցախի կյանքում: Ներկա իրավիճակը համեմատելի է Արցախյան շարժման առաջին տարիների հետ, երբ Դաշնակցությունը վերադարձավ Արցախ, կազմակերպեց ժողովրդի ընդվզումը, ինքնապաշտպանությունը և դրեց ճիշտ ուղու վրա: Հոգ չէ, թե հետո ինչ տեղի ունեցավ, ինչ տեղ զբաղեցրեց Դաշնակցությունը պետական համակարգում: Կարևորը՝ այդ հիմնաքարը դրվեց:

Մենք ներկայումս այնպիսի հանգրվանում ենք, որ անհրաժեշտ է 1990-ական թվականների ազգային շահերի պաշտպան հանդիսացող ուժերի համախմբում, հանդուրժողականության մթնոլորտի ձևավորում: Այստեղ Դաշնակցությունը լուրջ անելիք ունի, Դաշնակցության առաքելությունը և դերակատարությունը որպես առաջնորդող ուժ այստեղ ակնհայտորեն զգացվում է: Մենք կարող ենք այս ամենը գիտակցելով մեզ վրա պատասխանատվություն վերցնել: Եվ այս առումով ժողովուրդը պետք է մեզ վստահի, որպեսզի հնարավորություն ունենանք ստանձնելու այդ պատասխանատվությունը:

- **Ընտրությունները բոլոր պարագաներում**

կավարտվեն որոշակի արդյունքներով: Անկախ նրանից, թե մասնակիցներից ով ինչ հաջողություններ կգրանցի, Արցախի համար ի՞նչ նշանակություն ունեն ընտրությունները:

- Ինչպես արդեն նշեցի, ընտրությունները տեղի են ունենում բավականին բարդ աշխարհաքաղաքական իրավիճակում: Այս ընտրությունները կանխորոշելու են Ղարաբաղի ապագան, ձևավորվելիք գործադիր և օրենսդիր իշխանությամբ է պայմանավորված լինելու մեր զարգացման հեռանկարն ու մեր ապագան:

Մենք որոշ մտահոգություններ ունենք ներքին դաշտում առկա մթնոլորտի վերաբերյալ. քաղաքական ուժերի միջև մրցակցային պայքարն աստիճանաբար վերածվում է քաղաքական անհանդուրժողականության: Մենք բարձրաձայնում ենք մեր մտահոգություններն ու նախազգուշացնում հնարավոր վտանգների մասին: Մենք նմանօրինակ ժամանակաշրջան ենք ապրել 1990-ական թվականներին և դրա գինը վճարել ենք: Պետք է ոչ վաղ անցյալի պատմությունից դասեր քաղել: Ընտրությունների արդյունքը և հետընտրական գործընթացն ավելի կարևոր են լինելու, քան նախընտրականը: Հենց այս նկատառումներից ելնելով՝ մենք փորձել ու փորձում ենք հավասարակշռված քաղաքականություն վարել:

Անցած տարիներին մենք անմիջական շփման մեջ ենք եղել ժողովրդի հետ: Տեսնում ենք, որ իշխանություն-ժողովուրդ երկխոսությունը լիարժեք չէր: Դաշնակցությունն այստեղ, իր նկարագրին ու իր սկզբունքներին հավատարիմ, անցած 5 տարիներին փորձել է հնարավորինս պահպանել ժողովրդի հետ երկխոսությունը՝ քաջատեղյակ լինելով իշխանությունների նկատմամբ ժողովրդի մեջ առկա անվստահությանը, դժգոհություններին, արմատական փոփոխությունների ակնկալիքներին: Մեզ համար ամենակարևորն ընդհանուր կայունության ապահովումն է, որը թելադրված է մեր արտաքին ու ներքին մարտահրավերներով: Այդ քաղաքական կայունությունը հնարավորություն կընձեռի հեզասահ լուծելու առկա բոլոր խնդիրները:

- Ակնհայտ է, որ, անկախ իր գրանցած արդյունքներից, ՀՅԴ-ն պիտի շարունակի աշխատանքները՝ հանուն Արցախի հարցում մեր ազգային նպատակների իրականացման: Ի՞նչ անելիքներ ունեն Դավիթ Իշխանյանը և Դաշնակցության Արցախի կառույցը մարտի 31-ից հետո:

- **Դաշնակցությունը չի ծնվել այս կամ այն ընտրության համար: Դաշնակցության առաքելությունը մեր ժողովրդին ծառայելն ու առաջնորդելն է: Ընտրություններից հետո էլ Դաշնակցությունը հավատարիմ է մնալու իր սկզբունքներին, շարունակելու է իր որդեգրած քաղաքական գիծը՝ ազգային-ազատագրական պայքարում ունեցած հաջողություններն առավել ամրապնդելու ուղղությամբ: Արցախի ներքին և արտաքին կյանքում վերջին 30 տարիների ընթացքում Դաշնակցությունը շատ կարևոր դերակատարություն է ունեցել:**

Չի կարող Դաշնակցության նախագահի թեկնածուն ունենալ ՀՅԴ սկզբունքներից տարբերվող ծրագիր: Իմ մոտեցումներն ամբողջությամբ զետեղված են Դաշնակցության ընդհանուր ծրագրային հիմնադրույթներում: Ես անձամբ կուսակցության շրջանակներում շարունակելու եմ իմ գործունեությունը՝ փորձելով ընդլայնել Դաշնակցության տեղն ու դերն Արցախի ներքին կյանքում:

- **Քվեարկության նախօրյակին ի՞նչ պատգամ ունեք այս ընտրություններին մասնակից քաղաքական ուժերին և Արցախի ժողովրդին:**

- Ամիսներ առաջ մենք հրապարակավ փորձեցինք քաղաքական ուժերի ընդհանուր համախմբում կազմակերպել և միասնական օրակարգ ձևավորել: Իմ պատգամն ավելի շատ ուղղված է քաղաքական ուժերին և գործիչներին, որովհետև հասարակության և պետականության զարգացումը մեծապես պայմանավորված է նրանցով: Անհրաժեշտ է հասարակության, քաղաքական ուժերի և իշխանության ներդաշնակ համագործակցություն: Քաղաքական ուժերն այդ համագործակցության շարժիչ ուժը պետք է լինեն: Ցավոք սրտի, այս առումով ունենք բաց, և իմ հորդորն է, որ այդ բացը լրացվի: Այս համախմբումը, համագործակցությունը, միասնության կերտումը միայն մեկ կամ երկու քաղաքական ուժի չէ, որ վերապահված է, այլ ընդհանուր քաղաքական դաշտին: Այն բոլոր կուսակցությունների և քաղաքական գործիչների առաքելությունն եմ համարում:

Հարցազրույցը վարեց Տաթևիկ Աղաջանյանը

Համաճարակվածները

Արտաշես Շահբազյան

Ամենահաս համաճարակը բացահայտում է ժամանակակից աշխարհի իրական էությունը: Ամենից առաջ ակնառու է դառնում, թե որքան փոքրացած է աշխարհը և փոխկապակցված: Եթե ամազոնյան անտառների և Ավստրալիա մայրցամաքի հրդեհները բավարար չէին համոզվելու համար, որ մեծ աղետները երկրագնդի որ անկյունն էլ պատուհասեն, ուղղակիորեն առնչվում են մեզ, ապա նորահայտ գրիպը ամերիկյան ֆանտաստիկ ֆիլմի աշխարհակործան հրեշի պես փաստում է մարդկության շաղկապվածությունը ճակատագրով:

Աշխարհակալ թագավարակն ի ցույց դրեց այն իրողությունը, որ զարգացման ու բարեկեցության գագաթները նվաճած 21-րդ դարի մարդկությունը պատրաստ չէ ինչպես ակնհայտ և մասամբ ծանոթ երևույթների գիտական ըմբռնմանը, այնպես էլ նյութատեխնիկական ու պարենային ապահովվածության հարցերին: Կարճ ժամանակում արձանագրվեցին տնտեսական (և ոչ միայն տնտեսական) ճգնաժամի առաջին դրսևորումները, և լուրջ մտավախությունների տեղիք է տալիս այն հանգամանքը, թե իրավիճակի երկարաձգման պայմաններում այս գործընթացներն ինչի կարող են հանգեցնել:

Այս ամենի խորապատկերին հասարակություններին համակել է համընդհանուր տագնապը: Պետությունների հզոր առաջնորդները շփոթի մեջ են հնարավորությունների սահմանափակության և հնարավոր վատթարագույն հեռանկարի պատճառով, ինչը ստիպում է մի կողմ թողնելով քաղաքական նրբանկատությունը փակել սեփական սահմանները և արգելել օտարերկրացիների մուտքը, Եվրոմիության օրինակով վճռել, որ ունեցած դեղորայքն ու առողջապահական միջոցները չպետք է դուրս բերվեն սեփական տարածքից, իսկ երկրների ներսում՝ պարտադրել մարդկանց իրավունքների ու գործողությունների անանախադեպ սահմանափակումներ:

Պետական ու հանրային եսասիրությունը, ստեղծված իրավիճակին արդյունավետորեն դիմակայելու անպատրաստությունը և դաշինքային գործելակերպի՝ անցյալից գրանցած սխալների հետևանքներն անխուսափելիորեն մղում են միասնականության հոգեբանությունից ազգային մեկուսացումների և ինչն էլ իր հերթին կհանգեցնի ազգայնական տրամադրությունների աճի:

Հպանցիկ անդրադառնալով լայնամասշտաբ պատերազմներ հրահրելու հավակնություններին՝ հարց է ծագում՝ աշխարհի հզորագույն բախտախնդիրները պարզորոշ պատկերացնում են արդեն շուրջ քառասուն տարի բորբոքվող հրդեհների մեծ բռնկումների հետևանքները, երբ աշխարհն այսօր այսպիսի շփոթի մեջ է գրիպի վարակի պատճառով, որը հիարկե պատճառել է կորուստներ որոնց թիվը չի կարող չանհանգստացնել, միաժամանակ այն անհամեմատելի է այլ բնույթի աղետների հնարավոր հետևանքների հետ:

Այս օրինակով կարելի՞ է երևակայել, թե ինչ տեղի կունենա, եթե հնարավոր պատերազմների դեպքում զոհվեն հարյուր հազարավոր, միլիոնավոր մարդիկ,

հաշմվի մի քանի անգամ շատ մարդ, քանդվեն երկրներ, կապեր ու տնտեսություններ և այլն: Բայց վերադառնանք հիմնական ասելիքին: Իհարկե, այս ամենի կենտրոնում մարդն է, նրա վախերը ոչ միայն ներկայի, այլև ավելի շատ անորոշ հեռանկարի նկատմամբ: Առերեսվում ես այն իրողության հետ, որ անհատի ինքնուրույնությունը, անհատական ազատությունը և հնարավորությունների ու իրավունքների ներուժն իրականում ունակ չեն պաշտպանելու վերջինիս համընդհանուր փորձությունից, և այդ գիտակցությունն անհատներից բաղկացած հանրույթներին դատապարտում է հիստերիկ շփոթի: Ակնհայտ է դառնում, թե իրականում որքան փխրուն և անպաշտպան է մարդկային այն արարածը, որին տասնամյակներով փորձել են ներշնչել, թե նա իր անհատական ազատությամբ ամենակարող է, կերտողն ու տնօրինողն է սեփական ճակատագրի: Իրականում ընդհանուր գաղափարախոսություններից, իդեալներից, նպատակներից, պարտականություններից ու վարքականոններից ձերբազատելը նրան հեռացրել են ամբողջից՝ նրա նկատմամբ հեշտությամբ բարոյական, հոգեբանական, հասարակական և այլ բնույթի հաշվեհարդարներ տեսնելու, ինչպես և դյուրությամբ կառավարելու համար:

Իբրև թե ազատելով մարդուն գաղափարական ընդհանուր համակարգերի «ամբողջատիրությունից»՝ զրկել են նրան գաղափարի և մտածելակերպի հիմք-ելակետից, երևույթների իրական գնահատման համակարգված դատողությունից՝ նետելով նրան կողմնորոշիչների չգոյության, գիտակցական քաոսի, անսկզբունքայնության, նպատակի բացակայության նեղ <բանտախուցը>: Որքան էլ պարադոքսալ (հակասական) թվա, եթե արժեհամակարգն ու գաղափարները ապահովում են մարդու մտավոր հասունությունն ու այդ հարթակից ազատ թռիչքներ կատարելու հնարավորությունը, նման ելակետային հնարավորությունների բացակայությունը կամ, այսպես ասած, «բեռից ազատ» գիտակցությունը հեշտությամբ ստրկացվում է՝ ենթարկվելով ցանկացած այլ արժեքների ու գաղափարների պարտադրանքին: Այս ճանապարհով մարդը կորցնում է սեփական անհատականությունը և վերածվում է ամբոխի անդեմ մասնիկի: Նա դառնում է դիմակ, «անոնիմուս»՝ իր նման անդեմների բազմության մեջ, դառնում է ենթակա ամբոխային տրամաբանությանը՝

կառավարվող հոտի հոգեբանությամբ: Մարդուն ներշնչվում է, թե ինքն իր Աստվածն է, ազատ՝ հոգով ու մարմնով, և ինքն է սահմանում իր առաքելությունն աշխարհի վրա, իր բարոյական արժեհամակարգը, պատկանելությունը տեսակին և հավաքականությանը, իր պարտականությունները ի սկզբանե սահմանված պարտականություններից հրաժարման պայմաններում: Իրականում վերջինս «դատապարտվում» է անգաղափարայնության գաղափարախոսությանը և «այլընտրանքային» արժեքներին, նա վերածվում է հոտի հլու անդամի, որի համար գերիշխող արժեքներ են սեփական անձի հանապազօրյա սնունդը, բնազդային պահանջները, գովազդվող իրերը, և ազատությունը իր նմանների բազմությանը վերահսկողության տակ պահող հովիվների թելադրանքի ներքո:

Ձիջելով սեփական բարոյականի, արժեհամակարգերի և պարտականությունների սահմանները՝ նման մարդը չի կարող նախանձախնդիր լինել այլ սահմանների պաշտպանության հարցում:

Մարդուն զոմբիացնելու գլխավոր պայմանը նրան պարտականություններից ազատելն է: Ի տարբերություն այն երևակայական էակի, որ մարդկության քարտեզից դուրս ինքն իրեն կարող է ծնել, մնացած բոլորը աշխարհ են գալիս մերկ ուսերին կրելով բազմաթիվ պարտականությունների բեռը: Յուրաքանչյուր անձ առաջին հերթին պարտական է այն մարդկանց, ովքեր իրեն լույս աշխարհ են բերել և ամեն ինչ արել են նրա՝ ոտքի կանգնելու և որպես մարդ կայանալու համար: Նույն չափով և գուցե ավելի շատ նա ժառանգում է պարտականություններ՝ պահպանելու և զարգացնելու այն նյութական ու հոգևոր արժեքները, որոնք ստեղծել, պաշտպանել և իրեն են փոխանցել նախնիները: Պարտական է դառնում հասարակությանը և այդ հասարակության կազմակերպական ղեկավարությանը, որոնք ապահովել են իր կենսագործունեությունը՝ կրթվելու, բուժվելու, աշխատելու, հանգստանալու և մյուս պահանջները: Այլ կերպ կարելի է ասել, որ մարդն աշխարհ է գալիս որպես հասարակական էակ, իր սոցիալական պարտավորություններով: Մարդ առանձնյակների բազմություններին քարոզել պարտականություններից լիակատար ազատություն նշանակում է ոչ միայն զրկել





պաշտպանելու և պաշտպանված լինելու բնական իրավունքից, այլև ստրկացնել վերջինիս՝ դարձնելով ամբոխի զոմբիացված անդեմություն, միաժամանակ ներսից խորտակել հասարակության մաս կազմող անդամների թիկունքներով ստեղծված երկրի պարիսպները, որպես տրոյական ձիերի ներդնել անդեմների զանգվածներին պարիսպներից ներս և ազգ, պատմություն, եկեղեցի, մշակույթ, արժեհամակարգեր քանդելով ստրկացնել նաև դեմք ունեցողներին և նրանց երկրները:

Կարող է թվալ, թե մեր ասելիքը շեղվեց իր նախնական նպատակից, բայց այսօր, երբ համաճարակի պատճառով մարդիկ հայտնվել են խուճապի մեջ, և հատկապես զգալի է մտքի, գործի ու նպատակի միասնությամբ համաշխարհային աղետը հաղթահարելու հրամայականը, զգալի է դառնում, թե որքան անհաղթահարելի կարող են լինել վերահաս փորձությունները այն հասարակությունների համար, որոնք պառակտված են արժեքների ու պարտականությունների «այլընտրանքներով»:

Այո որոշակի ուժերը պառակտում են, որ տիրեն մարդկանց կամքին, ժողովուրդների ժառանգությանը և պետությունների ինքնիշխանությանը: Այդ նույն ուժերը փորձում են ներշնչել, թե տեղի ունեցողը քաղաքակրթության ու գլոբալիզացիայի անխուսափելի հետևանքն է: Իրականում այն, ինչ տեղի է ունենում այսօր, շատ վաղուց և բազմիցս կատարվածի կրկնությունն է, համաշխարհայնացումն իրողություն է դարձել դեռևս հելլենիզմի դարաշրջանում, ժողովուրդների մեծ գաղթի ընթացքում՝ իրականում սկիզբ առնելով վաղնջական ժամանակներից, երբ տարբեր հանրույթների միջև տեղի ունեցան առաջին փոխառնչությունները:

Օրինաչափություն է նաև, որ երբ հասարակարգերը սպառվելով հայտնվում են ճգնաժամի մեջ, այդ ճահճի մեջ են հայտնվում նաև արժեքներն ու արժեհամակարգերը: Օրինակները շատ են՝ սկսած Հին Հռոմից և գուցե ավելի վաղ ժամանակներից: Ակնհայտ է, որ աշխարհն այսօր նույնպիսի ճգնաժամի մեջ է: Պատկերավոր ասած՝ մենք գիտակցում ենք, որ հայտնվել ենք պատի առջև, բայց թե ինչպես հաղթահարել արգելքը, և ինչ է սպասվում պատի մյուս կողմում, առայժմ հայտնի չէ ոչ ոքի: Աշխարհը քաղաքական, իրավական, բարոյական ու արժեհամակարգային քաոսը հաղթահարելու խնդրի առջև է կանգնած, և այդ անհրաժեշտության մասին ևս մեկ անգամ ահազանգեց համաճարակի ցնցումը:

Չինաստանում և այլուր մարդկանց հերոսական ինքնազոհաբերությունները, բարձր կազմակերպվածության դասերը, միասնականության դրսևորումները փաստում են, որ այնուամենայնիվ դրականը բազմապատիկ գերազանցում է վատին, անբարոյականին և հակամարդկայինին:

Մենք՝ որպես քաղաքակրթության վաղորդայնից մեծ երթի մասնակից ժողովուրդ և քրիստոնեական արժեքների ջահակիր, կարիք ունենք սեփական ինքնության ավազանում մաքրվելու, այդ առանցքի շուրջ ամրանալու և վաղվա օրվան ներկայացնելու մեր հավակնությունների հայտը:

Նկարները՝ Հակոբ Հակոբյանի

Տնտեսական հեղափոխության միֆերը և իրականությունը

ՀՅԴ Բյուրոյի տնտեսական հետազոտությունների գրասենյակի պատասխանատու Սուրեն Պարսյան

Հայաստանյան քաղաքական իրականությանը բնորոշ երևույթներից մեկն այն է, որ հանրահավաքների ժամանակ կամ նախընտրական շրջանում բոլոր քաղաքական ուժերը դառնում են ընկերվարներ (սոցիալիստներ) և շռայլորեն խոստումներ են տալիս հանրությանը, ինչը քարոզչական տեսանկյունից տրամաբանական է, քանի որ ընտրությունները նոր սպասելիքներ են առաջացնում, հատկապես՝ աղքատ բնակչության շրջանում: Նշենք, որ, պաշտոնական վիճակագրության համաձայն, 2018 թվականին մեր ազգաբնակչության 23,5 տոկոսն աղքատ էր, ինչը որոշվում է փաստացի սպառման կամ եկամուտների մեծությամբ: Սակայն գործնականում Հայաստանում բազմաչափ աղքատությունն ավելի մեծ է, այսինքն՝ աղքատության մակարդակի վրա ազդում են բազմաթիվ այլ գործոններ, օրինակ՝ կրթական, առողջապահական ծառայությունների որակը, հասանելիությունը և այլն: Բացի այդ, նույն պաշտոնական տվյալների համաձայն, մեր աշխատողների շուրջ 25 տոկոսն աղքատ է: Այո՛, աղքատությունը ծնում է աղքատություն: Աղքատ ընտանիքներում մեծացող երեխաները, չստանալով բավարար և որակյալ սնունդ, կրթություն, առողջապահական ծառայություններ, մեծ հավանականությամբ ապագայում ևս կլինեն աղքատ: Պետությունը պարտավոր է արդյունավետորեն իրականացնել իր եկամուտների վերաբաշխման գործառույթը՝ ապահովելով անվճար, որակյալ և հասանելի կրթություն, առողջապահություն, առողջ շրջակա միջավայր և այլն: Ունևորները պատրաստակամ կլինեն վճարելու ավելի շատ, եթե իրենք և իրենց երեխաները ստանան որակյալ հանրային բարիքներ: Սոցիալական համերաշխությունը սա է, ինչը կապահովի կայունության և համագործակցության մթնոլորտ:

Հարկավոր է արձանագրել, որ ներկայումս ընկերվարության և ձախ պոպուլիզմի ընկալման և տարբերակման խնդիր ունենք: Սոցիալական արդարությունը զուտ բարոյական հասկացություն չէ. դրա հիմքում դրված են սկզբունքներ, առաջնահերթություններ և հաշվարկներ:

2018 թվականի իշխանափոխության ժամանակ ձախ պոպուլիզմն արտահայտվում էր թոշակների, աշխատավարձերի շեշտակի աճի, կոմունալ վճարների իջեցման, տուգանքների վերացման, վարկերի մարման և այլ չհիմնավորված խոստումներով: Սա ժողովրդական շարժումների դեպքում լավ «վառելիք» է, բայց ոչ տնտեսության համար:

Գործող իշխանությունների ստեղծած ամենամեծ միֆն այն է, որ իբր նրանք «իզմերով» չեն շարժվում, սակայն տնտեսական քաղաքականության առանցքային որոշումները կայացնելիս առաջնորդվում են ազատականությամբ (լիբերալիզմով): Այսպես, առանց խոր և մասնագիտական քննարկումների, այս

իշխանությունները որդեգրեցին ՀՀ կենտրոնական բանկի կողմից մշակված և առաջ մղվող համահարթ եկամտային հարկի քաղաքականությունը, ինչի արդյունքում 2020 թվականի հունվարի 1-ից բարձր և ցածր աշխատավարձ ստացողները վճարում են նույն 23 տոկոսի եկամտային հարկը, իսկ խոշոր տնտեսվարողների (կորպորացիաների) շահութահարկը 20-ից իջեցվեց 18 տոկոսի: Այս իշխանությունները սա հանրությանը որպես բարեփոխում են ներկայացնում՝ դիտավորյալ չնշելով, որ հարուստներին զիջված հարկերի բեռը փոխհատուցելու է ողջ հասարակությունը՝ ալկոհոլային խմիչքների, ծխախոտի, դիզելային վառելիքի և բենզինի ակցիզային հարկի դրույքաչափերի բարձրացման հաշվին: Ստացվում է, որ ՀՀ կառավարությունը մի կողմից բարձրացնում է պետական աշխատողների աշխատավարձերը, թոշակները և նվազագույն ամսական աշխատավարձը, մյուս կողմից ավելացնում է հարկերը: Թանկացող ապրանքների համար բոլորը վճարելու են միևնույն չափով: Այսինքն՝ հարկումը եկամտից տեղափոխվեց սպառում, ինչի հետևանքով հարուստներն ավելի կհարստանան, իսկ աղքատներն ավելի կաղքատանան: Սրան զուգահեռ՝ այս իշխանություններն ամբողջ ծավալով ներդրեցին

պարտադիր կուտակային կենսաթոշակային համակարգը (որին դեմ էին նախկինում), ինչը չի տալիս որևէ երաշխիք, որ կենսաթոշակային տարիքին հասնելուն պես կուտակված գումարները կվերադարձվեն:

Իշխանությունների հռչակած տնտեսական հեղափոխությունը սկսվեց և ավարտվեց այդ հայտարարությամբ, քանի որ այս իշխանությունները շարունակում են նախորդ լիբերալ տնտեսական քաղաքականությունն իրենց առավել ծայրահեղ մարտավարությամբ ու մեթոդներով: Հին տնտեսական մոդելով նոր տնտեսություն հնարավոր չէ կառուցել: Բոլոր տնտեսական մոդելների, քաղաքականությունների դեպքում կոռուպցիայի դեմ պայքարն առաջնահերթություն է. սա նվազագույն պայմանն է, որը պետք է պետությունն ապահովի:

Անշուշտ, բարձր պետք է գնահատել կոռուպցիայի դեմ վարվող պայքարը, որի շնորհիվ 2019 թվականին մեր տնտեսությունը գրանցել է տարածաշրջանային և համաշխարհային մակարդակով բարձր՝ 7,6 տոկոս տնտեսական աճ, որն ինչպես նախկինում, այնպես էլ ներկայումս ներառական չէ. սրանից օգտվում են գլխավորապես օլիգարխները, հանքարդյունաբերական ընկերությունները և բարձրաստիճան պաշտոնյաները: Միաժամանակ ունենք հարկային մուտքերի զգալի աճ: Այս ամենը հիմնականում նախկին իշխանություններից մնացած ստվերն է, որի բացահայտման և հարկման արդյունքում է, որ գործող իշխանություններն ունեն տպավորիչ ձեռքբերումներ: Խիստ մտահոգիչ է, որ տնտեսությունը դառնում է առավել կորզող, քանի որ տնտեսական աճի զգալի մասը կազմում է հանքարդյունաբերությունը, հանքանյութի արտահանումն էականորեն ավելացել է՝ կազմելով համախառն արտահանման մոտ 30 տոկոսը: Ըստ էության, սա տնտեսական աճ է հաջորդ սերունդների հաշվին:

Տնտեսության դինամիկայի և ներառական զարգացման համար անհրաժեշտ է ունենալ պետական կառավարման արդյունավետ համակարգ, որն ի վիճակի կլինի մշակելու և կյանքի կոչելու պետական ծրագրերը: Մասնավորապես 2019 թվականի ընթացքում պետությունը ձախողեց պետական բյուջեով հաստատված կապիտալ ծախսերի ծրագրերը (գյուղատնտեսական ենթակառուցվածքների, ճանապարհների, դպրոցների շինարարությունները) շուրջ 61 տոկոսով, ինչի հետևանքով կսահմանափակվի տնտեսական աճը ոչ միայն այս տարի, այլև հաջորդ տարիներին: Կապիտալ ծախսերի ծրագրերի ձախողման գլխավոր պատճառը պետական ինստիտուտների բացակայությունն է կամ թերզարգացածությունները:

Ըստ գործող իշխանությունների՝ պետական կառավարման արդյունավետությունը պետական ծախսերի նվազեցումն է, կոռուպցիայի կրճատումը: Այսինքն, եթե այս կամ այն աշխատանքն անելու համար ավելի քիչ է վճարվում, ուրեմն տվյալ գերատեսչությունը կամ պաշտոնատար անձը լավ է աշխատում: Անհասկանալիորեն անտեսվում է պետական կառավարման իրական արդյունավետությունը: Հանրությունը ընդհանուր առմամբ չի հետաքրքրվում, թե այս կամ այն աշխատանքը կատարելու համար որքան ծախս է կատարում պետությունը: Վերջնարդյունքի մեծությունից և որակից ելնելով է, որ պետք է գնահատել կառավարման արդյունավետությունը և պարգևատրել պաշտոնատար անձանց:

Ցավոք, դարձյալ շարունակվում է «ինչ հնարավոր է մասնավորին փոխանցելու» քաղաքականությունը: «Պետությունը վատ կառավարիչ է» դոգմատիկ ազատական տրամաբանությամբ մասնավորին են փոխանցվում պետության առանձին պարտավորություններ և ոլորտներ: Օրինակ՝ գիշերօթիկ դպրոցների օպիտամալացման արդյունքում փողոցում հայտնվեցին հարյուրավոր երեխաներ, իսկ մրցույթով ընտրված ցերեկային կենտրոնները փաստացի չեն գործում:

Ներդրումային միջավայրի բարելավումն առաջնահերթ նշանակություն ունի բոլոր կառավարությունների համար: Այո՛, կոռուպցիա չկա պետական կառավարման առանձին ոլորտում, սակայն խնդիրներ լուծողներ էլ չկան: Միջին և խոշոր ներդրումային նախագծեր սպասարկող պետական ինստիտուտները դեռևս չեն կայացել: Եթե նախկինում խնդիր էր առաջանում, ապա միջնորդությամբ կամ գումարի դիմաց արագ լուծում գտնելու հնարավորություն կար: Անշուշտ, դատապարտելի է կոռուպցիայի ցանկացած դրսևորում, սակայն ներդրողի տեսանկյունից կարևոր է իր հարցի արագ և արդյունավետ լուծումը, ինչը, ցավոք, չկա: Արդյունքում գործարարները ստիպված են լինում ամիսներ, նույնիսկ տարիներ ծախսել այս կամ այն թույլտվությունը, լիցենզիան հանելու համար՝ ունենալով ժամանակի և դրամական մեծ կորուստներ: Ներդրումային միջավայրի վրա ուղղակի

ազդեցություն ունի քաղաքական գործոնը: Այս իշխանությունների թեթև ձեռքով ներդրումների լինելը կամ չլինելը կապված է քաղաքական գործընթացների հետ, ինչն իր բացասական հետևանքները կթողնի ներդրումային միջավայրի վրա: Եվ պատահական չէր, որ 2019 թվականի ընթացքում Քեմբրիջ անալիտիկիսը Հայաստանը դասեց բարձր քաղաքական ռիսկ ունեցող երկրների շարքին, ինչով էլ իր հերթին բացասական ազդակ փոխանցեց օտարերկրյա ներդրողներին:

Ներդրումային միջավայրի վրա ազդող գործոններից է նաև կրթությունը:Մեր կրթական համակարգը պատրաստու՞մ է արդյոք որակյալ կադրեր, ինչ մասնագիտական հմտություններով են օժտված մեր բարձրաստիճան պաշտոնյաները և այլն: Սրանք նոր հարցադրումներ չեն, և եթե ուզում ենք ունենալ թռիչքաձև և ներառական զարգացում, ապա լուծումները պետք է տալ հիմա: Ի դեպ, բուհերի մասնագիտական կրթության վրա չի կարող ազդեցություն ունենալ հայոց լեզվի և պատմության դասընթացների ոչ պարտադիր լինելը, քանի որ ներկայումս կրթական ծրագրերում առկա են կրկնվող բովանդակությամբ բազմաթիվ դասընթացներ, և չկա որևէ երաշխիք, որ կրճատվող դասընթացները չեն փոխարինվի նույնաբովանդակ և ոչ մի գործնական նշանակություն չունեցող մասնագիտական առարկաներով:

Հայաստանի տնտեսության մրցակցային միջավայրի վրա շարունակում են իրենց բացասական ազդեցությունը թողնել մենաշնորհները: Թեև

քաղաքական մեծամասնության կողմից ձևավորվել է տնտեսական մրցակցության պաշտպանության պետական նոր հանձնաժողով, սակայն վերջինիս գործունեության արդյունավետությունը շոշափելի չէ: Ավելին՝ ՀՅԴ Բյուրոյի տնտեսական հետազոտությունների գրասենյակի ուսումնասիրություններից պարզ է դարձել, որ վերջին 2 տարիների ընթացքում մենաշնորհների դեմ պայքար չի տարվել, որոշ շուկաներում մենաշնորհացումն ավելի է խորացել, իսկ որոշ դեպքերում պարզապես տեղի է ունեցել շուկայի վերաբաշխում նոր իշխանությունների ներկայացուցիչների միջև: Այսպես, 2019 թվականի ընթացքում բենզինի 3 խոշոր ներկրող ընկերությունները տիրապետեցին շուկայի 100 տոկոսին՝ նախկին 96 տոկոսի փոխարեն: Դիզելային վառելիքի շուկայում «Իմ քայլ» դաշինքի պատգամավորության թեկնածու Ռոման Մուրադյանի «Գազօիլ» ընկերությունը 2019 թվականի սեպտեմբերին շահել է ՀՀ պաշտպանության նախարարության՝ դիզելային վառելիքի մրցույթը և մատակարարել է 4779 տոննա վառելիք ավելի թանկ գնով, քան շուկայում առաջարկվում է: Կարագի շուկայի դեպքում նոր ի հայտ եկած ընկերությունների մասին տեղեկատվությունը թաքցվում է: Կարագի և շաքարավազի շուկաներում ՀՀ ԱԺ նախկին պատգամավոր Սամվել Ալեքսանյանի և նրա ընտանիքի անդամների հետ կապ ունեցող ընկերությունները (սուպերմարկետները) մեծածախ գներով մանրածախ վաճառք են իրականացնում, ինչի հետևանքով բազմաթիվ փոքր և միջին խանութներ, կրպակներ փնասներ են կրում, չեն դիմանում մրցակցությանը: Ազգային եկամտի մեծ մասը շարունակվում է կուտակվել օլիգարխների ձեռքում, իսկ մեր գործող իշխանությունները նրանց հարկերը նվազեցնում են:

Մի կողմ թողնելով այս իշխանությունների հանրահավաքային և նախընտրական խոստումները կոմունալ վճարների իջեցման վերաբերյալ՝ զուտ ներդրողի տեսանկյունից, շատ կարևոր է ունենալ գոնե մեկ տարվա կտրվածքով կանխատեսելի՝ բնական գազի և էլեկտրաէներգիայի սակագներ, քանի որ տարեկան բիզնես պլանների հաշվարկման հիմքում պետք է դնել կոնկրետ թիվ, որի հիման վրա էլ կձևավորվեն ինքնարժեքը և շահույթը:

Ամփոփելով վերոգրյալը՝ կարելի է արձանագրել՝ իշխանափոխությունից հետո հանրության շրջանում և բիզնեսում կային դրական սպասումներ, սակայն զուտ «փայ չենք մտնելու, չենք խանգարելու» հայտարարություններով հնարավոր չէ ունենալ ներդրումային միջավայր և ներառական աճ: Հայաստանի տնտեսության զարգացման հիմքում պետք է դրվի սոցիալական արդարության սկզբունքը, որի հիման վրա էլ կձևավորվեն հարկաբյուջետային, դրամավարկային, տնտեսական և հակամենաշնորհային քաղաքականությունները:

Մեր պատմափիլիսոփայութեան հրամայականը՝ ընկերային արդարութիւն եւ գաղափարական զարթօնք

Ցողիկ Աշըգեան

Դաշնակցութեան հիմնադիրներէն Ռոստոմը կը հաստատէ, որ «Դաշնակցութիւնը գործի կուսակցութիւն է»: Հարց տանք. Դաշնակցութեան կատարելիք գործը ի՞նչ հանգամանքներէ ելլելով կ՚որոշուի: Կան յստակ և հիմնական ազդակներ, որոնք կ՚առաջնորդեն Դաշնակցութեան գործը: Այս ազդակներէն են Դաշնակցութեան Ծրագիրը և Ընդհանուր ժողովներու որոշումները: Կուսակցութեան պատմութեան ընթացքին այս ազդակներու անմիջական ներգործութեամբ է, որ 130 տարիներու Դաշնակցութեան աւանդն ու գործունէութիւնը ընդլայնեցան: Տեղին է ընդգծել, որ Դաշնակցութեան կանոնագրութիւնը, կազմակերպական ուղեցոյց ըլլալէ անդին, կ՚ուրուագծէ դաշնակցական մարդու գաղափարական նկարագիրը, որ իր հերթին եզակի ազդեցութիւն ունի գործելառճի և անոր ուժականութեան վրայ՝ ապահովելով նպատակի և միջոցի շաղկապումը:

Դաշնակցութեան գաղափարաբանութեան հիմքը կը հաստատուի Ծրագիրի առաջին իսկ նախադասութեամբ. «Դաշնակցութիւնը իր էութեամբ, աշխարհահայեացքով և աւանդներով ազգային, ընկերվարական, ժողովրդավարական և յեղափոխական կուսակցութիւն է»: Եւ տրամաբանական հիմնաւորումներով կը վերլուծուին այս չորս հիմնասիւները, որով ի յայտ կու գայ Դաշնակցութեան պատմափիլիսոփայութեան հետևեալ դրոյթը. «Մարդ անհատը, ընկերային հաւաքականութիւնները, ժողովուրդները և ազգերը ձգտած են ազատութեան ու հաւասարութեան և պայքարած են անոնց իրականացման համար: Ազատագրութեան բնական ու գիտակից այդ պայքարը կ՚ընթանայ մարդուն և հասարակութեան կեանքի զարգացման զոյգ գործօններու՝ առարկայական և ենթակայական ազդակներու փոխներգործութեամբ»: Փիլիսոփայական նման իրապաշտութեամբ ալ վերոնշեալ գործօններու հաւասարազօր փոխներգործութեամբ է, որ աշխատաւոր մարդկութիւնը պիտի յաղթանակէ բոլոր անարդարութիւնները:

Դաշնակցութեան այս պատմափիլիսոփայութեան տեսական հիմնաւորման փորձը կատարած է 20-րդ դարու տեսաբան փիլիսոփաներէն Երուանդ Ֆրանգեան: Դաշնակցութեան Դ Ընդհանուր ժողովէն սկսեալ՝ այս իրապաշտ փիլիսոփայութիւնը, որ անդրանիկ Ծրագրին մէջ ալ տիրական եղած է ըստ Ֆրանգեանի, յաջորդող բոլոր Ծրագիրներուն մէջ տեղ գտած է:

Իրենց հերթին Դաշնակցութեան Ընդհանուր ժողովները իրապաշտօրէն կը վերլուծեն համաշխարհային և տարբեր շրջանային

իրավիճակներն ու պայմանները՝ կրկին նկատի ունենալով ենթակայական-առարկայական գործօններու ներդաշնակ զուգորդումը: Ա՛յս և ծրագրային այլ գաղափարաբանական հոլովոյթներու զուգորդումով կը մշակուի կուսակցութեան ընդհանուր քաղաքականութիւնը (քառամեակէ քառամեակ): Տրամաբանական ընթացքով կուսակցութեան շրջանային մարմինները իրենց հերթին նմանատիպ իրապաշտական մօտեցումներով, տեղական պայմաններու հաշուառումով իրենց գործունէութիւնը կը ծրագրեն ու կը ծաւալեն: Իրապաշտական այս ընկալումով է նաև, որ առաւել ևս կը հիմնաւորուի Դաշնակցութեան կազմակերպական ապակեդրոնացումը:

Արդարև, կազմակերպական շրջաններու տեղական պայմաններն ու որևէ իրավիճակ կը տարբերին իրարմէ՝ ունենալով իւրայատկութիւններ, նրբութիւններ ու ծալքեր, որոնց առաւելապէս տեղեակ կրնայ ըլլալ ու անոնց կը տիրապետէ տուեալ շրջանի պատասխանատու մարմինը, որ գետնի վրայ կոչուած և լիազօրուած է գնահատականներ տալու ու ըստ այնմ աշխատանքներ ձեռնարկելու:

Եթէ ընթերցողը համոզուած է, որ մէկ կողմէն տնտեսական կացութիւնը և նիւթական պայմանները (առարկայական), իսկ միւս կողմէն մարդոց գիտակցութիւնը, գաղափարները, հոգեկան աշխարհը և խիղճը փոխկապակցուած ազդեցութիւն

ունին հասարակութիւններու և ազգերու ապագայի ձևաւորման մեջ՝ ի նպաստ աշխատաւոր դասակարգի յաղթանակին, ապա, նոյնիսկ հպանցիկ ակնարկ կատարելով Հայաստանի Հանրապետութեան ընկերային և տնտեսական ներկայ իրավիճակին վրայ, յստակ կը դառնայ անոր բեկումնային ընթացքը: Մէկ կողմէ աղքատութեան տոկոսի վտանգալից աճը, տնտեսական, գաղափարական և ռազմավարական խարխափումները վիճակը աւելի կը վատթարացնեն արագընթաց թափով, կ'ամայանայ այն նօսր խաւը, որ միջին կը համարուէր, և դասակարգային գիտակցութեան բացակայութեամբ կը խորանայ հասարակութեան բևեռացումը: Միաժամանակ իշխանութեան կողմէ խօսքի և մամուլի ազատութիւնը, այլակարծութիւնն ու բազմակուսակցականութիւնը կը համարուին «հակառակորդութիւն» պետութեան ու իշխանութեան նկատմամբ, հոգեմտաւոր արժէքները կ'անտեսուին, ազգային և մշակութային ժառանգութիւնը անխնամ կը մնայ՝ ի դէմս ներմուծուած դատարկ նորաձևութիւններու: Իսկ հայ մարդը, որ «քարէն հաց հանողի» համբաւ կը վայելէր, կը դիտուի իբրև «տիւանին» պառկած և պետական նպաստ սպասող՝ աշխատանքի անընդունակ: Ահա կ'ապրինք գաղափարական լճացման և տնտեսական սուր տագնապներու անմիջական եզրին:

Հրամայական պահանջ մը կը ձևակերպուի: Մեր հասարակութեան և ազգի արդար ու հաւասար զարգացումը ապահովելու համար մեր Ծրագրի հիմնադրոյթներու ոգին ու էութիւնը պէտք է սեփականութիւնը դարձնել հայրենի ժողովուրդին,

մանաւանդ՝ անոր մատղաշ սերունդին: Միտքերը յեղափոխելու այս առաջադրանքը կ'ենթադրէ յամառ, հետևողական ու ծրագրուած աշխատանք:

Ընկերային արդարութեան հրամայականին հետ զուգահեռաբար անհրաժեշտ է մեր բոլոր կարողութիւններով և ուժականութեամբ, գաղափարապաշտ մարդու բարձր նուիրուածութեամբ և խոր հաւատքով, հասկնալի պարզութեամբ լսելի դարձնել մեր ձայնը մեր ժողովուրդին՝ անոր սատարելու համար, որ գիտակցի իր ամբողջական իրաւունքներուն, պաշտպան կանգնի անոնց և պայքարի անոնց իրականացման ի խնդիր:

Ահազանգը չափազանց լուրջ է: Ժամանակը հասած է ստանձնելու մեր էական և արժանի դերը պետականաշինութեան սրբազան գործին մէջ: Այսօրուան ուսուցիչն ու մշակը, ընդհանրապէս աշխատաւոր, աշխատող ու աշխատասէր հայ մարդը, եթէ արժանավայել կեանք չունեցան մեր հայրենիքէն ներս, ու՞ր կը մնան ընկերվարական ժողովրդավարութեան մեր նպատակները: Ասկէ կը սկսի մեր մեծագոյն նպատակին հասնելու ճանապարհը: Մեր Ծրագիրը իր պատմափիլիսոփայութեամբ կը զգուշացնէ մեզ և միաժամանակ մարտի դաշտ կը կանչէ՝ մարտնչելու մեր վսեմ և իրատես գաղափարներուն գործնականացման համար:

Ամէն պայքար իր յատուկ «զէնք(եր)ը» ունի: Ինչքան ալ առկայ ըլլայ յարմարաւէտ զէնքը, անոր գործածութեան վարժ ըլլալը էական անհրաժեշտութիւն է: Դաշնակցութեան պատմական ընթացքը ցոյց կու տայ, թէ մեր կուսակցութիւնը ժամանակի պահանջներուն համաձայն գիտցած և կարողացած է օգտագործել ճիշդ զէնքերը նպատակային կերպով: Թող ո՛չ ոք կասկածի Դաշնակցութեան ունեցած այդ հնարաւորութեան, պայքարի միջոցներու մշտանորոգ գոյութեան: ■

«Դրօշակ»ը Հայ Յեղափոխական Դաշնակցութեան վավերագիր (մաս 2-րդ)

Աւօ Գաթրճեան

№ 2 (82) VIII ՏԱՐԻ 28 ՓԵՏՐՎԱՐ 1898

"Droschak"
ORGANE
de la Fédération
Révolut. Arménienne.

ԴՐՕՇԱԿ

Adresse :
Rédaction du "Droschak"
GENÈVE (Suisse)

„ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ" ՕՐԳԱՆ

Առաջին ժամանակաշրջան

«Դրօշակ»ի առաջին համարներէն մէկուն մէջ կը նշուի, որ իր էջերուն մէջ կը պարզաբանուի Դաշնակցութեան ծրագիրը:

Իւրաքանչիւր թիւի մէջ առաւելաբար կան նամակներ և թղթակցութիւններ, գրեթէ բացառաբար «Թիւրքաց Հայաստան»էն՝ Շապին-Գարահիսար, Սասուն, Տրապիզոն, Վան, Կարին, Ակն, Բաղէշ, Սեբաստիա, Երզնկա, Մուշ, Տիգրանակերտ, Ալաշկերտ, ինչպէս նաև Պոլիսէն:

Այդ նամակներն ու թղթակցութիւնները թանկագին վաւերագիրներ են, անգնահատելի ատաղձ՝ հայ յեղափոխական և ազատագրական շարժման պատմութեան համար: Հոն պատմական մեծ նշանակութիւն ունեցող դէպքերը տրուած են ականատես, վկայ և մասնակից անձերու կողմէ:

Թղթակցութիւնները կը ներկայացնեն Երկրի կեանքը՝ թիւերով, վիճակագրական տուեալներով, տեղեկութիւններով, իրողութիւններով, փաստերով, յաճախ՝ առանց մեկնաբանութեան, երբեմն ալ՝ կողմնակի խորհրդածութիւններով:

Նամակներ կան նաև հարևան երկիրներէն՝ այդ երկիրներու հանրային կեանքին և յեղափոխական շարժումներուն մասին: Կան նաև ականատեսի և մասնակցողի վկայութիւններ Պանք Օթոմանի գրաւման, Խանասորի արշաւանքի և այլ հայդուկային կռիւներու մասին:

Պատմական կարևորութեան համար պէտք է ըսել, որ ՀՅԴ արխիւային տարբեր տեսակի թղթածրարները և փաստաթուղթերը տաժանելի մեծ դժուարութիւններով կը հասնէին «Դրօշակ»ի խմբագրութիւն: Մէկ խօսքով՝ պատերազմական լրագրողութիւն կատարուած է:

«Դրօշակ»ին նպատակը սկիզբէն ի վեր եղած է «Ժողովուրդին համար, ժողովուրդին հետ և ժողովուրդով»:

Ա. հատորը կ'ընդգրկէ «Դրօշակ»ի հրատարակութեան առաջին տասնամեակի առաջին կիսուն (1890-1897) լրիւ հաւաքածոն, ընդամէնը՝ 750 մեծադիր էջ: Բ. հատորը կ'ընդգրկէ 1898-1901, Գ. հատորը՝ 1902, 1903, 1904, վերահրատարակութիւն ՀՅԴի

(Պէյրութ, 1984, 629 էջ), և Դ. հատորը՝ 1905, 1906, 1907, նոյնպէս վերահրատարակութիւն ՀՅԴի (Պէյրութ, 1986, 691 էջ):

«Դրօշակ»ի թուղթին չափը (հատորներուն)՝ 29 X 22 սմ, թուղթին որակը՝ դեղինի զարնող, ծաւալը՝ 8 էջ (իւրաքանչիւր թիւ):

Սկսելու համար կը կեդրոնանանք Ա. հատորին վրայ, որուն ներածութեան մէջ պարզաբանուած են Դաշնակցութեան հետապնդած նպատակները և «Դրօշակ»ի կատարելիք դերը:

Այնուհետև Ա. հատորին սկիզբը տրուած է ՀՅ Դաշնակցութեան «Մանիֆեստ»ը՝ գրուած 1890ին, յայտնի չէ՝ ո՞ր ամսուն: Այդ թուականին Դաշնակցութիւնը դեռ «Հայ յեղափոխականների դաշնակցութիւն» էր լոկ:

«Մանիֆեստ»էն ետք հատորին կցուած է «Դրօշակ»ի «Թռուցիկ թերթ» թիւ 2ը՝ 1891 թուականին, կարճ ծանօթագրութեամբ. «ՀՅ Դաշնակցութիւնը հրատարակելով այս թերթը, յայտնում է, որ մօտիկ ապագայում նա կ'ունենայ իր օրգանը՝ «Դրօշակ» անունով, ուր, ի միջի այլոց, կը պարզաբանուի Դաշնակցութեան ծրագիրը»: Պատմութեան համար արձանագրենք միայն, որ «Դրօշակ»ի «Թռուցիկ թերթ» թիւ 1ը կորսուած է դժբախտաբար և այդ պատճառով ալ «Դրօշակ»ի Ա. հատորին մէջ տեղ չէ գտած:

Վերոնշեալ հատորին մէջ տեղ գտած է ««Դրօշակ»ի թռուցիկ թերթ» մը, որ հրատարակուած

է 15 նոյեմբեր 1894ին Վիեննայի Դաշնակցութեան ազատ տպարանէն, խորագիրը՝ «Հինգ հազար նահատակներ», որ կը խօսի Սասունի կոտորածին մասին, վերջաւորութեան «Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆ» ստորագրութիւնը կայ:

Արդարև, «մօտիկ ապագային»՝ 1891 մայիսին, սկսաւ հրատարակուել «Դրօշակ»ը՝ իբրև ««ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ» օրգան»:

Թերթին բոլոր յօդուածները և թղթակցութիւնները, նամակները, ներքին և արտաքին տեսութիւնները, տեղեկագիրները, վերջապէս, ինչ որ գրուած է հոն, հասկնալի պատճառներով անստորագիր են: Հետագային, սակայն, չենք գիտեր՝ ո՞վ և ե՞րբ կարգ մը յօդուածներու և թղթակցութիւններու տակ աւելցուցած է գրողին անունը: Եւ շնորհիւ այս բարեդէպ «միջամտութեան»՝ այսօր գիտենք այլևս, թէ խնդրոյ առարկայ յօդուածները գրուած են Քրիստափորի, Ռոստոմի, Զաւարեանի, Յոնանի (Յովսան Դաւթեան), Խաժակի, Իւսուֆեանի և այլոց կողմէ: Նամակները և թղթակցութիւնները գրած են՝ Պետո, Մեխակ, Դժոխք, Մուրատ, Թաթուլ, Ազրայէլ, Ս. Շխեան, Ղարա Մելիք, Օր. Շահնազարեան-տիկ. Եղ. Զօրեան, Ս. Մինասեան, Մ. Յովհաննիսեան, Լ. Սարգսեան, Սմբատ, Հրաչ, Ան. Քալանթար, Վարդ և բազմաթիւ ուրիշներ:

Շնորհիւ վերոնշեալ նամակներուն և թղթակցութիւններուն՝ հոն կը գտնենք լրիւ տեղեկութիւններ Հայաստանի՝ այդ օրերու կացութեան և այն բոլոր հարցերուն մասին, որոնք 1890ական թուականներուն և անկէ ետք կը ներկայանային հայ ժողովուրդին և անոր արժանաւոր ղեկավարութեան:

Քրիստափոր Միքայելյանը, Սիմոն Զավարյանը և այլ մտավորական ընկերներ <Դրօշակի> ժամանակ խմբագրատան բակում

Խմբագիրներ եղած են՝ Քրիստափոր Միքայէլեան, Սիմոն Զաւարեան, Ռոստոմ (Ստեփան Զօրեան), Յոնան Դաւթեան, Միքայէլ Վարանդեան: Իսկ խմբագրական, վարչական մարմիններու անդամներ և աշխատակիցներ եղած են՝ Սիմոն Շխեան, Գարեգին Խաժակ, Արշակ Վռամեան, Էտկար Ակնունի, Աւետիս Ահարոնեան, Սիամանթо, Սարգիս Մինասեան, Տ. Յովհաննէսեան, Արմէն Գարո, Հրաչ, Անտոն Գոշ (Անտոն Պոյաճեան, Դիւանապետ) և ուրիշներ:

«Դրօշակ»ի թիւերուն բովանդակութեան բաժիններն են՝«Արտաքին տեսութիւն», «Ներքին տեսութիւն», «Տեղեկագիր», «Կոչ», «Տեղեկութիւններ», «Թռուցիկ թերթ», «Ազդ», «Թուրքիոյ շուրջը», «Յայտարարութիւն» և այլն:

Հրատարակութեան վայրեր եղած են.

1. Թիֆլիս (Վրաստան)՝ 1891-1892,
2. Քոնսթանցա (Ռումանիա)՝ 1892-1893,
3. Ժընև (Զուիցերիա)՝ 1893-1914:

Ժընևի մէջ «Դրօշակ»ի շէնքը գտնուած է 69 Chemin de Roseraie, երկյարկանի, ութսենեակնոց տուն մը՝ գնուած 1898ին. գինը՝ 22.000 ֆրանք:

Արխիւային իմաստով անհրաժեշտ է կատարել կարևոր նկատողութիւն մը, որ պաշտօնաթերթի անունին տակ գրուած մակագրութիւնը՝ ««Հայ Յեղափոխական. Դաշնակցութեան» օրգան», շարունակուած է մինչև 1897 յունուար 20: 1897 փետրուար 8էն սկսեալ՝ փոխուած է այս բացատրութիւնը և դարձած ««Հայ Յեղափոխական Դաշնակցութեան» օրգան»: Հետագային շարունակուած է այս ձևը, իսկ վերջին երեք ժամանակաշրջաններուն ալ՝ «ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ», «ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ», «ՀՅԴ Պաշտօնաթերթ», այսինքն՝ «օրգան»ը փոխարինուած է «պաշտօնաթերթ»ով:

Այստեղ տեղին է նշել, որ այս ժամանակաշրջանին «Դրօշակ»ի շուրջ համախմբուած գործիչները «Դրօշակ»ի անունով կոչուած էին դրօշակականներ: Դրօշակականները կապ հաստատած են եւրոպական երկիրներու քաղաքական ու հասարակական շրջանակներու հետ՝ յոյս ունենալով եւրոպական իշխանութիւններու միջամտութեամբ լուծելու Հայկական հարցը:

Երկրորդ ժամանակաշրջան

«Դրօշակ»ը իր արդիւնաւէտ գործունէութիւնը ծաւալած է Հայոց ցեղասպանութենէն և Հայաստանի խորհրդայնացումէն ետք նաև՝ իր առջև խնդիր դնելով տարածելու ՀՅ Դաշնակցութեան ազատատենչ ու արդարամիտ գաղափարները, ինչպէս նաև կազմակերպութեան պարտքը կատարելու մեր ժողովուրդի հանդէպ, բոլոր գաղթօճախներու մէջ:

1925ին Սիմոն Վրացեանի և Արշակ Ջամալեանի խմբագրութեամբ (խմբ.- վարչական

պատասխանատուն եղած է Աւետիք Իսահակեան) «Դրօշակ»ի վերահրատարակման առիթով հաստատագրուած է, որ «Դրօշակ»ը՝ իբրև ՀՅ Դաշնակցութեան պաշտօնական օրգանը, բնականաբար արտայայտիչը պէտք է ըլլայ այն միտքերուն և գործերուն, որոնք կը բնորոշեն ՀՅԴ Ծրագիրը, կազմակերպական կանոնները, ռազմավարութիւնը և ընթացիկ քաղաքականութիւնը: Քաղաքական, ազգային, հասարակական և մշակութային կեանքի բոլոր երևոյթները ինչպէս Հայաստանի մէջ, նոյնպէս և արտասահմանի մէջ պէտք է լուսաբանուին անոր էջերուն մէջ՝ համաձայն ՀՅԴ սկզբունքներուն և որոշումներուն:

«Դրօշակ»ի թուղթի չափը՝ 32 X 25 սմ, թուղթին որակը՝ դեղինի զարնող, ծաւալը՝ 32 էջ (իւրաքանչիւր թիւ): Պատկերազարդուած՝ սև ճերմակ լուսանկարներով:

Այս ժամանակաշրջանին մէջն է, որ առաջին անգամ կը սկսի յիշատակուիլ և տօնուիլ Դաշնակցութեան Օրը:

Դաշնակցութեան Օրուան յիշատակման առիթով կ'արժէ յիշատակել «Դրօշակ»ի 1926ի թիւ 8-9ի (օգոստոս-հոկտեմբեր) «Արթուն և ամուր» խորագրուած յօդուածը, որուն մեջ գրուած է. «Դաշնակցութեան «Օր»ը պիտի դառնայ նախատօնակը հաւատամքի մը, որ ամէն բանէ առաջ ինքն իր ուժին վստահելու, իր ճակատագիրը վարելու կորով ներշնչեց ստրկացած բազմութեան և ազգային գիտակցութեան առաջնորդեց բանաւոր հօտը»:

Յօդուածը կ'աւարտի խորագրի երկու բառերը ընդգծելով. «Արթուն՝ ինչպէս սահմանին վրայ կեցած պահակը, ամուր՝ ինչպէս Արարատը, մենք մեր ճամբան պիտի երթանք այն գիտակցութեամբ, թէ Դաշնակցութեան Օրերը տօնի համար չեն, այլ քայլերգեր՝ «բախտաւոր օրերու» համար»:

«Դրօշակ»ի վերահրատարակման երկրորդ ժամանակաշրջանը տևած է 8 տարի (1925-1933): Այս ժամանակաշրջանին կը զուգադիպի ՀՅ Դաշնակցութեան քառասնամեակը. այս առիթով ալ «Դրօշակ» կը հրատարակէ բացառիկ թիւ մը: Այս բացառիկ թիւին մէջ կը հանդիպինք նախ ՀՅԴ Բիւրոյի պատգամին՝ ուղղուած «ՀՅԴ մարմիններին և ընկերներին»:

ՀՅԴ Բիւրոյի խօսքէն անմիջապէս ետք տեղադրուած է «Դրօշակ»ի խմբագրականը՝ ««Դրօշակ»ն իր դիրքի վրայ» վերնագրով, որ կը սկսի հետևեալ տողերով. «ՀՅ Դաշնակցութեան քառասնամեակի առթիւ իր խօսքն ունի ասելու նաև «Դրօշակ»ը:

«Դրօշակ»ը, որ Դաշնակցութեան սերմանն է հանդիսանում նրա հիմնադրութեան առաջին տարիներից սկսած:

«Դրօշակ»ը, որի մէջ ամփոփուած են Դաշնակցութեան դիւցազնապատումի ամենասրտագրաւ էջերը:

«Դրօշակ»ը, վերջապէս, որի աշխատակիցներն են եղել շատերը այն անսման հերոսներից, որոնք Դաշնակցութեան փառքն են կազմում»:

Խմբագրականը կը շարունակուի Դաշնակցութեան գաղափարախօսութեան մասին կարգ մը յիշատակումներով, կը նշուին դիւցազնական դէպքեր և դէմքեր, ինչպէս նաև Դաշնակցութեան մղած պայքարը՝ «ԿԵՆԴԱՆԻ ԳՈՐԾՈՎ», և այս գործը «Դրօշակ»ը դիւրացուցած է իր յօդուածներով և միշտ ջանացած է մերկացնել հայ ժողովուրդի գոյութեան և ազատութեան դէմ նիւթուած դաւերը՝ հիմնաւորելով անոնց դէմ յեղափոխական պայքար մղելու անհրաժեշտութիւնը, ուսումնասիրելով նաև այս պայքարին պայմանները և այլն: Կը շեշտուին նաև վերոնշեալ ՍՈՒՐԲ ԳՈՐԾԸ միշտ յառաջ տանելու «Դրօշակ»ի պարտականութիւնը և այլ հիմնական կէտեր:

Խմբագրականը կ'աւարտի խիստ կարևոր հատուածով. («Դրօշակ»ը սիրով ստանձնում է այս պարտականութիւնները՝ վստահ, որ մեր ձեռնհաս մտաւորականութիւնը, դաշնակցականի պատրաստակամութեամբ, իր եռանդուն աշխատակցութիւնը կը բերէ նրանց իրականացման համար):

«Դաշնակցութիւնը կոչ է անում, որ կուսակցական բոլոր մարմիններն ու ընկերները պատրաստ կենան իրենց դիրքերում:

Դաշնակցութիւնը պէտք է պատրաստ գտնի կուսակցութեան ղեկավար միտքը «Դրօշակ»ի դիրքերում»:

Խմբագրականը ստորագրուած է՝ «ԴՐՕՇԱԿ»:

«Դրօշակ»ի երկրորդ ժամանակաշրջանի յօդուածագրութեան ընդգրկած նիւթեր եղած են Դաշնակցութեան Օրուան, Խանասորի արշաւանքի, Պանք Օթոմանի, Մայիս 28ի, Ապրիլ 24ի, Սփիւռքի, Հայ դատի, ազգային կեանքի զանազան երեսներն ու երևոյթները վերլուծող կարևոր ու հետաքրքրական ուսումնասիրութիւններ: Այս ժամանակաշրջանին զգալի է «Դրօշակ»ի ընդդիմադիր ըլլալը խորհրդային կարգերուն հանդէպ:

Բովանդակութեան բաժիններն են՝ «Խմբագրական», «Մեր զոհերը», «Թուրքիոյ շուրջ», «Մտածումներ ՀՅ Դաշնակցութեան մասին», «Թղթակցութիւններ», «Կուսակցական կեանք», «Հայաստանում», «Ինտերնասիոնալ» և այլն: Իսկ յօդուածագիրները (մէկ մասը՝ յետմահու)՝ Սիմոն Վրացեան (Ս. Վ.Ր.), Նիկոլ Աղբալեան (Ն. Հանգոյց), Արշակ Ջամալեան, Ռուբէն, Շաւարշ Միսաքեան, Վազգէն Շուշանեան, Գարեգին Խաժակ, Կարօ Սասունի, Վահան Նաւասարդեան, Ա. Արիսեան, Արշալոյս Աստուածատրեան, Հրանտ-Սամուէլ, Ս. Մասուրեան, Ռ. Սևեան, Իրազեկ (Յակոբ Տէր-Յակոբեան), Աշոտ Արծրունի, Յովսան Դաւթեան, Ն. Բաղալեան, Ասատուր, Ջանգի, Օնսիկ Մխիթարեան, Գառնիկ Գիւզալեան, Գ. Սազճեան և ուրիշներ:

Երրորդ ժամանակաշրջան

«Դրօշակ»ի երրորդ շրջանը «Ազդակ Շաբաթօրեակ-Դրօշակ»ի ժամանակաշրջանն է: «Ազդակ շաբաթօրեակ» անուանումը օրին կատարուած է լիբանանեան միջավայրին մէջ լոկ հրատարակչական արտօնագրի նկատումներով: Խորքին մէջ, և ըստ էութեան, ՀՅԴ պաշտօնաթերթ «Դրօշակ»ն էր իր գաղափարական լիցքով, շաղախով, բովանդակութեամբ և ուղղուածութեամբ:

Լիբանանեան պայմաններու մէջ «Դրօշակ»ը վերսկսաւ 1969ին՝ վարիչ- խմբագրութեամբ Բաբգէն Փափազեանի և խմբագրութեամբ Սարգիս Ջէյթլեանի, որ այդ օրերուն Լիբանանի Կեդրոնական կոմիտէի ներկայացուցիչն էր: Այս կարգավիճակով «Դրօշակ»ը հրատարակուած է մինչև 1985 թուական, այնուհետև՝ 1986 մայիսէն ետք, Յունաստանի մէջ լոյս ընծայուած է «Դրօշակ» աւանդական անունով:

ՀՅԴ 21րդ Ընդհանուր ժողովէն ետք վարիչ-խմբագիր նշանակուած է Սարգիս Ջէյթլեան՝ մինչև իր անարգ առևանգումը 1985ին: Փոխխմբագիրներն են՝ Նազարէթ Պէրպէրեան և Վազգէն Էթիմեզեան (խմբ.՝ նաև Կարօ Յովհաննէսեան):

«ԱզդակՇաբաթօրեակ»ի թուղթին չափը 29 X 22 սմ է, իսկ թուղթին որակը պարզ է, ճերմակ, ծաւալը՝ մինչև 24 էջ:

«Շաբաթօրեակ»ի վերահրատարակութեան առիթով հոն կը կարդանք. «Օրաթերթերը հարկադրաբար կը խմբագրուին օրը օրին և կը ստանան առօրեայ կեանքի հնքն ու կշռոյթը: Կը կրեն նաև տեղական բնոյթ՝ գոհացնելու համար տեղւոյն հասարակական նեղ պահանջները: Այս շաբաթաթերթ օրգանը լոյս կը տեսնէ՝ դուրս գալու համար առօրեայ հնքոտ կեանքի ճնշումներէն, փնտռելու աշխարհը ցնցող դէպքերուն և իրադարձութեանց մէջ հետքերը՝ մնայուն և տևական արժէքներուն»:

Այնուհետև սկզբունքային հարցերը դիտարկելու ձգտումը հանդէս կու գայ «Ազդակ-Շաբաթօրեակ»ի մէջ:

Հոն անգամ մը ևս կը շեշտուին, որ Դաշնակցութեան գաղափարախօսութիւնը և հաւատամքը ոչ մէկ ատեն տոկմաթիք՝ քարացած վարդապետութիւն եղած են: Շնորհիւ դաշնակցական կարգ մը մտաւորական յօդուածագիրներու և յատկապէս խմբագիրներ Բաբգէն Փափազեանի և Սարգիս Ջէյթլեանի գաղափարական լայնախոհութեան, պաշտօնաթերթին մէջ կը շեշտուի համաշխարհային, ընկերային, տնտեսական, քաղաքական ու մշակութային զարգացումներուն հետ քայլ պահելու, անոնց բացուած մնալու լայնախոհութիւնը:

«Ազդակ Շաբաթօրեակ-Դրօշակ»ի հիմնական գլուխները կը բաղկանան հետևեալ բաժիններէ՝ «Խմբագրական», «Օրուան դէպքերուն առընթեր», «Հրապարակագրական էջեր», «Ազգային այժմէական հարցեր», «Գաղափարա-տեսաբանական հարցեր», «Կազմակերպականհարցեր», «Արձագանգներ», «Մեր մամուլի լուսարձակին տակ», «Օտար գրականութեան լուսարձակին տակ», «Գրականութեան աշխարհէն», «Պատմաբանասիրական հարցեր», «Հայրենիք-սփիւռք յարաբերութիւններ», «Խորհրդային հարցեր», «Ընկերա-մշակութային հարցեր», «Ընկերային հարցեր», «Ընկերային քաղաքականութիւն», «Այժմէական հարցեր», «Հայկական այլախոհութիւն», «Ազգային ազատագրական շարժումներ», «Նիւթեր հայ յեղափոխական պատմութեան», «Անդրադարձում՝ յեղափոխական դրուագներու», «Անձինք նուիրեալք», «Միջազգային քաղաքական կեանք», «Այլախոհական շարժումներ», «Օրուան մտածումը» և այլն:

Թերթին մնայուն յօդուածագիրներէն եղած են՝ Էդիկ Յովհաննիսեան, Սարգիս Ջէյթլեան (Ս. Կ. և Ս. Կալեան), Մուշեղ Իշխան, Բաբգէն Փափազեան, Լևոն Մկրտչեան, Հրաչ Տասնապետեան, Յարութիւն Պէրպէրեան, Պօղոս Մնապեան, Կարօ Յովհաննէսեան (Կ. Յ.), Վաչէ Բրուտեան (Վ. Բ.), Վազգէն Էթիեմեզեան (Վ. Է., Վարազդատ, Ն. Դիմաքսեան), Ալեքսան Մնակեան, Գրիգոր Աչըգեան, Սարգիս Կիրակոսեան (Ս. Կիրակ), Յ. Քիւրքճեան (Յարութիւն), Անտրէ Ամուրեան, Կարօ Արմէնեան, Պարոյր, Նազարէթ Պէրպէրեան (Խաժակ), Յակոբ Պալեան և ուրիշներ:

«Ազդակ շաբաթօրեակ-Դրօշակ»ի ժամանակաշրջանը, գաղափարաբանութեան և գաղափարախօսական նիւթերէ զատ, կ'ընդգծուի ա՛լ աւելի, որպէս ընդդիմադիր մամուլ խորհրդային կարգերու ընդհանրապէս և Խորհրդային Հայաստանի իշխանութիւններու նկատմամբ յատկապէս: Թէև կը շարունակուի «Դրօշակ»ի անցեալ ժամանակաշրջանի ուղեգիծը, բայց հոս ալ աւելի սուր գրիչներ ընթացք կ'առնեն՝ զսպելու խորհրդային կեդրոնացեալ կարգերու կողմէ յոխորտանքներն ու խեղաթիւրուած ստայօդ տեղեկանքները Դաշնակցութեան և դաշնակցականներու հասցէին: ■



«ԱՐԾԻՒ» տպարան,
Հ.Յ.Դաշնակցութեան առաջին տպարանը

Ազգային պետություն. Կանանց ներգրավվածություն

Լիլիթ Գալստյան

Հայաստանում հաստատված է կանանց նվիրված երկու պաշտոնական տոն: Այս երկու տոների միջև ընկած ժամանակահատվածը (մարտի 8-ից մինչև ապրիլի 7-ը) թեև պաշտոնապես ամրագրված չէ, սակայն ժողովուրդն անվանում է կանանց միամսյակ: Իրականում աշխարհում կանանց տոնի սահմանումը պայմանավորված է եղել հասարակության կեսից ավելին կազմող հատվածի իրավունքների պաշտպանության հետ: Որքանով են մեզանում այդ իրավունքները ամրագրված օրենսդրորեն, մասնավորապես պետական կառույցներում ներգրավվածության առումով: Այդ մասին է ներկայացվող հոդվածը:

Գործ՝ Մինաս Ավետիսյանի

Ժամանակակից պետությունների մրցունակության բաղադրիչներից մեկն էլ մասնակցային պետության ցուցիչն է, իսկ ավելի կոնկրետ՝ այն չափելի իրողությունը, թե ինչպես են օգտագործվում մարդկային ռեսուրսները, հասարակության այս կամ այն հատվածն ինչպես է մասնակցում ազգային պետականության կառուցման քաղաքական գործընթացներին:

Դեռ անտիկ ժողովրդավարության ժամանակներից էր գիտակցվում, որ մարդկային կապիտալի արդյունավետ օգտագործումը բարձրացնում է հանրային համերաշխության, արդյունավետ կառավարման, ինչպես նաև իշխանության բարոյական լեգիտիմության մակարդակը:

Նորանկախ այն պետություններում, որոնք բախվում են անարդյունավետ կառավարման կամ հանրային վստահության «դեֆիցիտի» հետ, անխուսափելիորեն ցածր է քաղաքական գործընթացներում կանանց մասնակցությունը:

Ինչպես կառուցել ներդաշնակ հարաբերություններ, որտեղ պաշտպանված է պետության շահը, և նպաստավոր պայմաններ են ստեղծված հասարակության յուրաքանչյուր անդամի կամ հատվածի իրավունքների ապահովման և լիարժեք իրացման համար: Այս հարցադրումը և սկզբունքը կենսական է բոլոր ազգային պետությունների համար:

Ժողովրդավարությունը պետության և հասարակության միջև փոխհարաբերությունների չափելի համակարգ է, իսկ ժողովրդավարական պետության կարևորագույն սկզբունքներից մեկը երկու սեռերի շահերի հավասարակշռված հաշվառումն է:

Եթե ընդամենը մի քանի տասնամյակ առաջ կանանց ընտրության կամ ընտրվելու իրավունքը համարվում էր մեծ ձեռքբերում, ապա մեր ժամանակներում այլ են ներհասարակական փոխհարաբերությունների բնույթն ու

առաքելությունը:

Հայաստանն այս առումով բացառություն չէ. թեև ՀՀ Սահմանադրությունը երաշխավորում է հավասարությունը և արգելում սեռային խտրականությունը, սակայն կանանց և տղամարդկանց մեկնարկային հնարավորությունները տարբեր են, և պատկերը չի կարող գոհացուցիչ համարվել:

Համառոտ ակնարկով ներկայացնենք Հայաստանի իշխանական համակարգում կանանց ներկայացվածությունը: Ըստ համաշխարհային տնտեսական ֆորումի սեռերի իրավահավասարության վարկանիշի՝ Հայաստանը 2017 թվականին զբաղեցնում էր 97-րդ տեղը: Սեռերի իրավահավասարության վարկանիշը հաշվվում է ըստ 4 չափանիշների՝ քաղաքականության, աշխատանքի տեղավորման, ծառայողական առաջխաղացման, կրթության և առողջապահության ոլորտներում տղամարդկանց և կանանց հնարավորությունների համեմատության միջոցով:

Կանայք Հայաստանում կազմում են բնակչության կեսից ավելին, բարձրագույն կրթություն ունեցողների 60 %-ը, սակայն նրանց աշխատավարձը կազմում է տղամարդկանց աշխատավարձի 58,2 %-ը:

Չորրորդ գումարման Ազգային ժողովում (2007-2012 թթ.) կանայք 9 % էին կազմում: 2011 թ. ՀՀ ընտրական օրենսգրքում 20 % գենդերային քվոտայի ամրագրումից հետո էլ կուսակցությունների կողմից կանանց հարկադրական ինքնաբացարկների հետևանքով օրենսդիր մարմնում 2012 թ. այդ ցուցանիշը հասավ ընդամենը 11 %-ի:

2016 թ. ՀՀ ընտրական օրենսգրքում գենդերային քվոտան բարձրացվեց 30 %-ի, նաև ամրագրվեց դրույթ, համաձայն որի՝ մանդատից հրաժարված պատգամավորին պետք է փոխարինի նույն սեռի հաջորդ թեկնածուն:

6-րդ գումարման Ազգային ժողովում կանայք 18 % էին կազմում, 7-րդ գումարման ԱԺ-ում՝ արդեն 25 %:

Գենդերային անհավասարակշռությունը պահպանվում է գործադիր իշխանության բոլոր մակարդակներում: Վերջին երկու տասնամյակներում Կառավարության կազմում քաղաքական որոշումների ընդունմանը լավագույն դեպքում երկու կին է մասնակցել: Բավականին ցածր է կանանց ներկայացվածությունը տարածքային և տեղական ինքնակառավարման համակարգում:

Հայաստանի 10 մարզերում կին մարզպետ չունենք, 48 քաղաքներից միայն մեկում է կին քաղաքապետ ընտրվել: 2017 թ. համայնքներում կայացած ավագանու ընտրություններից հետո կանանց ներկայացվածությունն այդ համայնքների ավագանիներում կազմել է ընդամենը 4,4 %:

Ավագանու ընտրակարգում 25-տոկոսանոց քվոտա ամրագրելուց հետո կանանց ներկայացվածությունը Երևանի ավագանու կազմում բարձրացավ մինչև 27 %, Գյումրու և Վանաձորի ավագանիների կազմում՝ մինչև 24 %:

Այսպիսով կարող ենք պնդել, որ մեր հասարակության մեջ կանանց քաղաքական ներգրավվածության ամենագործուն միջոցն իրավական կարգավորման ճանապարհն է, երաշխավորված քվոտավորման ամրագրումը:

Այս ճանապարհով են խնդիրը լուծել արևմտաեվրոպական մի շարք ժողովրդավարական երկրներ: Այսպես՝ Ֆինլանդիայի և Նորվեգիայի օրենսդիր մարմիններում յուրաքանչյուր սեռի՝ 40 %-ից պակաս ներկայացվածությունն օրենքով բացառված է, Բելգիայում յուրաքանչյուր սեռից չի կարող գերազանցել 2/3-ը: Ֆրանսիան հավասար ընդգրկվածության մասին օրենսդրական հիմնավորում է որդեգրել:

ԵԽԽՎ համակարգում նույնպես քվոտավորումը դիտվում է որպես քաղաքական իրավունքների ամրագրման մեխանիզմ, և առաջարկվում է 40 % շեմը: Միջազգային փորձը ցույց է տալիս, որ օրենսդիր մարմնում կանանց նվազագույնը 30 % ներկայացվածությունն է թույլ տալիս որակական

ազդեցություն ունենալ որոշումների կայացման վրա:

ՄԱԿ-ն ընդունել է սեռերի հավասարությանն ուղղված ավելի քան 100 փաստաթուղթ, այդ թվում՝ «Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» կոնվենցիան և մի շարք համաձայնագրեր, որոնց Հայաստանն անդամակցել է՝ դրանք դարձնելով ՀՀ իրավական համակարգի բաղկացուցիչ մասը:

Դեռևս 2010 թ. ՀՀ կառավարության կողմից ընդունվեց համակողմանի մի փաստաթուղթ՝ գենդերային քաղաքականության հայեցակարգը, սակայն հետագայում չստեղծվեցին այդ հայեցակարգի իրականացման ազգային մեխանիզմները, ինչպես նաև չձևավորվեցին դրա գործունեության և իրացման արդյունավետությունը գնահատող մշտադիտարկման գործիքներ: Այդուհանդերձ, իրավիճակի բարելավման միտում կա. ստեղծվել են անհավասարակշռության հաղթահարման որոշակի գաղափարական, քաղաքական և կազմակերպչական նախադրյալներ: Դրական առաջընթացը նկատել է նաև «Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» ՄԱԿ-ի կոնվենցիան մշտադիտարկող կոմիտեն:

Ի՞նչ անել և ինչպե՞ս...

Պետք է կարողանալ քննել երևույթների առարկայական և ենթակայական պատճառները: Կանանց իրավունքների ձեռքբերումը պայքարի պատմություն է, այն գործողությունների համալիր է, որտեղ ահռելի անելիքներ ունեն անհատը, ՀԿ-ները, քաղաքացիական հասարակությունը, կուսակցությունները, իշխանության բոլոր ճյուղերը և զանգվածային լրատվամիջոցները:

Գենդերային անհավասարակշռության հիմնական պատճառներն են թաքնված խտրականությունը, իշխող գենդերային կարծրատիպերը և իհարկե քաղաքական մշակույթի ու վարքագծի կանոնները:

Ճիշտ է, թեև ազգի հիմնական ռեսուրսները տնօրինողը պետությունն է, և նրան ենք պատվիրակում պատասխանատվության հիմնական բեռը, բայց պակասդերակատարություն չունեն նաև կանայք: Շատ հաճախ ներտեսակային անհանդուրժողականության, ավանդույթային կարծրատիպերի, բարոյահոգեբանական այլ գործոնների արդյունքում կանայք օտարում են կանանց: Հաղթահարված չէ անգամ «գենդեր» հասկացության բացասական ընկալումը:

Սակայն գենդերային կարծրատիպերը մեկընդմիշտ տրված չեն, և ՀՀ -ում կանանց վիճակի բարելավմանը կարելի է հասնել կատարելագործելով համագործակցության ձևերը, հավաքական քաղաքական կամքով պարտավորվելով բարեփոխումներ իրականացնել և փոխադարձաբար հզորացնելով պետականությունը:

Քաղաքական գրագիտության բարձրացումը անհատ - քաղաքացիական հասարակություն - պետություն շղթայի առաջնահերթ խնդիրներից է:

Քաղաքական դերակատարների, կանանց և առհասարակ հանրության շրջանում անհրաժեշտ է համաձայնության հասնել որոշակի արժեքների շուրջ: Համընդհանուր համոզում պիտի լինի այն ճշմարտությունը, որ պետական կառավարման բոլոր մակարդակներում կանանց հավասարակշռված ներկայացվածությունը բխում է պետության արդիականացման և մրցակցային լինելու, ինչպես նաև ազգային անվտանգության շահից: Չի կարող լիարժեք և գործուն ժողովրդավարություն լինել առանց սեռերի շահերի հավասար գնահատման:

Կանանց քաղաքական ներգրավվածության ապահովման համար բացառիկ է կուսակցությունների դերակատարությունը: Մի շարք կուսակցությունների պարագայում ներքին ժողովրդավարության ցածր մակարդակը թույլ չի տալիս բազմաթիվ արժանավոր կանանց հանդես գալ որոշում կայացնող մարմիններում:

Ի վերջո մեր երկրի զարգացման, անվտանգության, սոցիալական արդարության և համերաշխության ապահովումն է պահանջում օգտագործել կանանց ներուժը:

Մերողջհասարակությանմեջթե՛Հայաստանում, թե՛ Սփյուռքում քաղաքական, տնտեսական, մշակութային նոր տարածքներ գրավելու ահռելի էներգիա է կուտակվել: Հանրային սպասումները մեծ են: Արժեքների վերագնահատման շրջան ենք ապրում: Արդյունքների մասին խոսելը վաղ է, բայց մտքի հեղափոխությունն արդեն իրողություն է:

Քաղաքական իշխանության արժեքների և կամքի տիրույթում առաջնահերթությունների սահմանումն է և դրանց իրականացման անհրաժեշտ գործիքակազմի ձևավորումը: Արդարությունը, բարեկեցությունը, անկախությունը, միով բանիվ ուժեղ ազգային պետությունը հայ ժողովրդի մշտական օրակարգերն են և կլինեն: Այս օրակարգերն անկատար և խոցելի կմնան, քանի դեռ չի ապահովվել հայ կնոջ ամբողջական, համակողմանի մասնակցությունն ու նվիրումն այդ գործընթացներին: ■

Ջավախքի հիմնահարցերը (մաս 3-րդ)

Վրեժ Նահատակյան

Հոգեվոր-մշակութային խնդիրներ

Չնայած առկա առարկայական և ենթակայական բազմաթիվ դժվարություններին՝ Ջավախքի հոգևոր-մշակութային կյանքում վերջին շրջանում նկատվում են դանդաղ աշխուժացման միտումներ: Զգալիորեն ավելացել է հոգևորականների թիվը՝ հասնելով շուրջ մեկուկես տասնյակի: Այդուհանդերձ, Հայ առաքելական եկեղեցու հետևորդ շուրջ 110 բնակավայրերի համեմատ, այս թիվը խիստ անբավարար է: Ջավախքի տարբեր շրջաններում կան նաև Հայ կաթոլիկ եկեղեցու հետևորդների շուրջ 2 տասնյակ բնակավայրեր: Հարկ է նշել, որ Վատիկանի կողմից այս գյուղեր գործուղված նվիրյալ և հայազգի հոգևորականների կողքին հաճախ են հանդիպում այլազգիներ, որոնց գոյությունն ու հատկապես ապազգային գործունեությունը երբեմն այս բնակավայրերում դառնում են ներքին լարվածության պատճառ:

Որպես դրական երևույթ կարելի է դիտարկել վերջին շրջանում Ջավախքում թափ ստացած եկեղեցաշինությունը կամ հին եկեղեցիների վերանորոգումն ու օծումը, խաչքարերի տեղադրումը: Այդուհանդերձ, այս ամենը տարերային բնույթ ունի, և զգացվում է արտերկրում ապրող բարեգործների այս քայլերի համակարգման, նյութաբարոյական միջոցների առավել արդյունավետ բաշխման խիստ կարիք:

Ջավախքում հոգևորականների պակասը հանգեցնում է նաև մի շարք պատմաճարտարապետական արժեքների՝ եկեղեցիների, վանքերի, հոգևոր համալիրների լքմանն ու ոչնչացմանը, իսկ դրանցից լավագույններն արագորեն բռնազավթվում են վրաց հոգևորականների կողմից: Ավելորդ չենք համարում նշել, որ Ջավախքում վրաց հոգևորականների թիվը սնկի նման աճում է՝ իր հետ ստեղծելով նորանոր հիմնախնդիրներ:

Չլուծված խնդիրների շարքում է մնում Հայ առաքելական եկեղեցու Վիրահայոց թեմի Ջավախքի Ընդհանուր առաջնորդական փոխանորդությունը (հիմնվել է 2001 թ. հունվարի 6-ին՝ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսի կարգադրությամբ) առանձին թեմի վերածելու հարցը, որը ջավախահայության համար գրեթե անհասկանալի պատճառներով շարունակում է ձգձգվել: Թեմի կազմավորմամբ.

. զգալիորեն կաճի հոգևորականների թիվը Ջավախքում, ինչի արդյունքում կաճի նաև հոգևոր-մշակութային միջոցառումների թվաքանակը,

. բարձրաստիճան հոգևորականները մշտապես կլինեն Ջավախքում և ամենօրյա հոգածության առարկա կդարձնեն Ջավախքի խնդիրները, այլ ոչ թե առիթից առիթ Թբիլիսիից կժամանեն Ջավախք,

. Ջավախքը կհայտնվի ուշադրության կենտրոնում, ինչը ջավախահայության վրա կունենա բարոյահոգեբանական մեծ ազդեցություն,

. ինչ-որ չափով հակակշիռ կստեղծվի վրաց հոգևորականների «նվաճողական» գործողությունների նկատմամբ,

. Ջավախքի հոգևոր դասը կազատվի Թբիլիսիում գտնվող վերին հոգևոր ատյանների ֆինանսատնտեսական կախվածությունից, և բարերարների կողմից եկեղեցուն փոխանցված

Մեսրոպ Մաշտոցի արձանը Ախալքալակում

գումարները ուղիղ կերպով կծառայեն Ջավախքի հոգևոր կարիքներին:

Մշակութային կյանքի աշխուժացման ընթացքը Ջավախքում մխիթարական չի կարելի անվանել: Ջավախքի շուրջ 130 բնակավայրերի հիմնականում գյուղաբնակ ազգաբնակչության համար քաղաքային հատուկենտ մշակութային հաստատությունները չեն կարող բավարար համարվել: Դրությունը հատկապես անմխիթար է Ծալկայի 13 գյուղերում, որտեղ, եթե չհաշվենք խորհրդային տարիներից մնացած մի քանի մշակութային տների շենքերը (որոնցում հազվադեպ են կազմակերպվում մշակութային միջոցառումներ), մշակութային կյանք գրեթե գոյություն չունի: Ջավախքի որոշ գյուղերում (հիմնականում՝ դպրոցների կազմում), շնորհիվ նվիրյալ ու հայրենասեր ուսուցիչ-մասնագետների, նյութական, շենքային և տեխնիկական անբավարար պայմաններում գործում են երգի կամ պարի սիրողական խմբակներ:

Ախալցխայի ազգաբնակչությանը շարունակում է հուզել քաղաքի հոյակերտ կոթողի՝ 15-րդ դարից հիշատակվող սրբատեղիի վրա 19-րդ դարում կառուցված Սբ. Նշան եկեղեցու պատկանելության՝ Վրաց ուղղափառ եկեղեցու կողմից վիճարկման փաստը, որի հետևանքով Սբ. Նշանում պաշտոնական եկեղեցական արարողություններ չեն կատարվում: Հավելենք, որ Վրաց ուղղափառ եկեղեցին ոչ միայն Հայ առաքելական եկեղեցուն չի վերադարձնում Սբ. Նշան եկեղեցին, այլև ջավախահայերից փորձում է խլել միջնադարյան հայ քաղկեդոնիկ մշակույթի արգասիք պատմաճարտարապետական նորանոր հուշարձաններ: Նման ոտնձգությունները տեղիք են տալիս մշտական լարվածության, երբեմն՝ նաև թեժ բախումների:

Թուրք -ադրբեջանական գործոնի դերակատարությունը Ջավախքում

Երեք երկրների ղեկավարները Կարս-Ախալքալակ-Թբիլիսի Բաքու երկաթգծի բացման ժամանակ

Ախալցխայի Սրբ. Նշան եկեղեցին

Թուրք-ադրբեջանական գործոնի ուժեղացումը Վրաստանում և ՀՀ-ի հետ սահմանակից նրա հարավային մարզերում (Սամցխե-Ջավախք, Քվեմո Քարթլի) հիմնականում պայմանավորված է տնտեսական, տարանցիկ և էներգետիկ ռեսուրսների առկայությամբ: Նավթամուղ-գազամուղերի և Քուռ (Թափարվան) գետի վրա կառուցված խոշոր հէկ-երի, տնտեսական այլևայլ ներդրումների կողքին գործարկվել է նաև Կարս-Ախալքալաք-Թբիլիսի-Բաքու երկաթուղին: Փաստենք, որ վերջին շրջանում երկաթուղու բացումը մի քանի անգամ հետաձգվել է, ինչն ունեցել է քաղաքական հիմքեր և կապված է եղել Թուրքիայի կողմից շինարարական աշխատանքների արհեստական ձգձգման հետ: Պատճառը, ըստ որոշ հետազոտողների, երկու երկրների միջև առկա տարաձայնություններն էին. Թուրքիան մշտապես իր դժգոհությունն է հայտնել Ադրբեջանին ազատ առևտրի և վիզային ռեժիմի վերացման մասին համաձայնագրեր չստորագրելու համար: Խնդիրը մասամբ լուծվեց 2017 թ., երբ Թուրքիան ազատ առևտրային գոտի ստեղծեց իր հետ ցամաքային կապ ունեցող Նախիջևանի հետ: Ավելին՝ այսօր բուռն քննարկվում է Կարս-Իգդիր-Նախիջևան երկաթուղու կառուցման հարցը, որը Նախիջևանը կապելու է մի կողմից Եվրոպայի, մյուս կողմից՝ Իրանի միջոցով Պարսից ծոցի և Մերձավոր Արևելքի հետ: Եթե այն կառուցվի (ինչը խիստ հավանական է), Նախիջևանն էլ իր հերթին երկաթուղով կապ կհաստատի Իրանի

Գործարկվում է երկաթգիծը

հետ, և Թուրքիան կդառնա Մերձավոր Արևելք–Եվրոպա տարանցիկ միջանցք: Իրադարձությունների նման զարգացումների հետևանքով տարածաշրջանի բոլոր տարանցիկ ուղիները կշրջանցեն ՀՀ-ն՝ լիարժեք դարձնելով վերջինիս շրջափակումը:

Հարկ է փաստել, որ, Կարս-Ախալքալաք-Թբիլիսի-Բաքու երկաթուղու գործարկմանը զուգահեռ, Ջավախքի Ախալքալաք-Նինոծմինդա՝ ՀՀ բեռնափոխադրումների համար տարանցիկ ճանապարհի վրա կառուցվում է թուրք-ադրբեջանական տարանցիկ հանգույց՝ իր բոլոր ենթակառուցվածքներով հանդերձ: Մի քանի կմ երկարություն ունեցող այս խոշոր համալիրի բացումով կտրուկ աճելու է թուրք-ադրբեջանական տնտեսական ներկայությունը Ջավախքում: Թուրքիան Ադրբեջանին ցամաքով միացնող այսրկովկասյան այս կարևորագույն հանգույցը կարճ ժամանակ անց մեծապես ազդելու է տարածաշրջանային քաղաքականության վրա՝ վերածվելով նշյալ դաշնազույգի կողմից ՀՀ-ի շրջափակման և հակահայ քաղաքականության այլևայլ կողմերի վրա խթանիչ ազդեցության զորեղ գործիքի:

Բնականաբար, Թուրքիայի և Ադրբեջանի բազմաոլորտ ու խոր ազդեցությունը Վրաստանի վրա իր բացասական հետքն է թողնում ջավախահայության նաև հասարակական կյանքի վրա: Վրացական հատուկ մարմինները վերջին շրջանում անգամ չեն էլ թաքցնում իրենց խտրական քաղաքականությունը ջավախահայության և ընդհանրապես հայության ու Հայաստանի հանդեպ, ինչը պայմանավորված է նաև թուրք-ադրբեջանական գործոնի թելադրանքով:

Թուրքիան և Ադրբեջանն անցել են Ջավախքով ցամաքային կապի ստեղծման ու ջավախահայության էթնոզտման քաղաքականության, մի գործընթաց, որն արդեն իրականացվում է բացահայտ և անթաքույց: Առկա տարածաշրջանային զարգացումների շարունակման պարագայում ամենևին չի բացառվում, որ Ջավախքն ապագայում կունենա այն տեսքը, ինչը ստացավ ներկա Վրաստանի կազմում ձևավորված Քվեմո (Ներքին) Քարթլի նահանգը: Այսինքն՝ Ջավախքը կվերածվի մի տարածաշրջանի, որտեղ թուլացած կամ վերացող հայկական գործոնն արագորեն փոխարինված կլինի ադրբեջանական (Ջավախքի պարագայում՝ նաև թրքական) գերիշխող տարրով:

Հիշեցնենք, որ դարասկզբին հայկական հզոր էթնոմշակութային ներկայություն ունեցող հայությունը, որն ապրում էր Խրամ գետի միջին և ստորին հոսանքի ավազանում (ներկայիս Վրաստանի Քվեմո Քարթլի նահանգի հիմնական հատվածը), խորհրդային տարիներին դուրս մղվեց, որի տեղը լրացվեց ոչ թե աճի տեմպերից զուրկ քարթվելական ենթաէթնոսներով, այլ վայրենի տեմպերով աճող կովկասյան թաթարական տարրով (բորչալու, ղարափափախ, թերեքյեմե և այլ ցեղերով):

Պարզորոշ է, որ այս գործընթացները սերտորեն շաղկապված են ՀՀ անվտանգության հետ, և այդ իմաստով Ջավախքի հիմնահարցը պատմական հայրենիքում ապրող էթնիկ խմբի շրջանում առկա տարածաշրջանային խնդիրներից վերածվել է Հայաստանի Հանրապետության պետական անվտանգության բաղկացուցիչ տարրի, այն է՝ համազգային խնդրի:

Այսպիսով՝ տարածարջանային զարգացումները հանգեցրել են նրան, որ Ջավախքը նախկինում ՀՀ-Վրաստան հարաբերություններում տեղավորվող քաղաքական հիմնահարցից վերաճել է քաղաքակրթական գործոնի, որի գոյությամբ է պայմանավորված հայկական և վրացական քրիստոնեական քաղաքակրթությունների շարունակականությունը համապատասխանաբար ՀՀ-ում և Վրաստանում: ■

Վերջին զարգացումները Սիրիայում և Էրդողանի քաղաքական քայլերը

Վ. Հ.

Վերջին իրադարձությունները Իդլիբում ևս մեկ անգամ հաստատեցին, որ Ռ. Էրդողանը, չնայած համագործակցության վերաբերյալ հավաստիացումներին, պարբերաբար խախտում է գործընկերների հետ ունեցած պայմանավորվածությունները:

2016 թ. օգոստոսին Թուրքիան սիրիական ազատ բանակի օժանդակությամբ (ՍԱԲ) սկսեց «Եփրատի վահան» գործողությունը, որի ընթացքում զավթեց տարածքներ Սիրիայի հյուսիսում՝ Հալեպ նահանգում: Ռ. Էրդողանն օգոստոսին հայտարարեց, որ այս գործողությունն ուղղված է Իսլամական պետության և տեղի քրդական ահաբեկչական խմբերի դեմ, որոնք սպառնում են Թուրքիային, իսկ արդեն նոյեմբերին ասում էր, որ գործողության նպատակը ոչ թե սիրիական հողերի զավթումն է, այլ դաժան բռնակալ Բաշար Ասադի կառավարության տապալումը: Այս երկու հայտարարություններն էլ ուղղված էին ԱՄՆ-ին: Մեկը՝ այն բանից հետո, երբ ԱՄՆ-ն հայտարարեց, որ անընդունելի են հարվածները քրդական խմբավորումների դեմ, և անհրաժեշտ է անհապաղ դադարեցնել դրանք, իսկ նոյեմբերյան հայտարարությամբ Թուրքիան նպատակ ուներ քողարկելով իր զավթողական գործողությունները ներկայանալու որպես ԱՄՆ-ի գլխավորած կոալիցիայի հավատարիմ գործընկեր, որ պայքարում է Սիրիայում ժողովրդավարական կարգեր հաստատելու համար: Միաժամանակ, փորձելով շեղել ագրեսիան դատապարտող եվրոպացիների ուշադրությունը կատարվածից, Էրդողանը հայտարարում էր, թե գրավված տարածքները կբնակեցնի սիրիացի փախստականներով ու կկասեցնի նրանց միգրացիան Եվրոպա: Իսկ անհանգստացած ռուսներին, վստահեցնում էր, թե հետևողական է Սիրիայի տարածքային ամբողջականության վերականգնման ու վիճակի կարգավորման գործընթացի նկատմամբ:

Մեկուկես տարի չանցած՝ 2018 թ. հունվարի 20-ին, Թուրքիան ՍԱԲ-ի հետ սկսեց «Ձիթենու ճյուղ» ռազմական գործողությունը Հալեպի նահանգում: Այս անգամ գործողությունն ուղղված էր սիրիական Աֆրինում և դրան հարակից շրջաններում տեղակայված քրդական զինված խմբավորումների դեմ:

Մինչ այդ՝ հունվարի 14-ին, ԱՄՆ-ի գլխավորած միջազգային կոալիցիայի ներկայացուցիչները հայտարարել էին, որ իրենց կողմից ստեղծված ու զինված քուրդ-արաբական «Սիրիական դեմոկրատական ուժերի» (ՍԴՈՒ) հիման վրա ձևավորում են 30 հազարանոց «անվտանգության ուժեր»՝ վերահսկելու համար թուրք-սիրիական սահմանը Եփրատ գետի հովտում: Դրան ի պատասխան՝ Թուրքական իշխանությունները, Սիրիայի քրդական աշխարհազորը համարելով ահաբեկչական կազմակերպություն՝ կապված Քրդստանի բանվորական կուսակցության հետ, հայտարարեցին, որ մտադիր են ուժային գործողություն իրականացնել նրա դեմ: Քաղաքական փաթեթավորում տալով հարձակմանը՝ Թուրքիայի փոխվարչապետ Բեքիր Բոզդաղը հայտարարեց, որ գործողությունը «Ձիթենու ճյուղ» ուղղված չէ Աֆրինում մեր թուրքմեն, քուրդ կամ արաբ եղբայրների դեմ, այլ ահաբեկչական կազմակերպությունների դեմ է և կանցկացվի հարգելով Սիրիայի տարածքային ամբողջականությունը, ինքնիշխանությունը և քաղաքական միասնականությունը, ու դրա ավարտից հետո թուքական ուժերը կհեռանան Սիրիայի տարածքից:

Իսկ 2019 թ. հոկտեմբերի 9-ին Թուրքիայի նախագահը պաշտոնապես հայտարարեց «Խաղաղության աղբյուր» գործողությունը

սկսելու մասին: Այդ գործողությունը նորից ուղղված էր քրդական աշխարհազորի, ԱՄՆ-ի կողմից ստեղծված «Սիրիական դեմոկրատական ուժերի» դեմ և նպատակ ուներ ստեղծելու բուֆերային «անվտանգության գոտի», որտեղ հաջողության դեպքում կբնակեցվեին մոտ 2 մլն սիրիացի փախստականներ: Այս անգամ էլ եղան նույնատիպ հայտարարություններ՝ ուղղված ԱՄՆ-ին, Եվրամիությանը և Ռուսաստանին: Վերջիններս, մանավանդ՝ Ռուսաստանը, ջանքեր էին գործադրում Թուրքիային պահելու ձեռք բերված պայմանավորվածությունների շրջանակներում: Այսպես, Թուրքիայի քրդական միավորումների դեմ ուղղված «Խաղաղության աղբյուր» ռազմական գործողությունը, սկսվելով հոկտեմբերի 9-ին, արդեն հոկտեմբերի 17-ին ԱՄՆ-ի միջնորդությամբ դադարեցվեց, համաձայնություն ձեռք բերվեց «Սիրիական դեմոկրատական ուժերի» (հիմնականում՝ քրդական) ու Սիրիայի կառավարության միջև: Որպես դրա շարունակություն՝ Սոչիում 2019 հոկտեմբերի 23-ին ՌԴ-ի և Թուրքիայի միջև հուշագիր ստորագրվեց, համաձայն որի՝ ամրագրվեց Սիրիայի հյուսիս-արևելքում առկա իրավիճակը, որոշում կայացվեց թուրքական ու ռուսական զինվորական ստորաբաժանումների կողմից համատեղ պարեկություն անցկացնելու մասին: Համատեղ պարեկությունը անհրաժեշտ էր թուրքական զինուժը զսպելու ու սադրանքների հնարավորությունը բացառելու համար: Բավարարվեց նաև Թուրքիայի պահանջը՝ դուրս բերելու բոլոր քրդական խմբավորումները Եփրատից արևելք:

Դեռ 2018 թ. սեպտեմբերին Թուրքիան, ըստ Ռուսաստանի և Իրանի հետ պայմանավորվածության, պարտավորվել էր դուրս մղել Իդլիբում կուտակված ծայրահեղական ահաբեկչական խմբերին: Սակայն, դրա փոխարեն, թուրքերը զինում են նրանց, ապահովում զինամթերքով, ռազմական տեխնիկայով ու հանդերձանքով: Եվ մի քանի ամիս անց, երբ սիրիական բանակը հաջողությամբ ազատագրական մարտեր էր մղում Իդլիբում, ջախջախելով զինված ընդդիմությանն ու ահաբեկիչներին, Թուրքիան հունվարի 20-ին հայտարարեց իր հերթական՝ այս անգամ «Գարնանային վահան» անունը կրող ռազմական գործողության մասին՝ մարտի հանելով ահաբեկիչների վերը նշված ջոկատներին: Հնարավոր չէր թաքցնել, որ այս գործողությունն արդեն ուղղված էր ոչ թե քրդական զինյալ խմբերի դեմ, այլ իր երկիրն ահաբեկիչներից ազատագրող սիրիական բանակի դեմ: Սիրիական բանակը դիմակայեց այս հարձակմանը՝ ոչ միայն ջարդելով ահաբեկիչներին, այլև զգալի կորուստներ պատճառելով թուրքերին: Իրավիճակը սպառնում էր վերաճել պատերազմի: Ինքն իրեն հարազատ մնալով՝ Էրդողանը նորից դիմեց մեղադրանքների, հոխորտանքների ու շանտաժի: Մեղադրեց արևմտյան դաշնակիցներին բռնակալ Ասադի դեմ պայքարում Թուրքիային չօժանդակելու համար, սպառնաց ողողել եվրոպական երկրները փախստականների նոր ալիքով, ուղղեց թուրք ժողովրդի ցասումը ռուսների և սիրիացիների դեմ: ԱՄՆ-ն և ՆԱՏՕ-ն սահմանափակվեցին ոչինչ չասող հայտարարություններով, Եվրամիությունը չենթարկվեց շանտաժի և փակեց սահմանները: Եվ չնայած իր կոշտ հայտարարություններին՝ սիրիացիներին պատժելու և ետ շպրտելու մասին, Պուտինի հասցեին հոխորտանքներին՝ Էրդողանը ստիպված էր դեմքը փրկելու համար մարտի 5-ին մեկնել Մոսկվա: Եվ ինչ-որ չափով փրկեց դեմքը: Կրակը դադարեցվեց, նորից հայտարարվեց համատեղ պարեկության մասին: Բայց դրա դիմաց Թուրքիան ստիպված էր համաձայնել, որ սիրիական հարձակման հետևանքով գրավված տարածքները մնան Ասադի ձեռքում: Երբ Էրդողանի նպատակներն ամբողջությամբ չեն իրականանում, նա խենթանում է, ահաբեկում է պետությունների ղեկավարներին, դիմում է քաղաքական շանտաժի և հող է նախապատրաստում նոր խառնակչությունների համար: Այս անգամ էլ մոսկովյան բանակցությունների ավարտին նա նշեց, որ Թուրքիան իրավունք է վերապահում Իդլիբում սիրիական կառավարական ուժերի նոր հարձակման դեպքում պատասխան քայլեր ձեռնարկելու: Այնպես որ այս զինադադարը նույնպես երկար չի պահպանվի. ոչ մեկի մոտ դա կասկած չի հարուցում:

Թուրքիայի նախագահն իր հավակնոտ նպատակների իրականացման համար կանգ չի առնում ոչ մի բանի առաջ, հանդես է գալիս իրարամերժ պատեհապաշտ

հայտարարություններով, խուսանավում է գործընկերների հետ հարաբերություններում, չի կատարում ստանձնած պարտավորությունները: Գնալով նա խճճում է քաղաքական գործընթացը, և ինքն էլ խճճվում է իր կողմից որդեգրված քաղաքական ոլորաններում: Այսպես, մի կողմից նա հակաահաբեկչական կոալիցիայի անդամ է և համագործակցում է ԱՄՆ-ի հետ, բայց մյուս կողմից հարվածում է քրդական խմբավորումներին, որոնք ամերիկացիների դաշնակիցներն են: Մի կողմից հաշվի չառնելով ԱՄՆ-ի ու ՆԱՏՕ-ի պատժամիջոցները՝ գնում է ռուսական S-400 հակաօդային համակարգերը, անցկացնում է «Հարավային հոսք» գազատարը՝ ներկայանալով ռուսներին որպես ինքնուրույն և վստահելի գործընկեր, մյուս կողմից, չնայած ՌԴ-ի և Իրանի դժգոհությանը, հովանավորում է Հ. Ասադին ընդդիմադիր և իսլամական պետությանը հարող ջոկատներին, զինում է նրանց և մարտի հանում սիրիական բանակի դեմ՝ ցույց տալու ամերիկացիներին, որ թեժ է պահում պայքարն սիրիական իշխանությունների դեմ և խոչընդոտում է ռուսների և իրանցիների ջանքերը Սիրիայի տարածքային ամբողջականությունը վերականգնելու գործում:

Ակնհայտ է, սակայն, որ «Գարնանային վահան» գործողության ձախողումից հետո և մոսկովյան բանակցությունների արդյունքում Էրդողանը կանգնել է փակուղու առաջ. թե՛ ռազմական և թե՛ քաղաքական զորաշարժերի հնարավորությունները խիստ սահմանափակվեցին: Որո՞նք են լինելու Թուրքիայի հետագա քայլերը:

Այն պարագայում, երբ Հ. Ասադը պաշտոնապես հայտարարեց, թե կանգ չի առնելու մինչև զավթիչներից ու անկոչ հյուրերից չազատագրի երկրի ողջ տարածքը, ինչ քայլերու է դիմելու Էրդողանը. ինքնակամ կհեռանա՞, թե՞ հաշվի չառնելով միջազգային նորմերը՝ կհարձակվի ինքնիշխան պետության վրա՝ այդ քայլով ծայրաստիճան սրելով հարաբերությունները ՌԴ-ի և Իրանի հետ: Իսկ եթե չգնա բախման ու գործի ՌԴ-ի և Իրանի հետ պայմանավորվածությունների համաձայն, ի՞նչ բացատրություն պետք է տա արևմտյան գործընկերներին, ինչպե՞ս պետք է արդարացնի մեծ թվով զոհերն ու հսկայական ծախսերն իր ընտրողների առաջ: Վերջապես կկարողանա՞ արդյոք Էրդողանը պահպանել իր հեղինակությունը Թուրքիայում: Նա փորձեց իր խաղը վարել սիրիական բարդ ու բազմաբևեռ քաղաքական դաշտում, սակայն աստիճանաբար վերածվում է խոշոր խաղացողների ձեռքի գործիքի, նրանց պատվերները կատարուղ կապալառուի և դադարում է տարածաշրջանային քաղաքականության սուբյեկտ լինելուց: Ելնելով Թուրքիայի նախագահի՝ Սիրիայում վարած վերոնշյալ քաղաքականության վերլուծությունից՝ կարելի է եզրակացնել, որ մարտի 5-ի մոսկովյան հանդիպումից հետո ուրվագծվում են հետևյալ երկու միտումները:

Առաջին: Չափազանց նեղացել, կրճատվել է Սիրիայում ռուս-թուրքական հարաբերությունների շրջանակը: Ռ. Էրդողանի համար չափազանց դժվար է լինելու Ռուսաստանի հետ այսուհետ պահպանել գործընկերական հարաբերությունները: Նրա համար հեշտ չի լինելու նաև քողարկել շինծու, երեսպաշտ վերաբերմունքը Վ. Պուտինի նկատմամբ: Ուստի Սիրիայում ռուս-թուրքական հակադրությունը միտում ունի սրվելու և կարող է վերափոխվել միջնորդավորված բախումների:

Երկրորդ: ԱՄՆ-ն, ինչպես և Եվրամիությունն ու ՆԱՏՕ-ն արդեն չեն հանդուրժում Ռ. Էրդողանի կամակոր վարքագիծը և նրա նկատմամբ իրենց վերաբերմունքը կարող են ձևակերպել «Մավրն իր գործն արեց, Մավրը կարող է հեռանալ» շեքսպիրյան ձևակերպմանը համաձայն: Միացյալ Նահանգների դաշնակիցը Թուրքիան է, այլ ոչ թե Էրդողանը, ուստի հավանական է, որ վերջինս լուրջ խնդիրներ կունենա նաև ներքաղաքական ճակատում, և չի կարելի բացառել, որ «արաբական գարունը» կարող է բացվել նաև Թուրքիայում: ■

Եգիպտոս ե՞րբ պիտի ճանչնայ Հայոց ցեղասպանութիւնը

Զաւէն Լիյլոզեան

Տաս-տասնհինգ տարի առաջ աւելի ճիշդ պիտի ըլլար հարց տալ՝ Եգիպտոս կրնա՞յ ճանչնալ Հայոց ցեղասպանութիւնը: Այսօր իրադրութիւնը բոլորովին այլ է և, ինչպէս Սուրիոյ պարագային, պարզապէս ժամանակի հարց: Լիբանանն իսկ, որ քաղաքական համակարգով և համայնքային դրութեամբ, հայութեան ունեցած դիրքով, քանակով, պետութեան թէ՛ քաղաքական կեանքին, թէ՛ տնտեսական-ընկերային ասպարէզներու վրայ զգալի դերակատարութեամբ, ինչ որ կշիռը կ՚աւելցնէր, ցեղասպանութեան փաստը քաղաքականօրէն յարաբերաբար ուշ արձանագրեց և ըստ այնմ գրաւեց իր դիրքը Հայոց ցեղասպանութիւնը ճանչցած պետութիւններու «ոսկեայ» ցանկին վրայ:

Արաբական արևելքի այս պետութիւնները, ներառեալ Իրաքը, Պաղեստինը, Յորդանանն ու իրենց ժողովուրդները, դարաւոր, աւելի ճիշդ՝ հազարամեակներու տարաբնոյթ կապ ու յարաբերութիւն ունեցած են հայոց հետ: Անոնք ականատես վկաներն են օսմանեան բռնակալութեան, մասամբ՝ ճակատագրակիցներ: Անոնք Հայոց ցեղասպանութեան հետևանքով հայրենազրկուած, ունեզրկուած, կոտորակուած ազգի մնացորդացին ապաստան տրամադրած սահմանակից երկիրներ են:

Հետևաբար մենք ունեցած ենք և ունինք արաբ ժողովուրդներու պատմական յիշողութիւնը՝ ամփոփուած պետական արխիներու մէջ, ակադեմական հետազօտողներու, զարգացած և ընթերցող հասարակութեան, ապրող երիցագոյն սերունդին մօտ:

Երբ սահմանակից կ՚ըսենք, խօսած կ՚ըլլանք նաև նախկին Օսմանեան կայսրութեան ենթակայ, այսօր թրքական պետութեան դրկից կամ մերձաւոր պետութիւններու մասին, որոնք պատմական և քաղաքակրթական կապ ունեցած են և ունին անոր հետ: Հասարակաց պատմութիւն ունենալ արաբախօս ժողովուրդներու համար չէ նշանակած նոյնանալ թրքութեան հետ՝ կրօնի և հաւատքի ճամբով քաղաքակրթական որոշ մերձաւորութեամբ հանդերձ:

ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Խօսելով Եգիպտոսի մասին, 1517 թուականէն իյնալով օսմանեան տիրապետութեան տակ, իսկ անկէ առաջ մեմլուքեան իշխանութեան դարերուն, հիմնական ազգաբնակչութեան՝ եգիպտացիներու կողքին ունեցած է թուրք փոքրամասնութիւն, որոնցմէ ոմանք՝ թուով աւելի նուազ, քան արաբները (արաբական թերակղզիէն վերաբնակներ), մինչև այսօր պահած են իրենց ծագման յիշողութիւնը: Նոյն դաւանանքն ունենալն արգելք եղած է կազմակերպուած թուրք փոքրամասնութեան ձևացման, յատկապէս՝ իշխանութեան կորուստէն, աւատապետական կարգերու տապալումէն և օսմանեան ազդեցութենէն ազատագրութենէն ետք:

Ինչ խօսք, ինչպէս մեր թուարկութենէն առաջ՝ փարաւոնական թէ յունահռոմէական դարաշրջաններուն, այնպէս ալ բիւզանդական, արաբական, մեմլուքեան և օսմանեան դարաշրջաններուն ու այնուհետև հայ տարրը տարբեր կարգավիճակներով ներկայութիւն եղած է Եգիպտոսի մէջ:

Հայերը աշակերտած են Աղեքսանդրիոյ հռչակաւոր հելենական կրթօճախին, միջնադարուն ունեցած են անապատականներ Եգիպտոսի տարածքին, ի միջի այլոց՝ հաստատած են սեփական վանքեր:

Արաբական Ֆաթիմեան խալիֆայութեան վերջալոյսին՝ նուազ, քան հարիւր տարի, պետութեան փաստական կառավարիչներ հանդիսացած են հայ զօրավարներ, անոնցմէ մին՝ քրիստոնեայ մնացած, որոնք օժանդակ բազմատասնեակ հազարնոց հայ զօրք բերած են Հայաստանէն ու Կիլիկիայէն և ընտանիքներով վերաբնակեցուցած Գահիրէ ու այլուր: Ֆաթիմեան Եգիպտոսի պատմութեան մէջ հայոց նշանակալի ներդրումն առաւելաբար շինարարական և կազմակերպչական եղած է, ռազմականի կողքին. Գահիրէի պարիսպները վերակառուցած կամ ամրացուցած են հայ վարպետներ, որոնց հրաւիրած է ամենազօր հայ վեզիրը՝ Պատր էլ Ճամալի, որ նշանաւոր դարձած է երկիրը խաղաղեցնելով, կարգ ու կանոն հաստատելով, գիւղացին խրախուսելով, մէկ խօսքով՝ բարեկարգելով ներքին խռովութիւններէն ու արտաքին մարտահրաւէրներէն թուլցած պետութիւնը:

Այսպէս, կը խօսինք հայոց դրական ներդրումին մասին, որ ժամանակի ընթացքին փոշիացած է, սակայն յիշատակներ թողած նախքան 19րդ դարը, երբ հայկական դերակատարութիւնը Մոհամմէտ Ալի Մեծի և յաջորդներու օրօք ծաղկեցաւ և արդիւնաւորուեցաւ: Ֆաթիմեան շրջանին մեծաթիւ հայկական ներկայութեան միջոցին, ըստ տուեալներու, եկեղեցական զոյգ թեմերով օժտուած էր Եգիպտոսի համայնքը՝ եպիսկոպոսներով հանդերձ, սակայն մեզի ժառանգուած արդի



Մարտիրոս Սարյանի <եգիպտական շարքից>

թեմական կառոյցը 19րդ դարու առաջին քառորդէն կու գայ:

Առանց խորանալու պատմութեան մէջ հաստատենք, որ ազգային մեր ներկայութիւնը Եգիպտոսի տարածքին, հազարամեակներու վկայագրութիւն ունի, սակայն չէ պահած յարատևութեան յիշատակուած շղթայ ու յատկանշուած է երկար ընդհատումներով: 19րդ դարու հայկական ներկայութիւնն իսկ իբրև թիւ ու քանակ 1894-96ի համիտեան ջարդերէն և հալածանքներէն Եգիպտոս ապաստանածներու մղումով է, որ 20րդ դարու երկրորդ կէս հասած է: Հայ անուանի մեծատունները, ճիշդ է, ազգին հարստութիւն կտակած են, վարժարան ու եկեղեցի կառուցած, սակայն, ըստ երևոյթին, անոնց շուրջ ազգային կեանք չեն յաջողած յառաջացնել կամ յարատևութիւն ապահովել մինչև 20րդ դար, նախաեղեռնեան ու յետեղեռնեան տարիներ:

Պակսած է առանցքային գաղափարը:

ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆՆԵՐ

Եւ կը հասնինք արդի Եգիպտոս: Քաղաքական շրջադարձերով հարուստ են 19րդ և 20րդ դարերը:

Եւրոպական՝ նախ ֆրանսիական և անգլիական մրցակցութիւնը, ապա երկրի եօթանասունամեայ անգլիական գրաւումը 1882էն սկսեալ, օսմանեան ազդեցութիւնը մինչև Առաջին համաշխարհային պատերազմ, փանիսլամիզմէն օսմանիզմ, այնուհետև եգիպտական և արաբական ազգայնութիւն, շղթայ մըն է, զոր պէտք էր նկատի առնէինք, երբ կը խորհէինք Հայոց ցեղասպանութեան ճանաչման մասին:

Եգիպտոս և Հայաստան աշխարհաքաղաքական ընդհանրութիւններ ունին, նաև որոշ իմաստով՝ ճակատագրով ալ նոյնութիւններ, նմանութիւններ ունին:

Նախ ըսենք, որ Եգիպտոս, ինչպէս Հայաստան, գտնուած են և կը շարունակեն գտնուիլ միջցամաքային ուղիներու վրայ: Այն բոլոր աշխարհակալութիւնները, որոնք ներխուժած են Հայաստան, նուաճած են նաև Եգիպտոսը: Այս նուաճումները երկար կեանք ունեցած են թէ՛ մէկուն և թէ՛ միւսին պարագային: Հայաստան եթէ տարբերութիւն մը ունեցած է, այն ալ մեծ գաղթերու ճամբուն վրայ գտնուիլն էր: Եգիպտոս նուազ մեծաթիւ ժողովրդային շարժերու ճամբուն վրայ գտնուած է: Երկուքի պարագային ալ նուաճողները հաստատուած ու կայք հաստատած են երկրին մէջ, վերաբնակած են և մշակութային ու քաղաքակրթական հետք կամ ընդհակառակը՝ աւեր թողած:

Եգիպտոսի քաղաքական սահմանները պատմութեան ընթացքին քիչ փոփոխութիւններ կրած են, կրնանք ըսել՝ նուազագոյն, ինչ որ կարելի չէ ըսել Հայաստանի համար: Հայաստան միջնադարուն, մեր թուարկութեան 387 թուականին բաժնուած է Պարսկաստանի և Բիւզանդիոնի միջև, իսկ Եգիպտոս հիւսիսն ու հարաւը միաւորած Մինա փարաւոնի (մ. թ. ա. 3200 թուական) օրերէն մնացած է միացեալ: Եւ թերևս պատճառը պէտք է փնտռել Հայաստանի կամ Եգիպտոսի իւրայատկութեան մէջ: Հայաստանի իր մշակոյթով ու քաղաքակրթական դիմագիծով անընդհատ շարունակութիւն մըն է, փոփոխուած, սակայն հիմնական նկարագիրները պահած՝ լեզուէն, ճարտարապետականէն մինչև աշխարհայեցողութիւն: Եգիպտոսը՝ ոչ: Փարաւոնական Եգիպտոսին՝ ներառեալ հելլենիստական շրջանը՝ Պտղոմէական հարստութիւն, նոյնիսկ քրիստոնէութեան ընդունումէն ետք, այնքան էական փոփոխութիւն չէ կրած, որքան հետագայ դարերուն՝ իսլամական արշաւանքներէն ետք, երբ երկրի ճարտարապետական աւանդութիւններէն, լեզուէն մինչև աշխարհայեցողութիւն փոխուած է և կնիքը դրած երկրի ընդհանուր նկարագրին ու նաև ճակատագրին վրայ: Անձնապէս հակուած եմ կարծելու, որ Հայաստանի տարածքային, հողային կորուստը Եգիպտոսի պարագային փոխարինուած է ինքնութեան, նկարագիրի, էութեան փոփոխութեամբ: Կորուստը միշտ ալ կայ, եղած է, սակայն Հայաստանի պարագային անիկա դարմանելի է:

Եգիպտոս հսկայ պետութիւն է՝ մէկ միլիոն քառակուսի քիլոմեթր տարածութեամբ, ուր այսօր կը բնակի հարիւր միլիոնէն աւելի քաղաքացի, երկու կողմէ եզերուած է Միջերկրական և Կարմիր ծովերով, իսկ 19րդ դարու երկրորդ

կէսէն այս ծովերը միջազգային նաւարկութեան համար միացուած են Սուէզի ջրանցքով, որ 2016 թուականին ընդլայնուեցաւ և խորացուեցաւ աւելի մեծ տարողութեամբ բեռնատար նաւեր ընդունելու համար, իսկ երթևեկը միաժամանակ երկկողմանի դարձուեցաւ: Կարճ՝ անիկա ամէն տուեալ ունի համաշխարհային քաղաքական բեմին վրայ հաստատուն և յարատև իր տեղը գրաւելու:

Եթէ պատմութեան հետևինք, Եգիպտոս մակընթացութիւն ապրած է նուաճողական քաղաքականութիւն վարած միջոցին՝ փարաւոններէն սկսած մինչև մեմլուքներ: Երբ ուժը չէ պատած, ի՛նք նուաճուած է և կողոպտուած: Հայաստանի պարագան քիչ մը տարբեր է, այն առումով, որ նուաճողական վարքագիծ իր հազարամեակներու պատմութեան երկայնքին քիչ կը հանդիպինք: Եզրակացութիւնը միակն է. եթէ նուաճողական նկարագիր չունիս, պարտաւոր ես անընդհատ նուաճողները զսպող կարողութիւն կուտակել:

Ամենայն դէպս, ուշադրութեան և նկատողութեան արժանի է Հայաստանի ու Եգիպտոսի այլ նմանութիւն մը՝ ալ.արդի դարաշրջանին երկուքն ալ թիրախ եղած են մեծապետական ուժերու ամէն անգամ, որ փորձած են ինքնուրոյն դառնալ, արտաքին լուծը թօթափել, ազդեցութիւններէն դուրս գալ, սեփական շահերուն հետամտիլ: Մոհամմէտ Ալի Մեծի (իշխած է 1805-1849) իշխանութեան տարիներուն՝ 1831ին, Օսմանեան կայսրութեան հետ եգիպտական փոխարքայութեան վարչական սահմաններուն շուրջ վէճն այնքան սաստացաւ, որ եգիպտական բանակը Իսթանպուլի վրայ քալեց, հասաւ մինչև Քէօթահիա, սակայն Ռուսաստան և Անգլիա արգիլեցին Օսմանեան կայսրութեան վերջնական պարտութիւնը, որ հետագային՝ 1839ին, երկամեայ նոր պատերազմի առիթ դարձաւ, և դարձեալ եւրոպական պետութիւններ՝ Անգլիա, Ռուսիա, Աւստրիա և Փրուսիա, նախայարձակ Օսմանեան կայսրութիւնը փրկեցին վերջնական պարտութենէն: Աւելին՝ Եգիպտոսը զրկեցին նախորդ եգիպտ-օսմանեան պատերազմի նուաճումէն, Մեծն Սուրիայէն: Եգիպտոս այդ թուականներուն արդէն արդիական պետութիւն էր՝ նաւատորմ, զինարան և այլ՝ 180 հազարնոց արդի, եւրոպական չափանիշներով մարզուած բանակի կարիքները մեծ մասամբ տեղական միջոցներով հոգալու ատակ: Աւելի ուշ՝ 1882ին, Բրիտանիա պահը հասունցած համարեց՝ վերջին հարուածը տալու Մոհամմէտ Ալիի երազանքին և վերջ դնելու արդիական Եգիպտոսի համակողմանի զարգացման նկրտումներուն:

Երկրորդ նման վիժեցման գործողութիւնը 1954-1967 նասըրական Եգիպտոսի վերելքի կասեցումն էր



Հայկական եկեղեցի Կահիրեում

Սուէզի պատերազմէն մինչև հնգօրեայ պատերազմ՝ առանց մոռնալու Եմէնի յեղափոխութեան աջակցութեան Եգիպտոսի ներգրաւումն ու աւազախրումը, Բրիտանիոյ, Ֆրանսիայի, Մ. Նահանգներու, Իսրայէլի համահեղինակած դիպաշարով ու դերակատարութեամբ, «հիւր դերակատար» ունենալով Խորհրդային Միութիւնը:

Հիմա բաղդատենք կեանքի ապահովութեան, ազատութեան, անկախութեան և միացեալ Հայաստանի ստեղծման հայոց պայքարի վերջին 140-145 տարիներու պատմութիւնը ու պիտի տեսնենք նոյն երևոյթները: Միջազգային հին խաղացողներու ակումբ մուտք գործելու համար պէտք են որակներ, զորս արդի պատմութեան մէջ ցուցաբերած են Իտալիա և Իսրայէլ տարբեր դարերու, տարբեր պատմական և քաղաքակրթական մեկնակէտերէ ու տարբեր հոլովոյթով:

ԱՅՍՕՐ

Այսօր Եգիպտոս շրջանային պետութիւն մըն է, որ կը փորձէ միջազգային քաղաքական, տնտեսական, ընկերային և քաղաքակրթական ալեծուփ ծովերու վրայ զգուշութեամբ նաւարկել:

Ան կը դիմագրաւէ մարտահրաւէրներ՝ կրթականէն մինչև արդիւնաբերական, կազմակերպչական, քաղաքաշինական, որոնք

բոլորն ալ յաղթահարելի են, եթէ պատասխան տրուի միակ՝ այլ դժուարին հարցին. «Ի՞նչ կ՚ուզէ հարիւր միլիոն բնակչութեան սահմանագիծը հատած այս հսկան»: Պատասխանը բարդ է, քանի որ արտաքին թէ ներքին ներգործութիւններով զարգացման նախորդ միջամտութիւնները բազմաշերտ ու հակասական հանրային տրամադրութիւններ ծնած ու սնած են:

Եգիպտոս բրիտանական հովանիէն դուրս եկաւ 1954ին, երբ կայսրութեան ուժերը հեռացան Սուէզի ջրանցքի շրջանէն: 1919ի եգիպտական յեղափոխութիւնը յանգած էր 1922ին երկրի անկատար անկախութեան ճանաչման. բրիտանական զօրքը մնացած էր Սուէզի ջրանցքին շրջանը: Բրիտանիոյ դեսպանը հզօր դերակատար էր երկրի ներքին քաղաքական կեանքին մէջ, 1936ի ուսանողական ցոյցերը հանգրուան մըն էին լիակատար անկախութեան ճամբուն վրայ: Իսկ Երկրորդ համաշխարհային պատերազմին բրիտանական բանակը եգիպտական հողի վրայ դիմագրաւած էր նացիական արշաւանքը դէպի Սուէզի ջրանցք, մինչ եգիպտացի մտաւորական թէ զինուորական շրջանակներ, հակաբրիտանական տրամադրութիւններով տարուած, Ռոմելի յաղթանակը կ՚ակնկալէին:

Վերջապէս, պատմական այս տեսութեան մէջ կ՚արժէ ընդհանրութիւն մըն ալ մատնանշել

Մուհամեդ Ալի մեծ

Հայաստանի, ինչպէս ամբողջ Մերձաւոր Արևելքի քաղաքական սահմանագծումները, ըստ իրենց շահերուն, կատարած են արտաքին ուժերը, Առաջին համաշխարհային պատերազմէն ետք: Եգիպտոս, ճիշդ է, զերծ մնացած է անկէ, սակայն իր բնական զարգացումը ոլորապտոյտէն դուրս չէ կրցած բերել երկար ժամանակ:

Տեղն է անդրադառնալու նաև այլ ցաւոտ խնդրի մը. մենք՝ հայերս, երախտապարտ ենք Եգիպտոսի, ինչպէս Արաբական արևելքի պետութիւններուն, որոնք մեզ զանգուածաբար հիւրընկալեցին, հայրենահանման ահաւոր հարուածէն կազդուրուելու պատեհութիւն տուին: Եւ հայ մարդը ամէնուր իր երախտագիտութիւնն արտայայտեց երկրի զարգացման բոլորանուէր մասնակցութիւն ունենալով: Հիւրընկալ երկիրներու մէջ հայուն վարքագիծը պարկեշտ ու պարտաճանաչ քաղաքացի ըլլալն էր: Եւ տեղացիք կը հաստատեն զայն և կ՚արժևորեն: Հայերս աւելիին պահանջը չենք ունեցած: Սակայն արտերկիր մեր կեցութիւնը երկարեցաւ մեր կամքէն անկախ: Մենք հիւրընկալ երկիրներու քաղաքացիութեան ձգտեցանք, գաղթականի հանգամանքէն հրաժարեցանք, ժամանակաւոր կեցութիւնը մշտականով փոխարինեցինք, երկրի քաղաքացիի առաւելութիւններէն օգտուելու և սերունդներու բնական կեանքի մտասևեռումով: Հետագային՝ 1952ի յեղափոխութենէն ետք, «եգիպտականացում» անունով ծանօթ, գործարաններու և կալուածներու ազգայնացում-գրաւումը, բարձրաստիճան պաշտօնեաներու՝ աշխատանքէ ազատումը կամ հեռաւոր, քաղաքէն հեռու վայրեր պաշտօնի կոչելը, ինչպէս կ՚ըսեն, չորը թացին հետ վառեց: Հայոց ճակտի քրտինքով ու հմտութեամբ զարգացուած գործարաններ, հաստատութիւններ, մէկ օրէն միւսը խլուեցան իրենցմէ ու խոր հետք ձգեցին ոչ միայն հայոց վրայ, այլև, կը կարծեմ, նաև պետութեան: Հետևանքը եղաւ համայնքի արագ նօսրացումը՝ վաթսունականներու սկիզբէն:

Եգիպտոս թագաւորական վարչակարգի օրով բաւականին հաւասարակշռուած խորհրդարանական միապետութիւն էր: Վարչակարգի փոփոխութենէն ետք դարձաւ կեդրոնաձիգ նախագահական, որ 2011ի ընդվզումէն ետք, հակառակ սահմանադրութեամբ խորհրդարանական հանրապետութեան հռչակման, ընտրական օրէնսդրութեամբ մեծամասնական-համամասնական ընտրակարգերու միջև չափազանց անհաւասարակշռութեան բերումով նախագահական կեդրոնաձիգ վարչակարգին վերադարձուեցաւ: Բազմակուսակցական համակարգը թէև կը գոյատևէ, սակայն եղանակ չի

ստեղծեր:

Այսքան երկար ներկայացնելէ ետք երկու երկիրներու առնչութիւններն ու հանգիտութիւնները վերադառնանք մեր նիւթին:

Մեր յօդուածին սկիզբը յիշած էինք, որ տաս տարի առաջ թերևս տարբեր ձևակերպում տայինք հարցադրման: Արդարև, նախկին նախագահ, նորոգ հանգուցեալ Մուպարաքի իշխանութեան առաջին շրջանին Եգիպտոս դէմ յանդիման յայտնուեցաւ Սինայի թերակղզիի Թապա բարձունքի սեփականութեան իրաւունքի ապացուցման հրամայականին:

Վիճարկողը Իսրայէլն էր, որ պիտի վերադարձնէր զայն 1967 թուականին բռնագրաւած թերակղզիին հետ: Օգնութեան հասաւ պաշտօնական Անգարան, որ Օսմանեան արխիւներէն հանեց ու Եգիպտոսին տրամադրեց 1906 թուականին մէկ կողմէ Բրիտանիոյ ու Եգիպտոսի, իսկ միւս կողմէ Օսմանեան կայսրութեան միջև սահմանագծման վաւերագրերը, ըստ որոնց՝ հազար քառ. մեթրէն քիչ մը աւելի այդ հողակտորը կը պատկանէր Եգիպտոսի. 1982ին սկսած եգիպտոհիսրայէլեան բանակցութիւնները ապարդիւն մնացին, և կողմերը դիմեցին միջազգային իրաւարարութեան, որ ի վերջոյ 1988ին վճռեց անոր պատկանելիութիւնը Եգիպտոսի, որ տարի մը ետք իր ազգային դրօշը բարձրացուց բռնագրաւուած հայրենիքի վերջին հողակտորին վրայ:

Ահա այս դրուագը ջերմացուց եգիպտ-թրքական յարաբերութիւնները մինչև էրտողանեան Թուրքիոյ շրջադարձը, հզօր աջակցութիւնը Մուպարաքի հեռացումը պահանջողներուն, որ ի վերջոյ յանգեցաւ Իսլամ եղբայրներու միամեայ իշխանութեան, մինչև նոր յեղափոխութիւնը՝ 2013 ին: Անկէ ետք արդէն Անգարա բանեցուց թշնամական հռետորաբանութիւն, սակայն միջազգային արձագանգ ու աջակցութիւն չգտաւ՝ հակադրուելու եգիպտացի ժողովուրդի կամքին, մինչև վերջերս, երբ Լիբիոյ ճամբով իր ներկայութիւնը զգացուց:

Արաբական գարնան ալիքը եգիպտական ամբարտակներուն առջև կանգ առաւ. օտար, շահագրգիռ ուժերը յանդգնութիւն չունեցան միջամտելու և հարուածելու՝ ինչպէս Լիպիոյ ու Սուրիոյ, իսկ անկէ առաջ՝ Իրաքի պարագային: Եգիպտոս չափէն աւելի մեծ էր արտաքին ուղղակի միջամտութեան մը կամքին ենթարկուելու համար:

Եգիպտոսի մէջ 1952ի վարչակարգի փոփոխութենէն ետք, յատկապէս՝ Կամալ Ապտէլ Նասէրի՝ իշխանութեան գալէ ետք, իշխանութիւնները թշնամական վերաբերմունք ունեցան մեծապետական շահեր սպասարկող տարբեր ուխտերու, մասնաւորաբար՝ Պաղտատի

Քամալ Աբդել Նասեր

ուխտին հանդէպ, որուն հիմնասիւներէն էր ՆԱԹՕի անդամ Թուրքիան՝ Իսրայէլի երկարամեայ սերտ դաշնակիցը, որուն կ'արժէ օր մը առանձին անդրադառնալ: Եգիպտ-թրքական անցեալի հակադրութեան հիմնապատճառը աշխարհաքաղաքական էր, որ ներկայիս կը կրկնուի, առերևոյթ՝ թրքական մենակատարութեամբ: Յիշատակելի է, որ Եգիպտոս սկզբունքային դիրքորոշմամբ մերժած է ճանչնալ Կիպրոս թրքական ներխուժման իրաւացիութիւնն ու անկէ ածանցուած՝ Հիւսիսային Կիպրոսի Հանրապետութիւնը:

Վերջապէս, ինչպէս ուրիշներ, Եգիպտոս ալ ինքնիշխան պետութիւն է և պարտաւոր է սեփական օրինական շահերը պաշտպանել: Հայոց ցեղասպանութեան ճանաչումը, բնականաբար, այդ շահերու պրիսմակէն է, որ պիտի դիտէ և ըստ այնմ որոշում կայացնէ, մանաւանդ որ այդ ճանաչման դիմաց գոնէ առայժմ բան մը չենք առաջարկեր: Կը նշանակէ, որ բարոյական հարթութեան վրայ է հայկական ակնկալութիւնը:

Այս հաստատումը բացասական տրամադրութիւններ պէտք չէ յառաջացնէ մեր մէջ: Ընդհակառակը՝ խթան պէտք է հանդիսանայ քաղաքականացման և մեր նպատակներու ծաւալին ու կշիռքին համապատասխան գործիքներու ստեղծման, մանաւանդ այսօր, երբ ազգային անկախ պետականութիւնը վերականգնած ենք: Կը մնայ, որ պետական-ազգային որոշման աստիճանական անկախացումն ու ամրապնդումը ազգային օրակարգ դարձնենք և յառաջ ընթանանք՝ բազմապատկելով մեր սփիւռքեան ներուժի կարողականութիւնը, զօրակցինք Հայ դատի մարմիններու և գործիչներու անձնդիր աշխատանքին: ■

Հայաստանի աշխարհաքաղաքական գործօնը եւ ԱՄՆի վարքագծային զարտուղութիւնը

Սեդօ Պոյաճեան

Վերանկախացումէն ետք Հայաստանի մէջ ԱՄՆ կառուցեց իր երկրորդ մեծագոյն դեսպանատունը: Այս փաստը ինքնին կարելի էր համարել ապացոյցը ԱՄՆի համար Հայաստանի ներկայացուցած աշխարհաքաղաքական կարևորութեան: Հանգրուանաբար նկատելի կը դառնային այս տարածաշրջանի նկատմամբ ԱՄՆի վարքագծին մէջ բացայայտուող ամերիկեան անվտանգութեան հարցերը: Հետևաբար կ'ակնկալուէր ԱՄՆի կողմէ Հայաստանի նկատմամբ այնպիսի ռազմավարութիւն, որ կը համապատասխանէ Հայաստանի աշխարհագրական դրուածքին և աշխարհաքաղաքական կարևորութեան:

Դժբախտաբար, Հայաստանի նկատմամբ այդպիսի ակնկալութիւն քաղաքական ու ռազմավարական իրականութեան չվերածուեցաւ: Քլինթընի նախագահութեան շրջանէն ետք ԱՄՆի արտաքին քաղաքականութեան մէջ սկսան արմատանալ «համաշխարհային տիրակալութեան» (գլոբալ հեգեմոնիայի) արկածախնդրական գաղափարախօսութիւնը և գործելաոճը: ԱՄՆի վարքագծային տեսադաշտին մէջ, շարք մը այլ երկիրներու նման, Հայաստան ևս վերածուեցաւ շահագործելի միաւորի, որուն աշխարհաքաղաքական կարևորութեան գիտակցական թէ անգիտակցական անտեսումը վարքագծային զարտուղութիւն պէտք է համարել:

Հայաստանի աշխարհաքաղաքական գործօնը

Հայաստանի աշխարհաքաղաքական արժէքը խորապէս ըմբռնելու և ճիշդ արժևորելու լաւագոյն ուղեցոյցն է Ռուբէն Տէր-Մինասեանի անփոխարինելի գործը՝ «Հայաստան միջցամաքային ուղիներու վրայ» գիրքը (1948, Պէյրութ):

Թէպէտ Ռուբէնի աշխարհաքաղաքական տուեալներն ու վերլուծումը հիմնուած են պատմական Հայաստանի ու յատկապէս Միացեալ Հայաստանի տարածքով մեր հայրենիքի կենսական կարևորութեան վրայ, ան միաժամանակ իր այժմէականացնող լոյսը կը սփռէ ներկայ Հայաստանի կոտորակուած տարածքի կարևորութեան վրայ:

Այս իմաստով ներկայ Հայաստանի հողատարածքը, հակառակ իր նեղացուած սահմաններուն, կը պահէ միջցամաքային ճանապարհներու վրայ ինկած իր աշխարհագրական կարևորութիւնը: ԱՄՆ կամ այս ճանապարհներուն վրայ «ճեմելու» յաւակնութիւնը ունեցող որևէ այլ ուժ Հայաստանի ներկայացուցած աշխարհաքաղաքական կարևորութիւնը կրնայ անտեսել միայն ի գին իր ռազմավարական հաշիւներուն:

Հայաստան փակ հողատարածքով երկիր մըն է՝ ցամաքով շրջապատուած և առանց ծովային ճանապարհներու հասանելիութեան: Այս դրուածքը

Ամերիկյան դեսպանատան շենքը Երևանում

զանազան մակարդակներու վրայ Հայաստանը կը մատնէ աշխարհաքաղաքական անել կացութեան: Միւս կողմէ, սակայն, իր աշխարհագրական դրուածքը Հայաստանը օժտած է արտաքին ուժերու տրամադրող ռազմավարական առաւելութիւններով:

Ներկայ Հայաստանը, զրկուած Թուրքիոյ բռնագրաւման տակ պահուող իր պապենական հողերէն, այսօր կրնայ կարողութիւնը չունենալ տարածաշրջանի մէջ աշխարհաքաղաքական պարիսպ ըլլալու, ինչպէս որ էր իր պատմութեան ընթացքին: Այսուհանդերձ, նոյնիսկ իր ներկայ կրճատուած սահմաններով Հայաստան կը հանդիսանայ ռազմավարական անցք մը, որ իր կարգին կը հակակշռէ դէպի արևելք, դէպի արևմուտք, դէպի հիւսիս և դէպի հարաւ՝ Միջին Արևելք ու Ասիա տանող հաղորդակցութեանց ու փոխադրութեանց միջցամաքային ուղիները, գրեթէ ճիշդ այնպէս, ինչպէս եօթանասուն տարի առաջ նկարագրած էր Ռուբէն Տէր-Մինասեան:

Հայաստանի այս ռազմավարական առանցքային յատկութիւնը կրնայ ժամանակաւորապէս անտեսուիլ ԱՄՆի կողմէ, բայց շրջանի մէջ գործող և գործելու յաւակնութիւնը ունեցող այլ ուժեր կը գիտակցին այս իրականութեան և ըստ այնմ կը վերաբերին Հայաստանին հետ, ինչպէս Ռուսիա և Իրան: Մինչ Թուրքիա նոյն գիտակցութեամբ կը հակադարձէ Հայաստանին:

Առաջին՝ Ռուսիա: Այսօր, աւելի քան երբեք, Ռուսիոյ ղեկավարութեան մտածողութիւնը կ'առաջնորդուի աշխարհաքաղաքական նկատառումներով: Հետևաբար պատահական չէ, որ տնտեսական թէ այլ խայծերով ու միջոցներով Ռուսիա հետևողականօրէն հակակշիռը կը պահէ Հայաստան դռանցքին վրայ: Ռուսիա նոյն հետևողականութեամբ նաև կը հակակշռէ այլ անցքերու վրայ՝ Պալքաններէն մինչև Մերձպալթեան շրջան, մինչև իսկ Ուքրաինա, Վրաստան և Ատրպէյճան: Պարզ խօսքով՝ Ռուսիա կը ձգտի ու կը յաջողի տիրութիւն ընել Եւրասիոյ սրտատարածքին (heartland), որուն հասանելի ուղիներէն մէկն է Հայաստանը՝ հարաւէն հիւսիս բարձրանալու ձգտող ուժերուն համար:

Դիւանագիտական, տնտեսական և զինուորական այլազան միջոցներով Ռուսիա կը փորձէ ու կը յաջողի Հայաստանն ու անոր երկու հարևան երկիրները, այսինքն՝ Հարաւային Կովկասը, պահել իր ազդեցութեան շրջագծին մէջ: Այս գործընթացին սատարող մեծ յենարաններ են տնտեսական, ընկերային ու մշակութային յարաբերութիւնները, որոնք դարերէ ի վեր գոյութիւն ունեցած են Ռուսիոյ և Հարաւային Կովկասի ժողովուրդներուն միջև:

Երկրորդ՝ Իրան: Ան ևս կ'առաջնորդուի աշխարհաքաղաքական մեկնակէտերով: Այս առումով Հայաստանի ռազմավարական արժէքը չի վրիպիր իրանեան հաշուարկներէն: Սահմանակից անկախ Ատրպէյճանի մը գոյութիւնը լուրջ մտահոգութիւն է Իրանի համար, յատկապէս երբ նկատի ունենանք անոր՝ աւելի քան քսան միլիոն հաշուող ազերի փոքրամասնութիւնը, որոնց մօտ Ատրպէյճանէն ներշնչուող ազգայնական և անջատողական ձգտումներ կրնան վտանգել Իրանի հողային ամբողջականութիւնը: Ի տես այս կացութեան՝ Իրանի համար Հայաստանի հետ կապերու սերտացումը և բազմամակարդակ յարաբերութիւններու մշակումը այլընտրանք չի կրնար ունենալ:

Աշխարհաքաղաքական առումով մանաւանդ կենսական է այն անցքը, որ Հայաստան կը տրամադրէ Իրանին՝ բացուելու համար դէպի հիւսիս և արևմուտք: Այդ անցքը Հայաստանի հարաւը՝ Իրանի հետ Սիւնեաց աշխարհի սահմանագիծն է: Այս անցքը նոյնքան կենսական է նաև թշնամի հարևաններով շրջապատուած Հայաստանին համար:

Չափազանցուած պիտի չըլլայ ըսել, թէ ներկայ պայմաններուն տակ այս անցքը Հայաստանի շնչերակն է: Արցախեան ազատագրական պայքարի օրերուն, երբ խաղաղութեան լուծումներ կ'առաջադրուէին, ԱՄՆ Պետական քարտուղարութեան պաշտօնատարներէն Փոլ Կոպլ առաջ կը մղէր «հողի դիմաց հող»ի վարկածը: Հայ դատի Ուաշինկթընի գրասենեակին կողմէ Կոպլի հետ այս մասին հանդիպման ընթացքին ան շեշտեց, թէ խաղաղութիւնը կրնայ հաստատուիլ, եթէ Հայաստան հարաւէն նեղ անցուղի (քորիտոր) մը յանձնէ Ատրպէյճանին՝ միանալու համար Նախիջևանին, որուն դիմաց Հայաստան կը ստանայ Ղարաբաղը: Մի քանի օր ետք՝ ուշ երեկոյեան, հեռաձայնեց և մեզ իր մօտ հրաւիրեց ԱՄՆի Ներկայացուցիչներու տան Արտաքին յարաբերութեանց յանձնաժողովի վարիչը՝ Մայք Վէն Տուզընն, որ մեզի մօտիկ բարեկամ էր: Անմիջապէս հանդիպեցանք: Վէն Տուզընն մեզի փոխանցեց հետևեալը. «Յանձնաժողովի նախագահ քոնկրեսական Լի Համիլթոնի ցուցմունքով կը կայանայ այս հանդիպումը: Համիլթոնի թելադրանքը ձեզի այն է, որ Ղարաբաղի խաղաղութեան համար ոչ մէկ ատեն Հայաստանի հարաւային սահմանէն հողային զիջում պէտք է ընէք: Իրանի հետ ձեր սահմանը Հայաստանի շնչերակն է: Եթէ կ'ուզէք ապրիլ, պիտի պահէք այդ սահմանը»: Եւ աւելցուց. «Այս թելադրանքը անմիջապէս փոխանցեցէք ձեր կուսակցութեան՝ ՀՅ Դաշնակցութեան պատասխանատուներուն»:

Երրորդ՝ Թուրքիա: Եւրասիոյ տարածքին տիրական և առաջնորդող ուժ ըլլալու թրքական պատմական ախորժակը սահման չի ճանչնար՝ բառին իսկական ու փոխաբերական իմաստներով: Դէպի արևելք՝ Ատրպէյճան և մինչև Կեդրոնական Ասիոյ իրեն ցեղակից «ստան»-ներուն հասանելիութեան ճանապարհին, գլխաւոր խոչընդոտներէն է Հայաստանը: Նորութիւն չէ Թուրքիոյ մօտ Հայաստանի նկատմամբ այս պատկերացումը: Այդ պատկերացումն իր պատմական արմատները ունի: Թուրքիա մինչև իսկ փորձեց արմատախիլ ընել այդ «խոչընդոտը»՝ Առաջին աշխարհամարտի իր պատերազմական գործողութիւններուն զուգահեռ: Թուրքիոյ «դժբախտութիւնը» այն է, որ իր պատկերացուցած «խոչընդոտը» գոյատևեց, պետութիւն կառուցեց ու կը շարունակէ ապրիլ իբրև երկիր և ժողովուրդ:

Թուրքիա նաև հետամուտ է ինքզինք վերածելու կասպեան քարիւղի փոխադրութեան ճանապարհի: Սակայն այս նպատակը կը դիմակալէ աշխարհագրական խոցելի կէտ մը. Թուրքիա և Ատրպէյճան սահմանակիցներ չեն: Այդ փոխադրութեան համար անցքերէն մէկը Հայաստանն է: Իրողութիւն մը, որ ցայտուն կը դարձնէ Հայաստանի աշխարհագրական դրուածքին կարևորութիւնը: Այս կարևորութիւնը արժեզրկելու համար Թուրքիա դիտաւորեալ Հայաստանը շրջանցելու և աշխարհագրականօրէն անկարևոր դարձնելու մարտավարութիւնը որդեգրած է: Ի գին դրամական յաւելեալ ծախսերու և ժամանակի կորուստի՝ Թուրքիոյ իր նախաձեռնած քարիւղատար, գազատար թէ երկաթուղագծային ճանապարհները կը կառուցէ Հայաստանի շրջանցումով:

Ինքնախաբէութեան վրայ հիմնուած մարտավարութիւն մըն է այս՝ ապացուցելու շրջանային ուժերուն և աշխարհին, թէ հայաստանեան դռանցքը երևակայածին է, և թէ ապօրինաբար իւրացուած Արևմտեան Հայաստանի տարածքով Թուրքիան կը հանդիսանայ աշխարհաքաղաքական պարիսպը միջցամաքային ուղիներուն վրայ: Բայց տարածաշրջանին մէջ տիրող աշխարհաքաղաքական իրողութիւնը այն է, որ նոյնիսկ իր կոտորակուած հողատարածքով Հայաստան տէրն է այդ ճանապարհներուն վրայ բազմող կարևոր անցքի մը: Թուրքիոյ համար դժուարընդունելի է այն ռազմավարական իրողութիւնը, որ Հայկական լեռնաշխարհը մէկ ամբողջութիւն է իր արևելեան ու արևմտեան կողմերով: Ատոնք, մէկը առանց միւսին կը վերածուին զիրար չէզոքացնող աշխարհաքաղաքական տարածքներու:

Հայաստանի միջցամաքային ուղիներու վրայ վայելած կարևորութեան կը զուգակցի Արցախի Հանրապետութեան ռազմավարական ու աշխարհաքաղաքական արժէքը:

Հակառակ իր անկախ գոյութեան՝ Արցախը շարունակութիւնն ու անբաժանելի մասն է Հայաստանի հողատարածքին: Արցախով Հայաստանը կը վերածուի ոչ միայն դռանցքի, այլև աշխարհագրական

պարիսպի, որ կը պաշտպանէ Հայաստանի թիկունքը և կ'երաշխաւորէ անոր անվտանգութիւնը: Եթէ Հայաստանի հարաւային սահմանը շնչերակն է, Արցախը Հայաստանի վահանն է:

Արցախի հետ մեր ժողովուրդի կապուածութիւնը զգացականէն վեր է, աշխարհաքաղաքական է: Նոյն էր պարագան 1920ին Զանգեզուրին և Դիլիջանին, երբ Դաշնակցութեան որոշումով և Գարեգին Նժդեհի ղեկավարութեամբ մեր ձեռքը պահեցինք այդ շրջանները և միացուցինք Հայաստանին՝ հոգ չէ, թէ Խորհրդային:

Հայաստանի համար Արցախի ազատագրման ռազմական ու աշխարհագրական կարևորութիւնը անգնահատելի է:

Պէտք է կրկին դիմել Ռուբէն Տէր-Մինասեանին՝ ընդգծելու համար այս հանգամանքը: Իր «Հայաստան և Ադրբեջան» ուսումնասիրութեան մէջ («Հայրենիք» ամսագիր, 1927, 8րդ համար) Ռուբէն աշխարհաքաղաքական վերլուծումով կը հաստատէ, թէ ինչու Արցախեան տարածքը կարելի չէ զիջիլ, եթէ նպատակ ունինք պահելու ներկայ Հայաստանը:

Աշխարհագրական իր առաւելութիւններով և անպատեհութիւններով Հայաստան գործած է և պիտի գործէ աշխարհաքաղաքական կարևորութիւն ներկայացնող տարածաշրջանի մը մէջ, ուր պատմականօրէն, ներկայիս ու նաև ապագային քաղաքական, տնտեսական թէ ռազմական հակադիր շահեր հետապնդող արտաքին ուժեր շրջանէն ներս յառաջացուցած են ու պիտի շարունակեն յառաջացնել անսխալնութաց եռուզեռ, որուն գինը յաճախ վճարած է Հայաստանը: Բայց Հայաստան երբեմն գիտցած է նաև օգտուիլ իր աշխարհաքաղաքական դիրքէն՝ ուրիշին վճարել տալով այդ գինը:

Հարցը այն է ներկայիս, որ Հայաստանը պիտի կարողանա՞յ իրապէս օգտուիլ իր աշխարհագրական դրուածքի առաւելութիւններէն: Պատասխանը կախեալ է մեր աշխարհաքաղաքական մտածողութենէն և մեր երկրի ընձեռած աշխարհագրական առաւելութիւններու գիտակցութենէն:

Յուսադրիչ էր վերջերս Հայաստանի բանակի սպայակոյտի (շտապի) պետ Արտակ Դաւթեանի այն նկատողութիւնը, որ «Սիրիայում իրավիճակի սրացումը կարող է ազդել Հարաւային Կովկասի վրայ»: Մեր բանակի հրամանատարութեան մակարդակին վրայ առկայ է այս աշխարհաքաղաքական մտածողութիւնը: Վստահաբար այս մտածողութիւնը կը տիրէ նաև մեր Պաշտպանութեան նախարարութեան բարձրագոյն մակարդակներէն ներս:

Սակայն, վարքագծային առումով, աշխարհաքաղաքական մտածողութիւնը պէտք է խորապէս թափանցէ նաև քաղաքական ղեկավարութեան մակարդակին վրայ: Մտահոգիչ է ներկայիս այս անփոխարինելի մտածողութեան բացակայութիւնը մեր երկրի կառավարման պատասխանատու շրջանակներուն մօտ: Հոս կը կայանայ մեր հայրենիքին գոյատևելիութեան խոցելիութիւնը: Աշխարհաքաղաքական մտածողութեան բացակայութեան հետևանքով, մեր

Ռուբէն Տէր-Մինասյան

պատմութեան երկայնքին ու լայնքին կորստեան դատապարտած ենք գիւղեր, քաղաքներ, տարածքներ, մինչև իսկ թագաւորութիւններ: Այսօր, մեր հայրենիքի աշխարհագրական առաւելութիւններէն անտեղեակ ու անտաղանդ ղեկավարումով, թոյլատրելի չէ կրկին երկիրը ենթարկել նման կորուստներու:

Հայաստանին տիրութիւն կրնայ ընել միայն ինքը՝ հայը: Այդ իրաւունքը կրնայ պատկանիլ այն հայուն, որուն մտածողութեան, բնազդին և էութեան անբաժան մասը դարձած է մեր երկրի աշխարհաքաղաքական դրուածքը:

Այսպիսի կարողութիւն կը ծլարձակի, կը խորանայ և կ'արմատանայ մեր պատմութեան, մշակոյթին և աշխարհագրութեան անաղարտ գիտակցութեամբ՝ սկսելով մանկապարտէզի աշակերտէն մինչև համալսարանական ուսանող, աշխատաւորէն մինչև մտաւորական և պարզ քաղաքացիէն մինչև նախագահ, վարչապետ ու նախարար:

Եզրակացնենք՝ Հայաստանի աշխարհագրական դիրքը կը գտնուի այն գիծին վրայ, որ Եւրոպան կը միացնէ Միջին Արևելքին և Ասիոյ: Դէպի հարաւ թէ դէպի հիւսիս արշաւողները միշտ պահ մը կանգ առած են Հայաստանի դիմաց: Անոնցմէ շատեր իրենց գերակշռող ուժով փորձած են տիրել Հայաստանին: Ոմանք յաջողած են: Ոմանք այսօր ևս նման յաջողութիւն կը վայելեն: Բայց այդ վայելքը ժամանակաւոր է, ինչպէս եղած է պարագան մեր պատմութեան ընթացքին հայաստանեան պարիսպին բախող մնացեալ արշաւողներուն: Հայաստանին տիրողին կեանքը միշտ ժամանակաւոր է: Անոնցմէ ոմանք դատապարտուած են մահուան, ուրիշներու պարագային իրենց տիրութեան երջանկութիւնը եղած է կարճատև: Ինչպէս Ռուբէն Տէր-Մինասեան կը գրէ. «Կ'ըսեն՝ ամենամեծ ադամանդ քարերը պատճառ կը դառնան սեփականատիրոջ մահուան և նոր տիրոջ կարճատև երջանկութեան: Այդ ադամանդներէն է Հայաստանը» («Հայաստան միջցամաքային ուղիներու վրայ»):

Հայաստան այդ անտիրապետելի ադամանդն է, որ միշտ պիտի պատկանի միայն հայ ժողովուրդի տիրութեան՝ պայմանաւ, որ ժողովուրդը գիտակից ըլլայ իր հայրենիքի աշխարհաքաղաքական արժէքին:

Հայաստան – ՀՅԴ – Սփիւռք (3) (Ժամանակակից շրջան - 2)

Մկրտիչ Մկրտիչեան

Ռոպերթ Քոչարեանի կողմէ ՀՀ վարչապետի պաշտօնի ստանձնումը զուգադիպեցաւ այդ օրերուն առնուազն իբրև տարօրինակ ընկալուած հետևեալ եղելութեան. ՀՀ նախագահութեան կողմէ յղուեցաւ հրաւէր մը՝ ուղղուած աքսորեալ ՀՅԴ Բիւրոյին, որ կ՚առաջարկէր գալ Երևան՝խորհրդակցութիւններու համար: Հրաւէրին դրդապատճառները դժուար էր կռահել: Հակառակ կուսակցութեան դէմ ՀՀ իշխանութիւններու ծաւալած հալածանքին՝ Դաշնակցութիւնը արտասահմանի մէջ շարունակած էր սատարել երկրի արտաքին քաղաքականութիւնը. Հանդիպումներ տեղի ունեցած էին ՀՀ դեսպաններուն, ինչպէս նաև Արտաքին գործոց նախարարին հետ: Լևոն Տէր-Պետրոսեանի անմիջական գործակիցներուն հետ երկու օր տևած խորհրդակցութիւնները արդիւնք չտուին, որովհետև Դաշնակցութեան ներկայացուցիչները զանոնք շարունակելու համար պայման դրին դաշնակցական բանտարկեալներու ազատ արձակումը: Ատիկա չի նշանակեր, անշուշտ, որ անոնք բոլորովին անիմաստ էին: Անոնք անգամ մը ևս ցոյց տուին Դաշնակցութեան պատրաստակամութիւնը ներհայկական յարաբերութիւնները բնականոն մակարդակի վրայ վերադարձնելու՝ ընդունելով փոխադարձ յարգանքի հիմնական սկզբունքները:

Լևոն Տէր-Պետրոսեանի հրաժարականէն կարճ ատեն ետք ՀՀ նախագահ ընտրուեցաւ վարչապետ ու Արցախի նախկին նախագահ Ռոպերթ Քոչարեան, ինչ որ շահագրգիռ շրջանակներուն վստահութիւն ներշնչեց, որ Արցախի կարգավիճակին շուրջ տարուող բանակցութիւններու ընթացքին հայկական կողմը աւելի վճռական կ՚ըլլայ հայկական ազգային շահերու պաշտպանութեան տեսանկիւնէն:

Քոչարեանի իշխանութեան առաջին օրէն Սփիւռքի հետ յարաբերութիւնները մտան բնականոնացման հունի մը մէջ: Նորընտիր նախագահը հրապարակային ելոյթներու ընթացքին զարմանք

կրյայտնէր, թէ ինչպէս կարելի է հայութեան մէկ ստուար զանգուածը հեռու պահել Հայաստանի տնտեսական և ընդհանրապէս

պետականաշինութեան գործընթացներէն: Սկսաւ Հայաստան-Սփիւռք «մամութային» խորհրդաժողովներու կազմակերպումը Արտաքին գործոց նախարարութեան կողմէ: Հակառակ այն իրողութեան, որ բազմամարդ ու մեծածախս այս համահայկական հանդիպումներէն գործնական զգալի արդիւնք երբեք չստացուեցաւ, բայց և այնպէս անոնք ժամանակի ընթացքին աշխարհացրիւ հայկական բեկորներու միջև շաղկապի դեր խաղացին:

Աւելի ևս շեշտելով սփիւռքեան օրակարգերու

կարևորութիւնը, քաղաքական իրապաշտ մօտեցումներ որդեգրելով՝ Ռ.Քոչարեան արտաքին քաղաքականութեան առաջնահերթութիւն վայելող խնդիրներէն մէկը վերածեց Հայոց ցեղասպանութեան միջազգային ճանաչման հետապնդումը՝ զայն նկատելով երկրի անվտանգութեան համար իբրև լուրջ առաւելութիւն. Միջազգային ատեաններու առջև պետական բարձրագոյն ներկայացուցիչներու բերնէն հնչեցին Հայոց ցեղասպանութիւնը ճանչնալու կոչեր:

Մինչև այդ սոյն օրակարգը սփիւռքեան կազմակերպութիւններու մենաշնորհը կը կազմէր Խորհրդային Միութեան գոյութեան ամբողջ տևողութեան և անկախ Հայաստանի առաջին նախագահի գահակալութեան ընթացքին. Վերջինիս արհամարհած «նարինջ ուտողներ»ն ու «հայդատականներ»ը մէկ օրէն միւսը վերածուեցան պետական արտաքին քաղաքականութեան կարևոր օղակի: ՀՅԴ Հայ դատի յանձնախումբերու անդամներ դարձան Արտաքին գործոց նախարարութեան առաջնակարգ խորհրդատուներ: Ցեղասպանութիւնը ճանչցող խորհրդարաններու թիւը աննախընթաց աճ արձանագրեց:

Որդեգրուած քաղաքական այս ուղղութիւնը նաև Դաշնակցութեանը եղած էր անկախութեան յայտարարութենէն ի վեր: Պատճառ չկայ չհաւատալու, որ պետական քաղաքականութեան այս փոփոխութիւնը կրկրէ անոր՝ Դաշնակցութեան ազդեցութիւնը: Արդարև, իշխանափոխութեան առաջին օրերուն արդէն դաշնակցական բանտարկեալները ազատ արձակուեցան և անմիջապէս մտան գործօն քաղաքականութեան դաշտ: Դաշնակցութիւնը պաշտօնապէս չմասնակցեցաւ առաջին կառավարութեան կազմին, բայց դաշնակցականներ անհատապէս ստանձնեցին կառավարական պաշտօններ:

Երկիրը արագ բռնեց տնտեսական զարգացման ուղին, յատկապէս՝ շինարարական մարզը քաջալերելով: Նախագահ Քոչարեան ձեռնարկեց սփիւռքեան շրջապտոյտի մը՝ հանդիպելով սփիւռքահայ գործարար շրջանակներու հետ: Անոնցմէ ոմանք և ուրիշներ ծաւալուն կերպով մասնակցեցան Երևանի բարեզարդումին. կարևոր է անոնց ներդրումը մայրաքաղաքի Հիւսիսային պողոտայի, ինչպէս նաև Կասկադի շրջանի շինարարութեան մէջ: Ամերիկահայ գործարար Քըրք Գրիգորեանի Լինսի հիմնարկի գործօն նուիրատուութեամբ հիմնովին նորոգուեցաւ Երևանի և ընդհանրապէս երկրի գլխաւոր ճանապարհներու ցանցը: Նշելի է, որ Հայաստանի նորագոյն պետութեան երեսնամեայ կեանքին մէջ այս ժամանակաշրջանին ատենուայ մը համար կանգ առաւ արտագաղթը. Շատ կարճ ատեն երկրի բնակչութիւնը թեթև աճ արձանագրեց ներգաղթով:

Իր լուսաւոր կողմերու կողքին՝ Ռ.Քոչարեանի նախագահութիւնը ունեցաւ նաև իր ստուերոտ օրերը: Իր օրով տեղի ունեցաւ մարդկային քաղաքական նորագոյն պատմութեան մէջ իր նախընթացը չունեցող ահաւոր ոճիր մը. Հայաստանի Ազգային ժողովի ժողովասրահին մէջ, երբ խորհրդարան ու կառավարութիւն միացեալ նիստի մէջ էին, ահաբեկչական գործողութեան մը զոհ գացին խորհրդարանի և կառավարութեան բազմաթիւ անդամներ, որոնց կարգին Ազգային ժողովի նախագահ Կարէն Տէմիրճեան և վարչապետ ու պաշտպանութեան նախկին նախարար Վազգէն Սարգսեան: Այս ոճիրը, բնական է, ցնցեց հանրապետութիւնն ու համայն հայութիւնը. Անոր անմիջական հեղինակները ձերբակալուեցան և ցայսօր կը գտնուին կալանքի տակ, սակայն ոճիրին դրդապատճառներու բացայայտումը, կ'երևի, ապագայի պատմաբանի մը պարտականութիւնը պէտք է սեպել:

Հանրապետութիւնն ու հայութիւնը ցնցող երևոյթ էին նաև Ռ.Քոչարեանի իշխանութեան վերջալոյսին՝ 2008ի մարտ 1-2 գիշերը պատահած դէպքերը, որոնց ընթացքին իրենց կեանքը կորսնցուցին տասնեակ մը քաղաքացիներ՝ ցուցարար ու ոստիկան: Ատենին դատարանը դէպքերու պատասխանատու նկատեց ցուցարարներու ղեկավարութիւնը, այսինքն՝ նախկին նախագահ Լևոն Տէր-Պետրոսեանի շուրջ հաւաքուած խումբը: Ներկայիս հարցը կը վերարծարծուի, ակնյայտօրէն որովհետև այդ ժամանակ դէպքերու թաւալգլոր մագլցումին հիմնական պատասխանատուներէն մէկը նկատուած էր ներկայ վարչապետ Նիկոլ Փաշինեանը: Ան մեր օրերուն կը փորձէ ամէն միջոցով երկրի արդարադատական մարզը ամբողջութեամբ առնել իր հակակշռին տակ:

Իշխանափոխութենէն ետք Դաշնակցութիւնը առաջարկ ներկայացուցած էր կառավարական նախորդ խումբին քաղաքական գնահատականը կատարելու և պարտն ու պատշաճը տնօրինելու: Նախագահ Քոչարեան մերժած էր՝առարկելով, որ հասարակութենէն ներս հարկ է ստեղծել հաշտութեան գոյավիճակ, և հայեացքները անցեալի վրայ սևեռելու փոխարէն պէտք է նայիլ ապագային: Պէտք է ըսել, որ ատիկա՛ էր արդէն Դաշնակցութեան վարքագիծը երկրէն ներս, այսինքն՝ քաղաքական հակադրութիւնները պահել հանդուրժելի սահմաններէ ներս. Այդ պահանջը կու գար արդիական պետութիւն մը յառաջացնելու ոչ միայն Դաշնակցութեան տեսլականէն, այլ նաև երկրի աշխարհաքաղաքական վիճակէն: Սեղմուած թուրանական նկրտումներ ունեցող արևմտեան և արևելեան դրացիներու միջև՝ հայրենիքի մէջ համախմբուած հայութիւնը չի կրնար բնականոն որևէ երկրի հասարակութեան մը օրինակով մերթ ընդ մերթ ապրիլ նորանկախ որևէ պետութիւն յատկանշող ծայրահեղ լարուածութեան քաղաքական մթնոլորտի մէջ: ՀՅԴ-ն Հայաստանէն ներս միշտ հետամուտ եղաւ Հայաստանի քաղաքական հոսանքներու միջև քաղաքական յարաբերութիւններու փոխադարձ յարգանքի վրայ հիմնուած իւրայատուկ մշակոյթ մը զարգացնելու վարքագծին՝ հեռու տարածաշրջանէն ներս կոշտ տեսակի հակադրութիւններու ընկալեալ պատկերէն: Ամէն առիթով ՀՅ Դաշնակցութիւնը ինքզինքին պարտականութիւնը տուաւ ելեկտրականացած կացութիւն մը լիցքազերծելու. Բացայայտօրէն կամ հասարակութենէն աննկատ: Միշտ չէ, որ Դաշնակցութեան ճիգերը արդիւնաւորուեցան: Այդպէս պատահեցաւ 2008ի մարտին, երբ, հակառակ դաշնակցական մարմիններու յորդորներուն և ճիգերուն, անխուսափելի դարձաւ իշխանութեան և ընդդիմութեան միջև բախումը Երևանի փողոցներուն մէջ:

Սակայն հանրութիւնը տեղեակ է նաև այն պայթիւնավտանգ վիճակէն, որ գոյութիւն ունէր 2004ի ապրիլին, երբ իշխանութիւն և ընդդիմութիւն կանգնած էին նախագահական պալատին դիմաց՝կազմ ու պատրաստ զիրար բզկտելու: Հանրութիւնը, սակայն, տեղեակ չէ, որ այդ օրերուն պայթելու պատրաստ ականը վնասազերծեցին դաշնակցական պատասխանատուները՝ երկու կողմերուն մօտ իրենց ազդու միջնորդութեամբ: ■

Պէյրութ, 12 մարտ 2020



Ռուս-թուրքական «Եղբայրության և բարեկամության» պայմանագիրը

Անի Մելքոնյան

Վերջին տարիներին արխիվների և առկա փաստերի ու փաստաթղթերի ազատ ուսումնասիրությունը և դրանք շրջանառության մեջ դնելու հնարավորությունը բացահայտում են մի շարք նոր իրողություններ, երբ հայ ժողովրդի թիկունքում իրականացվել են մեզ համար բախտորոշ ու կործանարար գործարքներ: Պատմությանը հայտնի Լենին-Աթաթուրք դավադիր գործարքի նոր մանրամասներ է ի հայտ բերել Հայաստանի արխիվների, ինչպես և «Документы внешнейполитики ЭССР» (Москва, 1959-1960)(«ՍՍՀՄ արտաքին քաղաքականության փաստաթղթեր», (Մոսկվա, 1959-1960) փաստաթղթերի ժողովածուի ուսումնասիրությունը:

Մասնավորապես ակնհայտ է դարձել, որ դեռևս Մոսկվայի 1921 թ. ռուս-թուրքական բանակցությունների նախօրյակին խորհրդայնացած Հայաստանի բոլշևիկյան հեղկոմի արտաքին գործերի ժողովրդական կոմիսար Ալեքսանդր Բեկզադյանը մեկնել է Մոսկվա՝ իր հետ տանելով հայ-թուրքական հակամարտության լուծման և ապագա սահմանների վերաբերյալ առաջարկների երեք տարբերակ: Այդ տարբերակներից մեկի համաձայն՝ սահմանը պետք է անցներ Կարսի պարիսպների տակով, Հայաստանի սահմաններում պետք է մնային որոշ տարածքներ Արդահանից, Սուրմալուն և այլն: Հայկական պատվիրակությանը, սակայն, նույնիսկ թույլ չեն տվել մասնակցել կամ տեղյակ լինել հայության ճակատագիրը որոշող բանակցություններին: Այս առթիվ Բեկզադյանը գրավոր բողոք է ներկայացրել Ռուսաստանի արտաքին գործերի ժողովրդական կոմիսար Չիչերինին՝ շեշտելով, որ կնքվել է հայ ժողովրդի ազգային- պետական շահերը ոտնահարող պայմանագիր:

Նորահայտ փաստաթղթերի համաձայն՝ խնդրո առարկա պայմանագիրը ռուս-թուրքական շահերի շուրջ տեղի ունեցող «առևտրի» պատճառով իրականում կնքվել է ոչ թե մարտի 16-ին, այլ 18-ին: Մասնավորապես թուրքերը պահանջել են նաև, որ ռուսական կողմը տարեկան վճարի իրենց 10 մլն ռուբլի՝ ոսկով: Ռուսների զիջողականության դիմաց թուրքական կողմն իր պահանջների հարցում այնքան լկտի է գտնվել, որ, առաջադրելով «Ազգային ուխտի» համաձայն սահմանները գծել ըստ 1877-1878 թթ. պատերազմից առաջ եղած սահմանների, պահանջել է դրանում ներառել նաև Իգդիրն ու Սուրմալուն, այն դեպքում, երբ դրանք չեն մտել այդ սահմանների մեջ: Դրանք թուրքական սահմաններում չեն եղել նաև Բրեստի պայմանագրով: Բայց ռուսները ստորաբար համաձայնել են այստեղ էլ զիջել թուրքերին, մանավանդ որ զիջումը եղել է Հայաստանի հաշվին:

Նույն 1921 թ. մարտի 16-ին Ռուսաստանի և Անգլիայի միջև կնքվել է տնտեսական համաձայնագիր: Բանակցությունների ընթացքում անգլիացիները պահանջել են ռուսներից, որ որպես փոխհատուցում որոշ հողային զիջումներ արվեն Հայաստանին: Գեորգի Չիչերինը Լոնդոնում Ռուսաստանի դեսպանին հրահանգում է փոխանցել անգլիացիներին, որ չեն կարող այլևս թուրքերի առջև նման պայման դնել, քանի որ երկու երկրների միջև մարտի 16-ին պայմանագիրն արդեն կնքվել է: Իրականում ռուսները ձգձգել են պայմանագրի կնքումը՝ սպասելով անգլիացիների արձագանքին և այն մարտի 16-ի հետին ամսաթվով կնքել են մարտի 18-ին: Ներկայացվող հոդվածում որպես պայմանագրի կնքման օր է ներկայացվում պատմագրության մեջ ցայսօր շրջանառվող մարտի 16-ը:

«Այդ ժամանակ՝ 1921 թ. մարտի 16-ին, բոլշևիկները պայմանագիր կնքեցին Քեմալի հետ, որով Թուրքիային հանձնեցին Հայաստանի Հանրապետության մի մասը, երկու այլ մասեր տվեցին Ադրբեջանին, և մնացորդի վրա փակցրին «Սովետական Հայաստան» պիտակն ու բռնակցեցին Ռուսաստանին»:

Ջեյմս Ջերարդ՝ ԱՄՆ դեսպանը Գերմանիայում (1913-17 թթ.)

Կնքվում է 1921թ. Ռուս-թուրքական պայմանագիրը:

Ռուսաստանի նախագահ Մեդվեդևը Թուրքիայի նախագահ Էրդողանին է նվիրում 1921թ. պայմանագրի կնքման բանակցություններից լուսանկար:

Մարտի 16-ին լրանում է 1921 թ. ռուս-թուրքական «եղբայրության և բարեկամության» պայմանագրի կնքման 99-րդ տարելիցը, այո՛, տարելիցը, որովհետև այդ պայմանագիրը գոնե հայերիս համար ողբերգական նշանակություն ունեցավ, քանի որ Հայաստանը, ըստ էության, կորցրեց բոլոր այն տարածքները, որոնք պահել էր մեծ դժվարությամբ, բայց որոնց գոյությունը Հայաստանի համար զարգացման լավ հեռանկարներ էր բացում:

Այսպես, 1921 թ. մարտի 16-ին Ռուսաստանը և Թուրքիան, առանց Հայաստանի գիտության ու մասնակցության, Մոսկվայում կնքեցին մի պայմանագիր, որի ծանր հետևանքները Հայաստանի համար մինչ օրս էլ զգացնել են տալիս. Մոսկվայի պայմանագրով Ռուսաստանը ճանաչեց Թուրքիայի տարածքային ձեռքբերումները Հայաստանի հաշվին՝ «Ազգային ուխտի» սահմաններով:

Պայմանագրի 1-ին հոդվածով սահմանվում է. «Կողմերից յուրաքանչյուրը սկզբունքորեն համաձայն է չճանաչել ոչ մի հաշտության պայմանագիր կամ միջազգային որևէ այլ ակտ, եթե կողմերից մեկին ուժով հարկադրեն ընդունել: Ռուսաստանի կառավարությունը համաձայն է չճանաչել Թուրքիային վերաբերող և այսօր Թուրքիայի Ազգային մեծ ժողովը ներկայացնող նրա ազգային կառավարության չճանաչած որևէ միջազգային ակտ[1]: Այս հատվածը վերաբերում է Սևրի պայմանագրին և դրանից բխող ԱՄՆ նախագահ Վուդրո Վիլսոնի «իրավարար» վճռին (որի 100-ամյակն ենք նշելու 2020 թ. նոյեմբերի 22-ին), ուստի պատահական չէր պայմանագիրը կնքող ուժերի կողմից Սևրի պայմանագրի չեղարկումը, ասել է թե Հայաստանն առանց իր գիտության և ցանկության զրկվեց միջազգայնորեն ճանաչված ՀՀ տարածքների նկատմամբ իր օրինական իրավունքներից, ժամանակակից եզրութաբանությամբ ասած՝ խախտվեց Հայաստանի տարածքային ամբողջականությունը: Ըստ պայամանագրի նույն հոդվածի՝ «Թուրքիայի հյուսիսարևելյան սահմանը որոշվում է այն գծով, որն սկսելով Սև ծովի ափին գտնվող Սարպ գյուղից՝ անցնում է Խեդիսմթա սարի վրայով, առաջանում Շավշետ սարի և Կաննիդաղի ջրբաժան գծի ուղղությամբ, այնուհետև՝ անցնում Արդահանի ու Կարսի սանջակների հյուսիսային վարչական սահմանագծի երկարությամբ՝ Արփաչայ և Արաքս գետերի հնահունով՝ մինչև Ստորին Կարասուի գետաբերանը»[2]: Սա նշանակում է, որ Թուրքիային էին անցնում ոչ միայն ամբողջ Կարսի մարզը, այլև Սուրմալուի գավառը, որը երբեք չէր եղել Թուրքիայի կազմում:

Թուրքիան, սակայն, չբավարարվեց իր բաժինը ստանալով և պահանջեց, որ Նախիջևանի մարզը չմնա Հայաստանի տարածքում, այլ դրվի Ադրբեջանի հովանավորության տակ: Մոսկվայի պայմանագրի 3-րդ հոդվածով սահմանվում էր, որ Նախիջևանի մարզը պետք է որպես ինքնավար տարածք դրվի Ադրբեջանի «խնամակալության» ներքո՝ պայմանով, որ Ադրբեջանը սույն խնամակալությունը չի զիջի երրորդ պետության, իսկ այդ «երրորդ պետությունը» Հայաստանն էր: Նման պահանջը պայմանավորված էր Թուրքիայի՝ առ այսօր շարունակվող պանթուրքիստական նկրտումներով. պանթուրքիզմի նպատակը «Մեծ Թուրանի» ստեղծումն է, որի ճանապարհին որպես սեպ խրված է Հայաստանը: Նախիջևանի Հայաստանապատկան չլինելն ապահովում է Թուրքիայի կապն Ադրբեջանի հետ, և կարելի է ասել, որ Մոսկվայի և Կարսի պայմանագրերով Թուրքիան իրականություն կդարձներ իր պանթուրքիստական ծրագրի սկզբնական մասը, մանավանդ որ կարճ ժամանակ անց մի անօրինական որոշմամբ Ադրբեջանին միացվեց նաև հայկական Արցախը: Մնում էր Զանգեզուրը, որի՝ Ադրբեջանին միացվելու դեպքում էլ պանթուրքիզմի առաջին մասը կարելի կլիներ հաջողված համարել, բայց Զանգեզուրի պաշտպանները Նժդեհի գլխավորությամբ, կարող ենք ասել, որ խառնեցին պանթուրքիստների ծրագրերը՝ հերոսական պայքար մղելով այնքան, որ ի վերջո խորհրդային կառավարությունը տեղի տվեց, և Զանգեզուրը մնաց Հայաստանի կազմում: Այդպիսով Հայաստանը փրկվեց լիակատար օղակումից ու աստիճանական ոչնչացումից: Պանթուրքիզմի շղթայից մեկ կարևոր օղակ ևս կտրվեց 1990-ականներին, երբ հայ ժողովուրդն ազատագրեց Արցախը:

Մոսկվայի պայմանագրի 6-րդ հոդվածով կողմերը չեղարկում են մինչ այդ կնքված ռուս-թուրքական բոլոր պայմանագրերը, այսինքն՝ պատերազմում պարտված Թուրքիան ազատվում է բոլոր տեսակի պարտավորություններից:

Ռուս-թուրքական «եղբայրության և բարեկամության» այս անօրինական պայմանագրում մեզ հետաքրքրող հոդվածներից է 8-րդ հոդվածը, համաձայն որի՝ «Կողմերը պարտավորվում են արգելել իրենց տարածքներում այնպիսի կազմակերպությունների և խմբերի առաջացումն ու գոյությունը, որոնք ունեն մյուս երկրի կամ նրա տարածքի մի մասի կառավարության դերն ստանձնելու հավակնություն, ինչպես նաև այնպիսի խմբերի գոյությունը, որոնց նպատակն է պայքարը մյուս երկրի դեմ: Ռուսաստանն ու Թուրքիան փոխադարձության պայմանով ստանձնում են նույնպիսի պարտավորություն նաև Կովկասի խորհրդային հանրապետությունների հանդեպ: Որպես սույն հոդվածում հիշատակված

թուրքական տարածք հասկացվում է Թուրքիայի Ազգային մեծ ժողովի կառավարության զինվորական և քաղաքացիական անմիջական կառավարման ներքո գտնվող տարածքը»[3]: Պայմանագրի այս կետը, կարելի է ասել, ուղղվածէր նաև Դաշնակցության դեմ, որը Հայաստանի տարածքային ամբողջականության պահպանման կողմնակիցն էր և միջազգային ասպարեզում հասել էր Հայաստանի տարածքների նկատմամբ հայ ժողովրդի օրինական իրավունքների ամրագրմանը:

Պայմանագրով Ռուսաստանը պարտավորվում էր «....Անդրկովկասյան հանրապետությունների նկատմամբ ձեռնարկել քայլեր, որպեսզի Թուրքիայի հետ կնքվող պայմանագրերում անպատճառ ճանաչվեն սույն պայմանագրի այն հոդվածները, որոնք անմիջականորեն վերաբերում են իրենց»[4]: Այս պարտավորության արգասիքն էլ Կարսի պայմանագիրն էր, որն այլ ստորագրություններով կրկնում էր Մոսկվայի պայմանագիրը:

Այսպիսով, 1921 թ. բոլշևիկա-քեմալական Մոսկվայի ու դրան հաջորդած Կարսի պայմանագրերով գծվեց ներկայիս հայ-թուրքական սահմանը, իսկ Նախիջևանը, որը ցամաքային Ադրբեջանի հետ ուղղակի կապ չուներ, «ինքնավար մարզի» կարգավիճակով կցվեց Ադրբեջանին:

Հատկանշական է, որ ամեն գնով Նախիջևանի հետ սահման ունենալու ձգտող Քեմալը, ըստ թուրքական «haberler.com» կայքի մարտի հրապարակման, 1934 թ. գնել է Թուրքիայի և Նախիջևանի միջև ներկայումս գտնվող սահմանային փոքր տարածքը[5]:

Մոսկվայի պայմանագրով ձեռք գցելով Նախիջևանը՝ Ադրբեջանը սկսեց վարել այն հայաթափելու քաղաքականություն, իսկ Թուրքիան գնալով ամրապնդում է իր դիրքերն այնտեղ՝ այն դարձնելով սպառնալիք Հայաստանի Հանրապետության համար:

Մոսկվայի քեմալա-բոլշևիկյան պայմանագիրը միջազգային իրավունքի տեսանկյունից

Որպեսզի կնքված պայմանագիրը համարվի օրինական, անհրաժեշտ է, որ այն ստորագրած պատվիրակությունը լինի օրինական, այսինքն՝ ներկայացնի միջազգայնորեն ճանաչված օրինական կառավարությանը: Այստեղ է, որ ծառանում է այն հարցադրումը, թե օրինակմն էին արդյոք Մոսկվայի պայմանագիրը կնքած խորհրդային և քեմալական կառավարությունները: Ցանկացած միջազգային պայմանագրի օրինականության համար միջազգային իրավունքն ունի հստակ պահանջներ, ինչպես, օրինակ, որևէ պայմանագիր կարող է համարվել օրինական, եթե այն ստորագրվել է ճանաչված պետության օրինական իշխանության լիազոր ներկայացուցիչների կողմից: Պայմանագիրը ստորագրած պետություններից ոչ ՌԽՖՍՀ-ն, ոչ էլ քեմալական կառավարությունը միջազգայնորեն ճանաչված չէին, ՌԽՖՍՀ-ն արդեն որպես ԽՍՀՄ ճանաչվեց միայն 1924 թ. փետրվարի 1-ին Մեծ Բրիտանիայի կողմից, որով էլ սկիզբ դրվեց ԽՍՀՄ-ի միջազգային ճանաչմանը: Ինչ վերաբերում է Թուրքիային, ապա մինչև 1922 թ. նոյեմբերը՝ սուլթան Մեհմեդ 6-րդի կողմից Թուրքիան լքելը, սուլթանի կառավարությանն էր վերապահված Թուրքիայի անունից միջազգային հարաբերությունների մեջ մտնելու իրավունքը, և, ըստ Օսմանյան կայսրության Սահմանադրության 7-րդ հոդվածի, միայն սուլթանը կարող էր լիազորել որևէ անձի հանդես գալու երկրի անունից[6]:

Ինչպես արդեն նշել ենք, Մոսկվայի ռուս-թուրքական պայմանագիրը կնքվեց առանց Հայաստանի գիտության ու մասնակցության, ավելին՝ պայմանագրի կնքման պահից մոտ մեկ ամիս առաջ 1921 թ. փետրվարի 19-ի ապստամբությամբ ՀՀ օրինական իշխանության կողմից ստեղծված «Հայրենիքի փրկության կոմիտե»-ն հայտարարել էր, որ բոլշևիկյան իշխանությունը Հայաստանում վերացված է, ինչը նշանակում է՝ մարտի 16-ին երկու չճանաչված պետություններ վճռում էին երրորդ պետության ճակատագիրը՝ առանց նրա օրինական կառավարության մասնակցության:

Միջազգային իրավունքի տեսանկյունից Մոսկվայի պայմանագիրն անօրինական և անվավեր է, որովհետև.

ա) պայմանագրի ստորագրման պահին պատվիրակություններից և ոչ մեկը լիազորված չէր հանդես գալու իր երկրի անունից. ռուսական (բոլշևիկյան) և թուրքական (քեմալական) պատվիրակությունները դեռևս չէին ներկայացնում իրենց երկրների իշխանությունները:

բ) պայմանագիրն ստորագրվել է միջազգային իրավունքի՝ դարեր ի վեր գործող պարտադիր և անբեկանելի մի քանի դրույթների խախտումով:

Ըստ «Միջազգային պայմանագրի իրավունքի մասին» Վիեննայի կոնվենցիայի 34-րդ հոդվածի՝ պայմանագիրը երրորդ պետության համար, առանց նրա համաձայնության, պարտավորություններ կամ իրավունքներ չի ստեղծում[7]: Իսկ ինչպես գիտենք, Հայաստանի՝ այդ օրերի օրինական կառավարությունն իր գրավոր համաձայնությունը չի տվել Մոսկվայի պայմանագրի՝ Հայաստանին վերաբերող կետերին: Կարող ենք ասել, որ Մոսկվայի պայմանագրի՝ Հայաստանին վերաբերող կետերն առոչինչ են, քանի որ այդ պայմանագիրը կնքվել է միջազգային պայմանագրի կնքման համար նախատեսված պարտադիր դրույթների խախտումով. ըստ Վիեննայի կոնվենցիայի 53-րդ

հոդվածի՝ պայմանագիրն առոչինչ է, եթե կնքման պահին հակասում է ընդհանուր միջազգային իրավունքի պարտադիր նորմին[8]:

Չեղարկման խնդիրը

Մոսկվայի մատի 16-ի պայմանագրի չեղարկման խնդիրը կարող են դնել՝

ա) Ռուսաստանը,

բ) Թուրքիան,

գ) Հայաստանի Հանրապետությունը, որը, պայմանագրի կողմ չհանդիսանալով, կարող է հանդես գալ որպես Հայաստանի առաջին հանրապետության իրավահաջորդ և պահանջել, որ առանց իր համաձայնության տվյալ պայմանագրում ՀՀ-ի վերաբերյալ ամրագրված կետերը ճանաչվեն առոչինչ:

Մոսկվայի պայմանագրի չեղարկումը կհանգեցնի նաև կնքման պահից իսկ անվավեր այդ պայմանագրից բխող Կարսի պայմանագրի չեղարկմանը:

Խնդիրը, սակայն, զուտ իրավական չէ, այլ նաև քաղաքական է և կապված է շահագրգիռ կամ ոչ շահագրգիռ պետությունների վարած քաղաքականության հետ, որոնք ուղղակիորեն կամ անուղղակիորեն առնչվում են այդ պայմանագրին:

Բայց այն, որ մարտի 16-ի անօրինական պայմանագրի չեղարկումը գնալով օրախնդիր է դառնում պանթուրքիզմի օղակում հայտնված Հայաստանի համար, արդեն իսկ պարզ է դառնում Մերձավոր Արևելքում ծավալվող իրադարձություններից և Նախիջևանում ամրապնդվելու Թուրքիայի շարունակական քայլերից: Սակայն մինչև Մոսկվայի պայմանագրի չեղարկման հարցն օրակարգ ներառելը Հայաստանի Հանրապետությունն իրավական ճանապարհով կարող է հասնել նրան, ինչին հասավ Թուրքիան Բաթումի նկատմամբ՝ նույն Մոսկվայի պայմանագրի 2-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն, որով սահմանվում էր, որ Թուրքիային կտրվի Բաթում նավահանգստի վրայով Թուրքիա ներմուծվող և այնտեղից արտահանվող ամեն տեսակ ապրանքների՝ առանց տուրքի, ազատ տեղափոխման իրավունք, և խափանումներ տեղի չեն ունենա: Թուրքիան կստանա Բաթում նավահանգստից օգտվելու իրավունք, որի համար չեն գանձվի հատուկ տուրքեր[9]:

Այսինքն՝ ՀՀ-ն կարող է փորձել մինչև Մոսկվայի պայմանագրի չեղարկման հարցը բարձրացնելը Առաջին հանրապետության իրավահաջորդի իրավունքով ազատ «տնտեսական» տեղաշարժի իրավունք ստանալ Սևրի պայմանագրով և Վիլսոնյան «իրավարար» վճռով ՀՀ մաս ճանաչված տարածքներում: Թե որքանով իրատեսական կլինի այդ քայլը, կտեսնենք այն ժամանակ, երբ կստեղծվի արհեստավարժ մասնագետների՝ իրավաբանների, պատմաբանների և քաղաքագետների հանձնախումբ, որոնցից յուրաքանչյուրը պետք է ուսումնասիրի խնդիրն իր ոլորտի պահանջներին համապատասխան:

Առհասարակ միջազգային ասպարեզում Հայաստանի՝ Թուրքիայի կողմից օկուպացված տարածքների նկատմամբ ՀՀ իրավունքների վերականգնումը հատկապես քաղաքական առումով չափազանց դժվար գործ է, բայց Հայաստանը, իր իսկ անվտանգությունից ելնելով, պետք է փորձի լուծել այդ խնդիրը, քանզի այն միայն պատմական արդարության հարց չէ, այլ նաև անվտանգության որոշակի երաշխիք թուրք-ադրբեջանական պանթուրքիստական նկրտումների օղակում սեղմված Հայաստանի համար, որի համար անվտանգության խնդիր է ոչ միայն ազատագրված Արցախի ամրապնդումը, այլև թուրքական թիրախում հայտնված Զավախքի հայապահպանությունն ու Նախիջևանի, ինչպես նաև Մոսկվայի պայմանագրով ՀՀ-ից խլված տարածքների կարգավիճակի հարցի լուծումը, իսկ տնտեսական անվտանգության տեսանկյունից կարևոր քայլ կլինի, այսպես կոչված, արտատարածքային (exterritorial) իրավունքի ձեռքբերումն իր օրինական՝ միջազգայնորեն ճանաչված, բայց դեռևս Թուրքիայի կողմից օկուպացված տարածքների, այդ թվում՝ նաև դեպի Սև ծով ելք ապահովող Տրապիզոնի նկատմամբ:

Այս ամենն այս պահին կարող է ժամանակավրեպ կամ ոչ իրատեսական թվալ, բայց արդեն Մոսկվայի պայմանագրի մեկ դարն է լրանում, իսկ պատմությունը կրկնվելու հատկություն ունի, և պետք է գոնե որևէ քայլ կատարել ՀՀ իրավունքների վերականգնման ուղղությամբ, այլապես մեր տարածաշրջանում իրադարձությունների նման զարգացման դեպքում մենք կարող ենք նորից ձեռնունայն մնալ, իսկ երկրորդ հնարավորություն գուցե այլևս չենք ունենա:

Օգտագործված Աղբյուրներ

1- Նախիջևանը՝ Ադրբեջանին, Կարսը՝ Թուրքիային. Մարտ 16, 1921, https://www.aniarc.am/2019/03/16/march-16-1921-russo-turkish-treaty/:

2- Նույն տեղում

3- Նույն տեղում

4- Նույն տեղում

5- Տես Ա. Մելքոնյան, Նախիջևանը պանթուրքական գաղափարախոսության համատեքստում, «Դրոշակ», Եր., հունվար 2020, թիվ 1 (1635), էջ 15:

6- Տես Chen T.-C., The International Law of Recognition, London, 1951, էջ 138:

7- Տես ՄԱԿ-ի կոնվենցիա միջազգային պայմանագրերի իրավունքի մասին, Վիեննա, 1969:

8- Տես նույն տեղում:

9- Տես Նախիջևանը՝ Ադրբեջանին, Կարսը՝ Թուրքիային. Մարտ 16,1921, https://www.aniarc.am/2019/03/16/march-16-1921-russo-turkish-treaty/:

Ազգային վրեժի արդարահատույցը

Սողոմոն Թեհլիրյան

99 տարի առաջ Սողոմոն Թեհլիրյանը և իր գաղափարակից ընկերները գործով ապացուցեցին, որ հայ ժողովրդին անհնար է բնաջնջել կամ ստիպել ապրելու գլուխը կախ և նվաստացած: Սողոմոն Թեհլիրյանը դարձավ օրինակ այն բանի, որ հնարավոր է անձնական վիշտը համազգային վշտին գումարելով ստանձնել ազգային վրիժառուի պարտականությունը և ցեղասպան թուրքին պարտադրել չոմռանալու, որ հատուցումը անխուսափելի է, պահանջատիրական պայքարը անընդհատ՝ մինչև վախճանական հաղթանակ:

Կ.Պոլսում հրատարակվող և բարձր վարկանիշ ունեցած «Ճակատամարտ», «Ժողովուրդի ձայնը» և «Վերջին լուր» օրաթերթերը 1921 թվականի իրենց համարներում անդրադարձան Սողոմոն Թեհլիրյանի կողմից Բեռլին քաղաքում, նույն թվականի մարտի 15-ին, ցեղասպանության գլխավոր պատասխանատուներից մեկի՝ Երիտթուրքական կառավարության ներքին գործոց նախարար Թալեաթ փաշայինի ահաբեկմանը:

«Թալէաթ փաշա երկու տարիէ ի վեր իր կնոջը հետ Պերլինի մէջ կը բնակէր Ալի պէյ անունով: Իր սպաննիչը հայ ուսանող մըն է՝ Սողոմոն Թէյլիրեան անունով: Ան համառօտակի հարցաքննուելով՝ յայտարարեց. «Թալէաթ փաշան սպաննեցի՝ վրէժը առնելու համար իմ ծնողքիս, որ սպաննուեցան իր հրամանովը: Երկու տարիէ ի վեր կը հետապնդէի Թալէաթ փաշան և յունուարին Պերլին եկած էի զայն սպաննելու վճռական դիտաւորութեամբ»: Այսպէս վերջ գտաւ Իթթիհատի ամէնէն նշանակելի պետերէն մէկուն ասպարէզը: Թալէաթի անունը կը գտնուէր Համաձայնութեան կողմէ պահանջուած պատերազմի ոճրագործներուն ցանկին մէջ»:

«Ճակատամարտ», թիվ 708

«Ան, որ հազարաւոր անմեղներու արիւնը թափելով չէր յափրացած և իր թաքստոցին մէջ նորանոր դժոխային ծրագիրներ յղանալու ետևէ էր, ինկաւ վրիժառու Հայ գնդակին տակ: Ամբողջ աշխարհը սահմոկեցնող և ժողովուրդները սարսեցնող ոճիրը անպատիժ չմնաց: Թալէաթ ոչ ևս է: Շատ լաւ կը ճանչնամ պ. Սողոմոն Թէհլիրեանը: Զինքը առաջին անգամ Բարիզ ճանչցայ, ուր ուսանելու եկած էր ինձ նման: Հաստատուն կամքի և հրաշալի բնաւորութեան մը տէր ըլլալով՝ շուտով կրցաւ շահիլ ամենուս սիրտը: Մինչև վերջին վայրկեանը բան մը անգամ չթռաւ իր բերնէն իր ծրագիրներու մասին: Նա ուզեց, որ միայն իր ձեռքով կատարուի արդարութիւնը: Ան հասած է իր նպատակին: «Ես կատարեցի իմ պարտականութիւնը: Ինծի համար միևնոյնն է, եթէ նոյնիսկ ասկէ յետոյ գլուխս ալ կտրելու ըլլաք»,- ըսաւ ան վստահութեամբ զինքը հարցաքննող պաշտօնեային: Տեսայ զինքը երէկ: Իր դէմքին վրայ կը փայլէր գոհունակութեան և երջանկութեան դրոշմը: Գոհ էր, որովհետև իր սրտին մէջ տարիներու ընթացքին ուռճացած նուիրական գաղափարը վերջապէս իրականութիւն գտած էր: Երջանիկ էր, որովհետև իր ծնողաց, եղբայրներուն և քոյրերուն անգերեզման ոսկորները իրենց հանգիստը գտած էին»:

«Ժողովուրդի ձայնը», թիվ 755

«Ձարդերու և տարագրութեան հետևանքով Սոսոմոնի գրեթէ ամբողջ ընտանիքը՝ 80էն աւելի այր ու կին, բնաջինջ եղած են: Ազատած են միայն ինք, իր եղբայրը և եղբօր աղջիկը, որոնք Եւրոպա կը գտնուին: Ո՞վ պիտի կրնար խորհիլ, թէ այս մարդը, որուն ատելութեամբ լեցուն հոգիէն բղխած մէկ որոշումով հազարաւոր հայեր դէպի մահ կը դրկուէին, արդարօրէն վրէժխնդիր ձեռքի մը գնդակին տակ պիտի իյնար Պերլինի մէջ: Պոլսոյ իր տան մէջ քանիցս յայտարարած էր, թէ հայու մը ձեռքով պիտի մեռնէր»:

«Վերջին լուր», թիվ 2128

«Հիմա Թալէաթի բոլոր ոճրակից ընկերները, սիրտի ալ աւելի զօրաւոր բաբախումով մը, ամէն րոպէ ակամայ ետևնին կը դառնան՝ տեսնելու համար մօտենալը վերահաս Արդարութեան սուրին, որ մութին մէջ կը շողշողայ»:

«Վերջին լուր», թիվ 2132

Մամուլը կրկնելով հայ Վրիժառուի համար նախապես մշակված վարկածը, շեշտում է, թե տեղի ունեցածը ցեղասպանված գերդաստանի զավակի անձնական վրիժառության դրսևորում է: Այնինչ նույն ժամանակահատվածում աշխարհի տարբեր անկյուններում հնչող կրակոցները հաստատում էին ՀՅ Դաշնակցության 9-րդ Ընդհանուր ժողովի որոշած ծրագրի գործադրումը, որը, Հունական դիցաբանության Վրիժառու Աստվածուհու անունով անվանակոչված էր <Նեմեսիս>

Նյութը պատրաստեց Մարիամ Հովսեփյանը:

Քրիստափոր Միքայելյան *(1859 - 1905)*

Ազգային ազատագրության գաղափարի սերմնացանն ու առաջնորդը հայ քաղաքական իրականության մեջ: Հայ Յեղափոխական Դաշնակցության հիմնադիրը:

Պատրել է հարկաւոր քարտէնների վրայ այս կամ այն ավազակապետի կամքով գծուած սահմանները, ջնջել հարկաւոր է այն աշխարհագրական ներկերը , որոնք մեզ բաժանում են իրարից, և որոնք առհասարակ մշտական չեն, իսկ երբեմն շատ կարճատև են լինում: Ո՛չ մի բռնութիւն, ո՛չ մի հալածանք, ո՛չ մի սահման չէ՛ կարող բաժանել մի ժողովուրդ, եթէ նա, կոգորուած ընդհանուր շահերի գիտակցութեամբ, ունի նաև կուելու անսասան վճռականութիւն և կապուած, միացած է դարերով սնուած ու պահպանուած ընդհանուր բնազդների ու զգացումների առողջ զարկերակով:

«Կովկասահայի տագնապը»

Նահատակվել է 1905թ. մարտի 1-ին, Բուլղարիայի Սոֆիա քաղաքից ոչ հեռու գտնվող Վիտոշ լեռան լանջին, երբ գաղափարի հետևորդ Վռամշապուհ Քենդիրյանի հետ ինքնաշեն նռնակ էին փորձարկում՝ Սուլթան Աբդուլ Համիդի դեմ մահափորձ ձեռնարկելու համար:

Հայաստան աշխարհում
գարուն է ու կանանց տոն

ԴՐՕՇԱԿ